Ռիչարդ 3-րդ թագավորի ողբերգությունը

The tragedy of King Richard III

THE TRAGEDY OF KING RICHARD III

Ուիլյամ Շեքսպիրի

[1593]

Թարգմանությունը՝ Լիլիթ «Բաբա» Եազյանի [1978]

"So wise so young, they say do never live long"

DRAMATIS PERSONAE

EDWARD THE FOURTH, Sons to the King
EDWARD, PRINCE OF WALES afterwards KING EDWARD V
RICHARD, DUKE OF YORK, Brothers to the King
GEORGE, DUKE OF CLARENCE,
RICHARD, DUKE OF GLOUCESTER, afterwards KING RICHARD III
YOUNG SON OF CLARENCE (Edward, Earl of Warwick)
HENRY, EARL OF RICHMOND, afterwards KING HENRY VII
CARDINAL BOURCHIER, ARCHBISHOP OF CANTERBURY
THOMAS ROTHERHAM, ARCHBISHOP OF YORK
JOHN MORTON, BISHOP OF ELY
DUKE OF BUCKINGHAM
DUKE OF NORFOLK
EARL OF SURREY, his son
EARL RIVERS, brother to King Edward's Queen
MARQUIS OF DORSET and LORD GREY, her sons
EARL OF OXFORD
LORD HASTINGS
LORD LOVEL
LORD STANLEY, called also EARL OF DERBY
SIR THOMAS VAUGHAN
SIR RICHARD RATCLIFF
SIR WILLIAM CATESBY
SIR JAMES TYRREL
SIR JAMES BLOUNT
SIR WALTER HERBERT
SIR WILLIAM BRANDON
SIR ROBERT BRAKENBURY, Lieutenant of the Tower
CHRISTOPHER URSWICK, a priest
LORD MAYOR OF LONDON
SHERIFF OF WILTSHIRE
HASTINGS, a pursuivant
TRESSEL and BERKELEY, gentlemen attending on Lady Anne
ELIZABETH, Queen to King Edward IV
MARGARET, widow of King Henry VI
DUCHESS OF YORK, mother to King Edward IV
LADY ANNE, widow of Edward, Prince of Wales, son to King
YOUNG DAUGHTER OF CLARENCE (Margaret Plantagenet, Countess of Salisbury)
GHOSTS, of Richard's victims
Lords, Gentlemen, and Attendants; Priest, Scrivener, Page, Bishops, Aldermen, Citizens, Soldiers, Messengers, Murderers, Keeper

ACT I. SCENE I.

London. A street. Gloucester enters.

GLOUCESTER.

Մեր դժկամութեան ձմեռը այժմ Փառաւոր ամառ բերեց մեզ համար եորքեան արեւով, Եւ սեւ թխպերը, որ կախուած էին մեր երկրի վրայ, Ովկիանի խորը կրծքում թաղուեցին։ Մեր ճակատները զուգուած են հիմա դափնեպսակով. Մեր ասպազէնը կախուած է պատից իբրեւ յուշարձան։ Ռազմի փողերի ահեղ թնդիւնը տեղի է տուել զուարթ ծիծաղին, Եւ մեր սոսկալի զօրաշարժերը՝ ցնծագին պարի։ Գոռ պատերազմը ողորկել է իր կնճռոտ ճակատը։ Այժմ փոխանակ հեծնելու նժոյգն իր զինավառեալ, Ի սարսափ երկչոտ թշնամիների՝ Նա կաքաւում է սիրած բամբիշի մենասենեակում Վինի վաւաշոտ հնչիւնների տակ։ Իսկ ես, որ բնաւ ստեղծուած չեմ այդ սին խաղերի համար, Ոչ էլ տարփաւոր մի հայելու հետ սիրաբանելու, Ես, որ կոպիտ եմ իմ երեւոյթով Եւ անկարող եմ սիրոյ գերագոյն ոլորտների մէջ Ճախրել հեշտասէր յաւէրժահարսի ընթացքից առաջ, Ես, որ զրկուած եմ այս երանելի դաշնակութիւնից Եւ նենգ բնութեան կողմից խաթարուած, Տձեւ եմ, թերի եւ իմ ժամից վաղ Նետուած այս ցաւոտ աշխարհի վրայ՝ հազիւ կիսաշէն, Եւ այն աստիճան կաղ ու այլանձեւ, Որ ինձ տեսնելիս շները անգամ հաչում են վրաս։ Ինչո՞ւ ես այս մեղկ ուրախութեան մէջ Հաճոյքը չունեմ զուարճանալու, Սոսկ արեւի տակ ստուերս եմ դիտում Եւ ճառաբանում խեղութեանս վրայ։ Արդ, քանի որ ես ի վիճակի չեմ իբրեւ սիրահար Վայելք քաղելու այս պերճ օրերի զուարճանքներից, Վճռել եմ ատել ես այդ օրերի հեղգ հաճոյքները Եւ նետուել դժնի ոճիրների մէջ։ Դաւեր եմ լարել, գործեր վտանգաւոր, Հարբած գուշակներով, ամբաստանութեամբ եւ երազներով՝ Ինձ յաջողուել է եղբայր Կլարենսի եւ արքայի միջեւ Ահեղ քէն նիւթել։ Եւ եթէ արքայ Էդուարդը լինի նոյնքան ուղղամիտ Եւ հաւատարիմ, Որքան ես եմ նենգ, խարդախ, ուխտադրուժ, Այսօր Կլարենսը Բերդ պիտի տարուի Այն գուշակութեամբ, որն ասում է, թէ «Գ» տառն է հիմքից բնաջնջելու Էդուարդի տոհմը։ Սուզուէ՛ք, խորհուրդներ, յատակն իմ հոգու. Կլարե՛նսն է գալիս։

[Brakenbury and Guards enter, leading Clarence.]

GLOUCESTER [cont.]

Բարի օր, եղբայր, այս ի՞նչ զինավառ պահակախումբ է Սպասարկում քեզ։

CLARENCE.

Վեհափառ արքան, Հոգալով անձիս պաշտպանութիւնը, Վրաս է կարգել այս շքախումբը, որ ինձ Բերդ տանեն։

GLOUCESTER.

Պատճառը՞։

CLARENCE.

Անունս Գեւորգ է։

GLOUCESTER.
Աւա՛ղ, խե՛ղճ եղբայր, այդ քո մեղքը չէ։ Նա դրա համար պէտք է բանտ նետի կնքահայրերիդ։ Միգուցէ արքան մտադրուել է Քեզ վերակնքել Միջնաբերդի մէջ։ Իսկապէս, ասա, պատճառը ի՞նչ է։

CLARENCE.
Ի՞նչ ասեմ, Ռիչարդ, երբ ինքս էլ չգիտեմ. Որքան յայտնի է, Նա ունկնդիր է կանխասացներին եւ տեսիլներին. Այբուբենից ջնջել է նա մեր «Գ» տառը։ Ասում է՝ մի վհուկ պատմել է իրեն, իբր այդ գիրը Նրա սերնդին զրկելու է գահից. Որովհետեւ իմ անունը Գեւորգ է, Ուստի կարծում է՝ ինքս եմ այդ մարդը։ Սրանք, որքան գիտեմ, եւ սրա նման աննշան բաներ Դրդել են նրան ինձ Բերդ նետելու։

GLOUCESTER.
Այդպէս է լինում, երբ որ կանայք են իշխում այրերին։ Թագաւորը չէ՛ քեզ Բերդ ուղարկում։ Այդ լէդի Գրէյը՝ նրա տիկինն է, իմ խե՛ղճ Կլարենս, Մղում արքային այդ ծայր-բռնութեան։ Միթէ՞ այդ նա չէր եւ այն պաշտելի Անտոն Վուդուիլը՝ եղբայրը նրա, Որոնք դրդեցին իշխան Հէստինգսին Միջնաբերդ նետել, Որտեղից այսօր նա արձակուած է։ Մենք ապահով չենք, ապահո՛վ չենք, Կլարե՛նս։

CLARENCE.
Երկինքը վկայ, ապահով են միայն Թագուհու ցեղը եւ գիշերային մունետիկները, Որոնք ճեպում են տիկին Շոռի եւ արքայի միջեւ։ Չլսեցի՞ր ինչպէս խոնարհ աղերսով Իշխան Հէստինգսը դիմեց թագուհուն փրկութեան համար։

GLOUCESTER.
Այդպէս աղաչելով՝ Լորդ սենեկապետը ազատ արձակուեց։ Մեզ համար կարծեմ հեշտ ուղին այս է. Եթէ ուզում ենք մեր թագաւորի սէրը վայելել, Եկ ծառայութեան մտնենք Շոռի մօտ՝ Հագնելով նրա նշանազգեստը։ Այն խանդոտ, լքեալ այրին եւ Շոռը Այն պահից, որ մեր եղբայրը նրանց մեծուհի դարձրեց, Ամենակարող սանամայրերն են այս կայսրութեան մէջ։

BRAKENBURY.
Ներեցէ՛ք, դուքսե՛ր, Արքան խստօրէն պատուիրել է ինձ, Որ իր եղբօր հետ չի թոյլատրւում գաղտնի զրուցել, Ով կ'ուզէ լինի։

GLOUCESTER.
Եթէ հաճոյ է ձեզ, սըր Բրակենբերի, Կարող էք մասնակցել դուք մեր զրոյցին. Մենք դաւ չենք նիւթում։ Ասում ենք միայն, որ թագաւորը Իմաստուն է, պարկեշտ, իսկ թագուհին թէպէտ Տարիքն առած է, բայց գեղեցիկ է, խանդոտ չէ բնաւ, Որ Շոռի կինը սիրուն ոտքեր ունի, Կեռասի շուրթեր, արեւշող հայեացք, հաճելի լեզու, Որ նրա բոլոր ազգականները ազնուական դարձան։ Այդ ամէնը ճիշտ է, կարո՞ղ էք ժխտել։

BRAKENBURY.
Ես այդ ամէնի հետ գործ չունեմ, տէր իմ։

GLOUCESTER.
Ինչպէ՞ս, գործ չունես տիկին Շոռի հե՞տ։ Լսի՛ր, բարեկա՛մ, Գործ չունեցողը լաւ է՝ նրա հետ գաղտնապէս գործի, Բացի մի հոգուց։

BRAKENBURY.
Ո՞վ է այդ մէկը։

GLOUCESTER.
Իր ամուսինը, դու ինձ չե՞ս դաւի։

BRAKENBURY.
Նորից եմ խնդրում՝ Վերջ տալ զրոյցին ազնիւ դքսի հետ։

CLARENCE.
Քո պաշտօնն այդ է, հնազանդւում ենք։

GLOUCESTER.
Մենք մեր թագուհու ոտքի փոշին ենք եւ պարտաւոր ենք ենթարկուել նրան։ Մնաս բարով, եղբայր, գնամ արքայի մօտ. Ինչ էլ յանձնարարի, թէկուզ Էդուարդի այրուն քոյր գոչեմ, Պիտի կատարեմ, որ ազատեմ քեզ։ Այս նախատինքը, որի մէջ ես իմ եղբօրն եմ տեսնում. Այնպէս ցնցեց ինձ, որ անկարող ես դու պատկերացնել։ elbette, biz kraliçenin sefil kullarıyız, emirlere uymalıyız.

CLARENCE.
Գիտեմ, տհաճ է երկուսիս համար։

GLOUCESTER.
Երկար չես նստի. Ես քեզ կ'ազատեմ կամ քո փոխարէն ինքս Բերդ կ'երթամ, Մինչ այդ համբերիր։

CLARENCE.
Պէտք է համբերեմ, դէ՛, մնաս բարով։

[Clarence, Brakenbury and the Guards all exit.]

GLOUCESTER.
Գնա եւ կոխիր այն արահետը, որով այլեւս դու ետ չես դառնայ։ Միամի՛տ Կլարենս։ Քեզ այնքան եմ սիրում, Որ հոգիդ իսկոյն կ'ուղարկեմ երկինք, Եթէ երկինքը մեր բազուկների ընծան ընդունի։ Բայց ո՞վ է գալիս, միթէ՞ Հէստինգսն է՝ Բերդից նոր ելած։

[Hastings enters.]

HASTINGS.
Բարի օր ձեզ, ողորմած տէր իմ։

GLOUCESTER.
Նմանապէս ձեզ, լորդ սենեկապետ։ Ուրախ եմ, որ դուք ազատ օդ ելաք, Ինչպէ՞ս տոկացիք բանտարկութիւնը։

HASTINGS.
Համբերութեամբ, տէր իմ, ինչպէս վայել է բանտարկեալներին, Բայց պիտի ապրեմ՝ հատուցելու նրանց, Որ պատճառ եղան իմ բանտարկութեան։

GLOUCESTER.
Այդ անկասկած է, այդ անկասկած է։ Այդպէս էլ պէտք է Կլարենսն անի, Զի քո թշնամիք թշնամիքն են նրա Եւ նոյն դաւերն են նրա դէմ լարել։

HASTINGS.
Աիաւոր ցաւ է, երբ որ արծիւն է տանջւում վանդակում, Իսկ ցին ու բազէն որս են յօշոտում ազատութեան մէջ։

GLOUCESTER.
Ի՞նչ լուր երկրից դուրս։

HASTINGS.
Ներսի լուրերը աւելի վատ են։ Արքան հիւանդ է, տկար է, թախծոտ, Իր բժիշկները տագնապի մէջ են։

GLOUCESTER.
Սուրբ Պօղոսը վկայ, այդ լուրը վատ է։ Երկար ժամանակ նա զուսպ է սնուել, Իր արքայ անձը սաստիկ հիւծուած է, Շատ վշտալի է խորհել այդ մասին։ Ինչպէ՞ս, պառկա՞ծ է։

HASTINGS.
Այո՛։

GLOUCESTER.
Դու գնա իր մօտ, ես հիմա կը գամ։

[Hastings exits.]

GLOUCESTER [cont.]
Յուսով եմ՝ չի ապրի եւ չի մեռնելու Մինչեւ Գեւորգը երկինք չուղարկուի ճեպընթաց կառքով։ Այժմ ներս գնամ Սաստկացնեմ նրա ատելութիւնը Կլարենսի դէմ Կարծր ստերով, զօրեղ փաստերով. Եթէ միտումս յաջող գլուխ գայ, Կլարենսը մինչեւ վաղը չի ապրի, Դրանից յետոյ թող աստուածն Էդուարդ

արքային գթայ եւ այս աշխարհը ասպարէզ թողնի գործերիս համար... Վորուիկի կրտսեր դստերը կ'առնեմ. Ի՞նչ փոյթ, թէ ես եմ նրա ամուսնուն եւ հօրն սպանել։ Հետը հաշտուելու ճիշտ ուղին այս է, Որ ամուսին ու հայր դառնամ նրան։ Եւ պիտի դառնամ, ոչ այնքան մղուած նրան սիրելուց, Որքան մի գաղտնի, թաքուն միտումից, Որին կը հասնեմ այդ ամուսնութեամբ։ Բայց ես իմ ձիուց առաջ եմ թռչում. Կլարենսը դեռ ապրում է, շնչում, Իսկ Էդուարդը դեռ կրում է թագը, Երբ նրանք չքուեն, այնժամ կը հաշուեմ ճշգրիտ վաստակը։

[Exits.]

][][

ACT I. SCENE II.

The same. Another street. The corpse of King Henry the Sixth is brought on stage, guarded by Soldiers with halberds. It is followed by mourners, Lady Anne being one.

LADY ANNE.

Վայր դրէ՛ք, վայր դրէ՛ք բեռն այդ պատուական, Եթէ պատիւը կարող է թաքնուել մի դագաղի մէջ, Որպէսզի մի պահ դառնագին ողբամ Վաղաժամ ընկած եւ առաքինի այդ զոհի վրայ. Սուրբ թագաւորի ցրտացած պատկեր, Լանկաստերեան տան գունաթափ մոխիր, Անարիւն բեկոր արքունի արեան, Թող հոգուդ համար օրինական լինի Թշուառ Աննայի ողբերը լսել, Կնոջն Էդուարդիդ՝ տարաբախտ որդուդ, Որին սպանել է քեզ սպանող ձեռքը։ Այս լուսանցքներում, ուսկից կեանքդ թռաւ, Ահա ցօղում եմ թշուառ աչքերիս բալասանն անզօր։ Նզովք այն ձեռքին, որ այս ահաւոր անցքերը բացեց, Նզովք այն սրտին, որ սիրտ ունեցաւ ոճիրն այս գործել. Նզովք այն արեան, որ այս սրբազան արիւնը ոթեց։ Թող այդ անիծեալ չարագործի գլխին, Որ թշուառացրեց մեզ քո կործանմամբ, պայթի մի չարիք, Որ չեմ ցանկանում անգամ իժերին, սարդին, դօդօշին Կամ թէ որեւէ ժահրոտ սողունի։ Եթէ երբեւէ զաւակ ունենայ, թող այդ զաւակը լինի թերածին, Անճոռնի, տձեւ եւ օրապակաս, Որի գարշելի, այլանդակ տեսքից Յուսալից մայրը ահից սարսափի վրան նայելիս։ Հօր անբախտութիւնը թող նա ժառանգի։ Թէ կին ունեցաւ, թող նրա կինը Առաւել դժբախտ դառնայ նրա մահով, Քան ինքս եմ դժբախտ մատաղ ամուսնուս եւ քո անկումով։ Վերցրէք ձեր սուրբ բեռը, դէպի Չերտսի երթանք, Սուրբ Պօղոսից տանենք եւ յանձնենք հողին. Եթէ նորից յոգնէք այդ ծանրութեան ներքոյ, Դագաղը վայր առէք, որ ողբամ Հէնրի արքայի վրայ։ Նրանք բարձրացնում են դագաղը եւ առաջանում են մի քանի քայլ։

[Gloucester enters.]

GLOUCESTER.

Կացէ՛ք, դիակիրներ, դագաղը ցա՛ծ դրէք։

LADY ANNE.

Ի՞նչ ժանտ կախարդ է այս դեւին կոչել, Որ մեր սրբազան ծէսը խափանի։

GLOUCESTER.

Վայր դրէք դիակը, դուք, անզգամնե՛ր. վկայ սուրբ Պօղոս, Դիակ կը դարձնեմ՝ ով տեղից շարժուեց։

NOBLE.

Ետ քաշուէք, տէր իմ, թողէք դագաղն անցնի։

GLOUCESTER.

Է՛յ, կատաղած շուն, հրամայում եմ, ուրեմն կանգ առ։ Փորձիր բարձրացնել դու քո գեղարդը իմ կրծքից վերեւ, Վկայ սուրբ Պօղոս, գետնին զարկելով, Ես քեզ կը ճզմեմ իմ ոտքերի տակ, գոսնելի յանդուգն։

[The coffin is set down.]

LADY ANNE.
Ի՞նչ, դուք դողո՞ւմ էք, արդէն վախեցա՞ք։ Չեմ պարսաւում ձեզ, չէ՞ որ ամէնքդ էլ մահկանացու էք, Իսկ մահկանացու աչքերը դեւին չեն կարող տոկալ։ Չքուի՛ր այստեղից, դու ժանտ դժոխքի ահեղ գործակալ, Դու իշխում էիր նրա մահացու այս մարմնի վրայ, Իսկ նրա հոգուն իշխել չես կարող, ուստի հեռացի՛ր։

GLOUCESTER.
Չքնաղ սրբուհի, ի սէր գթութեան, մի՛ լինիր դաժան։

LADY ANNE.
Դու գարշելի դեւ, ի սէր Աստծոյ, չքուիր մեր մօտից եւ մի՛ տանջիր մեզ, Քանզի երջանիկ մեր այս աշխարհը դժոխք ես դարձնում՝ Լի ժանտ ճիչերով ու հառաչներով։ Եթէ բերկրանք է քո հրէշաւոր արարքը դիտել, Նայիր արիւնոռուշտ գործիդ նմուշին։ Տեսէք, պարոննե՛ր, օ՛, տեսէ՛ք, տեսէ՛ք, Մեռած արքայի սառած վէրքերը, Բացելով իրենց մունջ բերանները, արիւն են ծորում։ Ամաչի՛ր, կարմրի՛ր, գարշ տձեւութեան դու սոսկալի կոյտ, Երբ դու մօտեցար, արիւնն սկսեց ժայթքել արնազուրկ այս երակներից, որ պա՛ղ են, դատա՛րկ։ Արարքդ վայրագ եւ արտասովոր Խիստ արտասովոր այս մեծ հեղեղի պատճառը դարձաւ։ Ո՛վ դու, այս արեան արարիչ աստուած, վրէժխնդիր եղիր, Հո՛ղ, որ ըմպում ես այս սուրբ արիւնը, վրէժխնդիր եղիր. Ո՛վ երկի՛նք, շանթիր դու ոճրագործին, Հո՛ղ, բա՛ց երախդ եւ լափիր նրան, Ինչպէս լափեցիր արիւնը բարի այս թագաւորի, Որ նրա դժխեմ բազուկը ոթեց։

GLOUCESTER.
Չարը բարութեամբ, անէծքն օրհնութեամբ Հատուցիր, տիկին, յայտնի կանոն է։

LADY ANNE.
Իսկ դու, անզգամ, Աստծոյ եւ մարդու Ամենայն կանոն ոտնակոխ արիր, Գազանը նոյնիսկ քեզնից գթոտ է։

GLOUCESTER.
Ես զուրկ եմ գութից, ուստի գազան չեմ։

LADY ANNE.
Խիստ հրաշք բան է, երբ որ դեւերը ուղիղ են խօսում։

GLOUCESTER.
Բայց գերհրաշք է, երբ բարկանում են հրեշտակները։ Աստուածեղէն կի՛ն, թոյլ տուր կարծեցեալ այդ ոճիրները Վանեմ ինձանից, ինչպէս որ հարկն է, եւ արդարանամ։

LADY ANNE.
Թոյլ տուր, այր մարդու զազրելի վարակ, Որ այդ հանրայայտ մեղքերիդ համար Նզովեմ ես քո անձը նզովեալ։

GLOUCESTER.
Աւելի չքնաղ, քան թէ կարող է լեզուն քեզ կոչել, Ինձ ազատ ժամ տուր արդարանալու։

LADY ANNE.
Աւելի զազիր, քան թէ կարող է սիրտը քեզ կարծել. Արդարանալու լոկ մի միջոց կայ. որ դու քեզ կախես։

GLOUCESTER.
Ես, այդ յուսահատ քայլին դիմելով, ինձ կ՚ամբաստանեմ։

LADY ANNE.
Այդպէս վարուելով՝ դու գուցէ ներուես՝ Մի արժանաւոր վրէժ լուծելով ինքդ քո հանդէպ, Դու, որ անարժան սպանդ սարքեցիր այլոց նկատմամբ։

GLOUCESTER.
Իսկ եթէ նրանց ես չեմ սպանե՞լ։

LADY ANNE.
Ուրեմն ողջ են։ Սակայն մեռած են, դիւային ստրուկ, եւ քո՛ ձեռքերով։

GLOUCESTER.
Բայց քո ամուսնուն ես չեմ սպանել։

LADY ANNE.
Ուրեմն ողջ է։

GLOUCESTER.
Ոչ, նա մեռած է. Էդուարդն է սպանել։

LADY ANNE.
Դու ստում ես, դեւ, քո պիղծ կոկորդով. Մարգարիտ թագուհին Տեսել է ոճրագործ թուրդ ծփալիս նրա արեան մէջ, Ձէնքդ ճօճել ես նրա կրծքի դէմ, Բայց եղբայրներդ խափանել են այն։

GLOUCESTER.
Մեղքը իրենն էր, զրպարտիչ լեզուով Նրանց յանցանքը բարդում էր անմեղ ուսերիս վրայ։

LADY ANNE.
Քեզ գրգռել էր միտքդ արիւնռուշտ, Որ բացի ոճրից, դեռ չի երազել ուրիշ ոչ մի բան։ Դո՞ւ չես սպանել այս թագաւորին։

GLOUCESTER.

Այո՛, այդպէս է։

LADY ANNE.

Դու համաձա՞յն ես, գարշելի ոզնի. Արդ, Աստուածն էլ թող համաձայն լինի, Որ դու անիծեալ լինես այդ ստոր արարքիդ համար։ Օ՛, նա ազնիւ էր, առաքինի՛, հե՛զ։

GLOUCESTER.

Աստծոյ աչքը լոյս, դրախտ կը գնայ։

LADY ANNE.

Նա դրախտումն է, որտեղ դու բնաւ մուտք չես գործելու։

GLOUCESTER.

Թող փառք տայ, որ ես իրեն օգնեցի այնտեղ մեկնելու, Նա պիտանի է այնտեղ աւելի, քան երկրի վրայ։

LADY ANNE.

Իսկ դու յարմար չես եւ ոչ մի տեղի, բացի դժոխքից։

GLOUCESTER.

Մի այլ տեղ էլ կայ, թէ կամիս լսել։

LADY ANNE.

Որեւէ զնդան։

GLOUCESTER.

Քո ննջարանը։

LADY ANNE.

Քո պառկած տունը սատանի բոյն է։

GLOUCESTER.

Այդպէս կը լինի, քանի տակաւին քեզ հետ չեմ պառկել։

LADY ANNE.

Այդ յոյսով մնայ։

GLOUCESTER.

Ես այդպէս գիտեմ; Բայց, ազնիւ Աննա, Վերջ տանք մտքերի այս սուր բախմանը Եւ անցնենք խօսքի խոհեմ մեթոդին։ Միթէ՞ այն մարդը, որ պատճառ դարձաւ Պլանտագենետ Հենրի արքայի Նաեւ Էդուարդի տարաժամ մահուան, Նրանց սպանող ոճրագործի չափի պարսաւելի է։

LADY ANNE.
Դու ես պատճառը եւ ոճրագործը։

GLOUCESTER.
Գեղեցկութիւնդ է այդ սպանութեան դրդապատճառը, Գեղեցկութիւնդ, որ խափանում էր աչքերիս քունը, Որպէսզի համայն աշխարհը մեռցնեմ՝ Կրծքիդ գէթ մէկ ժամ հանգչելու համար։

LADY ANNE.
Թէ հաւատայի խօսքիդ, մարդասպան, Այս եղունգներով կ'այլանդակէի սիրուն այտերս։

GLOUCESTER.
Իմ այս աչքերը չէին դիմանայ այդ աւերումին. Չէիր յանդգնի դու այն եղծանել, երբ ես ներկայ եմ։ Ինչպէս աշխարհն է արեւով հրճւում, Այդպէս էլ ես եմ քո փայլով շնչում։ Այդ է իմ միակ արեւն ու կեանքը։

LADY ANNE.
Ժանտ գիշերը թող քո լոյսը մարի, իսկ մահը՝ կեանքդ։

GLOUCESTER.
Մի նզովիր քեզ, չքնաղ արարած, երկուսն էլ դու ես։

LADY ANNE.
Որ այդ երկուսով ես վրէժխնդիր լինէի քեզնից։

GLOUCESTER.
Այդ մի կռիւ է խիստ անբնական՝ Վրէժխնդիր լինել քեզ սիրող մարդուց։

LADY ANNE.
Այդ մի կռիւ է արդար, բանական՝ Ամուսնու մահուան վրէժը լուծել։

GLOUCESTER.
Այն մարդը, որ քեզ զրկեց ամուսնուց, Դրանով օգնեց, որ աւելի լաւ ամուսին գտնես։

LADY ANNE.
Նրանից լաւը չկայ աշխարհում։

GLOUCESTER.
Կայ մէկը, տիկին, որ քեզ աւելի ուժգին է սիրում։

LADY ANNE.
Ո՞վ է, անուանիր։

GLOUCESTER.
Պլանտագենետ։

LADY ANNE.
Այդ նրա անունն է։

GLOUCESTER.
Անունը նոյնն է, բայց նա աւելի գերազանց մարդ է։

LADY ANNE.
Իսկ որտե՞ղ է նա։

GLOUCESTER.
Ահա այստեղ է։

[Anne spits on Gloucester.]

GLOUCESTER [cont.]
Ինչո՞ւ ես թքում։

LADY ANNE.
Ափսոս, որ թուքս մահաբեր թոյն չէ։

GLOUCESTER.
Թոյնը չի ծորել դեռ երբեք այդքան անուշ բերանից։

LADY ANNE.
Թոյնը ափսոս է քեզ պէս գարշելի դօդօշի համար. Հեռո՛ւ ինձանից, աչքերիս վարակ։

GLOUCESTER.
Աչքերդ արդէն վարակել են ինձ։

LADY ANNE.
Արքայօձի պէս կ'ուզէի շանթել քեզ մի հայեացքով։

GLOUCESTER.
Ուզածս էլ այդ է, որ մէկեն մեռնեմ, Քանզի հայեացքդ սպանում է ինձ կենդանի մահով։ Աչքերդ աչքս դարձրին լացի ծով, Դէմքս պղծեցին մանկական աղի յորդուն արցունքով։ Իմ այս աչքերը, որ բնաւ

գութի արցունք չեն թափած, Ո՛չ այն ժամանակ, երբ հայրս ու Էդուարդը հեկեկում էին՝ Լսելով տխուր ողբը Ռուտլենդի, Երբ Կլիֆորդը իր աhեղ սրով շամփրում էր նրան, Ո՛չ էլ այն պահին, երբ խիզախ հայրդ մի մանկան նման Պատմում էր, թէ ինչպէս իմ հայրը մեռաւ՝ Տասնեակ անգամներ ընդհատելով այն, որ ողբայ ու լա, Այնքան ցաւալի, որ ներկաների այտերն էին թրջւում, Ինչպէս ծառերը՝ վարար անձրեւից: Այդ տրտում ժամին Այրական աչքս արհամարհում էր մի խոնարհ արցունք: Եւ ի՜նչ, այդ բոլոր վշտերի կողքով անտարբեր անցայ, Բայց քնքուշ տեսքիդ համար ողբալով՝ իսպառ կուրացայ: Իմ կեանքում բնաւ ես բարեկամի աղերսած չկամ, Ոչ էլ թշնամու, Լեզուս վարժուած չէր շողոմ խօսքերի. Սակայն ես այժմ ծարաւ եմ տեսքիդ այրող թովչանքին, Իմ գոռոզ սիրտը աղերսում է քեզ եւ թելադրում է լեզուիս խօսելու:

[Anne stares at him in hated.]

GLOUCESTER [cont.]
Օ՛, մի՛ վարժեցրու շուրթերդ, տիկին, այդ ատելութեան, Նրանք ստեղծուած են համբոյրի համար, ոչ թէ բարկութեան: Եթէ կարող չէ քո վրէժխնդիր սիրտը ներելու, Առ ահաւասիկ այս սուրը հատու եւ, եթէ կամիս, մխրճիր թափով այս անկեղծ կրծքում, Եւ թող այն հոգին, որ պաշտում է քեզ, դուրս գայ այնտեղից: Տե՛ս, բա՛ց է կուրծքս քո այդ մահացու հարուածի հանդէպ, Եւ խոնարհաբար մահ եմ աղերսում ես՝ ծունկի իջած:

[He hands Anne his sword then opens the front of his shirt. Anne makes to run him through with his sword but pauses, hesitates.]

GLOUCESTER [cont.]
Ո՛չ, մի՛ վարանիր, ես եմ սպանել Հենրի արքային, Գեղեցկութիւնդ ինձ դրդեց դրան: Արա՛գ վերջացրու, ջահէլ Էդուարդին ե՛ս խողխողեցի, Բայց պատճառը քո երկնային տեսքն էր:

[Anne lets the sword fall from her hands.]

GLOUCESTER [cont.]
Բարձրացրու սուրը կամ ինձ բարձրացրու:

LADY ANNE.
Վեր կաց, կեղծաւոր, թէեւ քո մահը սաստիկ ուզում եմ, Բայց քո դահիճը ինքս չեմ լինի:

GLOUCESTER.
Ուրեմն հրամայիր, որ վերջ տամ կեանքիս:

LADY ANNE.
Արդէն ասել եմ:

GLOUCESTER.
Դու այդ ասացիր բարկութեան պահին. Վերստին ասա, եւ անմիջապէս Քո սիրոյ համար քո սիրեցեալին սպանող ձեռքը Աւելի անկեղծ մի սէր կը սպանի յանուն քո սիրոյ. Երկուսիս մահուան պատճառը դարձիր։

LADY ANNE.
Գէթ գիտենայի՝ ինչ կայ քո սրտում։

GLOUCESTER.
Սրտիս պատկերը լեզուիս վրայ է։

LADY ANNE.
Երկուսն էլ կեղծ են։

GLOUCESTER.
Ուրեմն ոչ ոք անկեղծ չի եղել։

LADY ANNE.
Սուրդ պատեան դիր։

GLOUCESTER.
Արդեօք հաշտուեցի՞նք։

LADY ANNE.
Յետոյ կ'իմանաս։

GLOUCESTER.
Բայց ապրե՞մ յոյսով։

LADY ANNE.
Բոլորն, յուսով եմ այդպէս են ապրում։

GLOUCESTER.
Առ այս մատանին։

LADY ANNE.
Վերցնելը տալ չէ։

GLOUCESTER.
Լաւ նստեց մատիդ։ Այդպէս քո կուրծքն է ներփակում սիրտս։ Երկուսն էլ կրիր, երկուսն էլ քոնն են։ Եւ եթէ թոյլ տաս, որ թշուառ ծառադ Քո բարի ձեռքից մի շնորհ խնդրի, Յաւէտ բախտաւոր կը դարձնես

նրան։

LADY ANNE.
Ի՞նչ է բաղձանքդ։

GLOUCESTER.
Այս տրտում ծէսը թող նա կատարի, Ով սգաւոր է քեզնից առաւել, Իսկ դու Կրոսբի պալատն շտապիր. Ես Չերտսի վանքում ազնիւ արքային Պատշաճ հանդէսով հողին յանձնելուց եւ գերեզմանը զղջման արցունքով ցօղելուց յետոյ Ամենափութկոտ պարտականութեամբ կը դառնամ քեզ մօտ։ Շատ պատճառներով, որ խիստ գաղտնի են, աղաչում եմ քեզ Այդ շնորհին անել։

LADY ANNE.
Իմ ամբողջ սրտով։ Անչափ ուրախ եմ, Որ դու զղջում ես։ Տրեսել եւ Բերկլի, առաջնորդէք ինձ։

GLOUCESTER.
Ինձ հրաժեշտ մաղթիր։

LADY ANNE.
Դեռ արժանի չես. Բայց դու դաս տուիր շողոքորթութեան, Համարիր, որ ես արդէն մաղթել եմ։

[Anne, Tressel and Berkeley exit.]

GLOUCESTER.
Վերցրէ՛ք դագաղը։

GENTLEMEN.
Չերտսի՞ տանենք, տէ՛ր իմ։

GLOUCESTER.
Ո՛չ, տարէք դէպի Սպիտակ աբեղայ, ես շուտով կը գամ։

[All but Gloucester exit.]

GLOUCESTER [cont.]
Ո՞վ է այս ձեւով սիրաբանել կնոջ, Ո՞վ է այս ձեւով յաղթահարել կնոջ։ Նա իմ ձեռքումն է. բայց չեմ պահի երկար. Ես, որ սպանեցի նրա ամուսնուն եւ նրա հօրը, Ինչպէ՞ս կարող եմ տիրանալ նրան Իր սրտի ահեղ ատելութեան մէջ, Շուրթերին՝ անէծք, աչքերում՝ արցունք, Իր ատելութեան արնոտ վկան կողքին, Երբ ընդդէմ են ինձ Աստուած, իր խիղճը եւ այս նիգերը, Իսկ ես մի հատիկ բարեկամ չունեմ, Որ կարողանամ դատս պաշտպանել, Բացի դիւական կեղծ նայուածքներից։ Նա արդէն իմն է՝ ընդդէմ աշխարհի։ Ինչպէ՛ս։ Միթէ՞ նա արդէն մոռացել է իր խիզախ ամուսնուն՝ Էդուարդ իշխանին, որին ցասման մէջ Ես սպանեցի Տեկսբուրի դաշտում երեք ամիս առաջ։ Մի գեղատեսիլ տղամարդ էր նա՝

Կերտուած բնութեան խիստ շռայլ ձեռքով, Երիտասարդ էր, կտրիճ, իմաստուն եւ արքայական, Աշխարհն անզօր է վերստին ծնել այդպիսի մէկին։ Միթէ՞ նա պիտի աչքերը պղծի՝ վրաս նայելով, ես, որ հնձել եմ ոսկեայ ծաղիկն իր քաղցրիկ իշխանի, Եւ նրա այրուն շինել ողբի մահիճ. Վրաս, որ չարժեմ Էդուարդի կէսը, Վրաս, որ կաղ եմ եւ այսքան տձեւ։ Դքսութիւնս վկայ, Ցարդ սխալուել եմ անձիս նկատմամբ։ Աննան գտնում է, կեանքովս եմ երդւում, Որ ես մի պատշաճ, սքանչելի մարդ եմ. Եկ մօտս կանչեմ երկու տասնեակ դերձակ, Որ, ըստ տարազի, մարմինս պճնեն։ Քանի որ աչքիս ես դուր եմ եկել, Եկ պահպանեմ այն մի չնչին ծախսով։ Բայց նախ այս դիակը շիրիմ իջեցնեմ, Ապա սիրածիս մօտ դառնամ ողբով։ Շողա՛, վա՛ռ արեւ, մինչ հայելի գտնեմ Եւ իմ ստուերը նրա մէջ դիտեմ։

[Exits.]

]{}[

ACT I. SCENE III.

The palace. Queen Elizabeth, Rivers and Grey enter.

RIVERS.

Համբերէ՛ք, տիկին, տարակոյս չկայ, Որ արքան շուտով կազդուրուելու է։

GREY.

Ձեր տրտում տեսքը կարող է ազդել հիւանդի վրայ. Արդ, ի սէր Աստծոյ, հանգիստ մնացէք, Ուրախ խօսքերով զուարթացրէք նրան։

QUEEN ELIZABETH.

Վա՜յ իմ վիճակին, եթէ նա մեռնի։

RIVERS.

Ձեզ բան չի լինի, ամուսնուց կը զրկուէք։

QUEEN ELIZABETH.

Այդ կորստեան մէջ բոլոր կորուստն է։

GREY.

Երկինքը պարգեւել է ձեզ մի լաւ որդի. Նա ձեզ կը սփոփի, երբ արքան գնայ...

QUEEN ELIZABETH.

Ա՛խ, նա դեռ փոքր է, եւ նրա վրայ Ռիչարդ Գլոստերն է պահապան կարգուած, Մի մարդ, որ երբեք մեզ բարեկամ չէ։

RIVERS.

Նա՞ է հովանին։

QUEEN ELIZABETH.

Դեռ վերջնական չէ, բայց որոշուած է. Թէ արքան մեռնի, նա է դառնալու երկրի հովանին։

[Buckingham and Derby enter.]

GREY.

Ահա գալիս են Բուկինգեմն ու Դերբին։

BUCKINGHAM.

Բարի օր, տիկին։

DERBY.
Տայ աստուած, որ միշտ բախտաւոր լինէք։

QUEEN ELIZABETH.
Ազնիւ կոմս Դերբի, Ռիչմոնդ կոմսուհին Հազիւ թէ ձեր այդ բարի մաղթանքին հաւանութիւն տայ. Թէպէտ ձեր կինն է եւ ինձ չի սիրում, Բայց, բարի լորդ իմ, համոզուած եղէք. Ես ձեզ չեմ ատում ձեր կնոջ յոխորտ կեցուածքի համար։

DERBY.
Խնդրում եմ, տիկին, հաւատ չընծայել Այդ կեղծ ու քսու չարախօսներին։ Եթէ մասամբ էլ նրանք ճիշտ խօսեն, Ներողամիտ եղէք, քանզի կանացի թուլութիւն է այդ, Ոչ թէ չարութիւն։

QUEEN ELIZABETH.
Արքային տեսա՞ր։

DERBY.
Դուքս Բուկինգեմը եւ ես հէնց հիմա Նրա մօտ էինք։

QUEEN ELIZABETH.
Ինչպէ՞ս է նրա առողջութիւնը։

BUCKINGHAM.
Լաւ յոյս կայ, տիկին, զուարթ է խօսում։

QUEEN ELIZABETH.
Աստուած բարին տայ. ասուլիս արի՞ք։

BUCKINGHAM.
Այո՛, տիրուհի։ Նա փափագում է հաշտութիւն կնքել Դուքս Գլոստերի ու ձերոնց միջեւ, Եւ նմանապէս սենեկապետի ու նրանց միջեւ Արքան բոլորին իր մօտ է կանչել։

QUEEN ELIZABETH.
Ա՜խ, երանի թէ։ Բայց այդ չի լինի։ Վախենում եմ, որ սա է գագաթը մեր երջանկութեան։

[Gloucester, Hastings and Dorset enter.]

GLOUCESTER.
Բաւ է հանդուրժեմ այդ անարգանքը. Ո՞վ է արքային անվերջ գանգատւում, Որ ես դաժան եմ, չեմ սիրում իրենց։ Սուրբ Պօղոսը վկայ, նա է թշնամի նորին մեծութեան, Ով բամբասում է նրա ականջին։ Ես շողոքորթ չեմ, զուրկ եմ սուր լեզուից, Չեմ կարող ժպտալ մարդկանց երեսին, խաբել ու կեղծել. Ո՛չ ֆրանսիական, ո՛չ էլ կապկային ձեւով գլուխ տալ, Դրա համար էլ ինձ համարում են ոսոխ ոխերիմ։

Միթէ՞ չի կարող պարզամիտ մարդը Ապրել ախտաժէտ խոհերից ազատ, Այլ պէտք է նրա ճշմարիտ խօսքը ի չար գործ դնեն Ճարպի՜կ, խորամա՜նկ, նենգ միմոսները։

RIVERS.
Այս ներկաներից որի՞ն է ուղղուած ձեր խօսքը, տէր իմ։

GLOUCESTER.
Քեզ է ուղղուած, որ հեզութիւնից, շնորհքից զուրկ ես։ Ե՞րբ եմ վշտացրել, ե՞րբ եմ նեղել քեզ Կամ քեզ, եւ կամ քեզ, կամ ձեր աղանդից որեւէ մէկին, ժանտախտը թափուի բոլորիդ գլխին։ Նորին մեծութիւնը, - Աստուած պահէ նրան՝ ի ցաւ բոլորիդ, - Չի կարող մի պահ գէթ հանգիստ շնչել, Որ նրան չտանջէք ձեր այդ անպատկառ ամբաստանութեամբ։

QUEEN ELIZABETH.
Եղբայր Գլոստեր, դուք սխալւում էք. Արքան իր կամքով եւ ոչ թէ դրդուած ուրիշի կողմից, Գուցէ տեսնելով, որ քո արտաքին արարմունքի մէջ Մի ինչ-որ ներքին ատելութիւն կայ Իմ զաւակների եւ եղբայրների ու իմ նկատմամբ, Այդպէս է վճռել, որ իմանայ, թէ Ինչ՞ն է պատճառը ձեր չար վարմունքի, եւ վերջ տայ դրան։

GLOUCESTER.
Հնարաւոր է։ Աշխարհը այնքան յոռի է դարձել, Որ սարեակներն են որս անում այնտեղ, Ուր արծիւները թառել չեն կարող. Ուզած ռամիկդ դարձել է իշխան, Իսկ շատ իշխաններ ռամիկներ դարձան։

QUEEN ELIZABETH.
Քեզ հասկանում ենք, եղբայր Գլոստեր։ Դու նախանձում ես, որ ես եւ մերոնք վեր ենք բարձրացել. Տայ աստուած, որ քո կարիքը չզգանք։

GLOUCESTER.
Կամօքն Աստծոյ մենք քո կարիքը արդէն զգում ենք. Քո միջնորդութեամբ մեր եղբայրն արդէն Բերդում է նստած։ Ես անարգուած եմ, ազնուական դասը արհամարհուած է. Մինչդեռ ամէն օր Ազնուականութեան շարքերն են քաշւում այնպիսի մարդիկ, Որոնք դեռ երեկ գրոշ չարժէին։

QUEEN ELIZABETH.
Վկայ է աստուած, որ ինձ բարձրացրեց այս զգաստ դիրքին Իմ նախկին խաղաղ, երջանիկ բախտից, Ես թագաւորին բնաւ չեմ լարել Կլարենսի դէմ։ Ընդհակառակը, եղել եմ նրա շատ ջերմ պաշտպանը եւ բարեխօսը։ Դու ինձ չարաչար անպատւում ես, դուքս, Քո այդ անարդար եւ նենգ կասկածով։

GLOUCESTER.
Գուցէ ուրանաս, որ լորդ Հեստինգսի Վերջին բանտարկման պատճառը դո՛ւ չես։

RIVERS.
Կարող է, տէր իմ, որովհետեւ նա...

GLOUCESTER.
Ի հարկէ նա է, ո՞վ չի իմանում։ Նա ընդունակ է շատ բան ուրանալ։ Կարող է նաեւ աջակցել, որ դու շատ առաջ գնաս, Ապա ժխտել իր միջնորդութիւնը Եւ վերագրել այդ պատիւները մեծ արժանիքիդ։ Ինչե՞ր չի կարող թագուհին անել. Կարող է նոյնիսկ նա ամուսնանալ...

RIVERS.
Ի՞նչ, ամուսնանա՞լ, միթէ՞ կարող է։

GLOUCESTER.
Այո՛, պսակուել մի արքայի հետ Կամ մի ամուրի գեղեցիկ մանչի։ Քո տատն աւելի վատին է առել։

QUEEN ELIZABETH.
Իշխան Գլոստեր, բաւական երկար ես ենթարկուել եմ Բութ պարսաւներիդ եւ դժնի ծաղրիդ. Երկինքը վկայ, ես կը հաղորդեմ նորին մեծութեան Այդ զարհուրելի հեգնանքի մասին, որ տոկացել եմ։ Լաւ է՝ մի գեղջուկ աղախին լինեմ, Քան մեծ թագուհի այս պայմաններում՝ Ենթակայ այսքան անարգանքների՛, ծաղրի՛, չարութեա՛ն։

[Queen Margaret enters, unseen.]

QUEEN ELIZABETH [cont.]
Ես քիչ խինդ տեսայ Անգլիոյ գահին։

QUEEN MARGARET.
[Aside.] Եւ թող նուազի այդ չնչին խինդն էլ, կ'աղաչեմ աստուած, Ինձնից խլեցիր թէ՛ պատիւ, թէ՛ գահ։

GLOUCESTER.
Սպառնո՞ւմ ես ինձ, որ արքային կ'ասե՛ս. Գնա եւ պատմիր, ինչ որ ուզում ես։ Իմ ասածները ես կը հաստատեմ արքայի առաջ։ Թող ինձ Բերդ տանեն, վախեցողը չեմ, Հերիք է լռեմ. ինչ շո՛ւտ մոռացան իմ վաստակները։

QUEEN MARGARET.
[Aside.] Դուրս կորիր դու, դեւ, քո վաստակները շատ լաւ եմ յիշում։ Դու իմ ամուսնուն բերդում սպանեցիր, Իսկ թշուառ որդուս՝ Տեկսբուրի դաշտում։

GLOUCESTER.
Երբ ամուսինդ դեռ թագաւոր չէր, իսկ դու՝ թագուհի. Նրա գործերում ես տքնում էի մի գրաստի պէս, Իր ոսոխներին ես ջնջում էի, Իսկ ընկերներին առատ վարձատրում։ Արիւնս էի թափում, որ արքայացնեմ նրա արիւնը։

QUEEN MARGARET.
[Aside.] Եւ այդ արիւնը նրանից, քոնից ազնիւ արիւն էր։

GLOUCESTER.
Իսկ այդ միջոցին դու եւ լորդ Գրին՝ ձեր ամուսինը, Անցաք խառնակիչ Լանկաստերի կողմ։ Դուք նոյնպէս, Ռիւերս։ Ձեր ամուսինը Միթէ՞ Մարգարտի կռւում չսպանուեց, սուրբ Օլբենի մօտ։ Թողէք յիշեցնեմ, թէ մոռացել էք, Ո՛վ էք եղել դուք եւ ի՛նչ էք հիմա, Եւ նմանապէս, ո՛վ եմ եղել ես եւ ի՛նչ եմ այժմ։

QUEEN MARGARET.
[Aside.] Դու մի ոճրագործ սրիկայ էիր եւ դարձեալ նոյնն ես։

GLOUCESTER.
Խեղճ Կլարենսը իր հօրը լքեց, դաւեց Վորուիկին, Դրժեց իր ուխտը։ Փրկիր նրան, Յիսո՛ւս։

QUEEN MARGARET.
[Aside.] Շանթի՛ր նրան, Աստուած։

GLOUCESTER.
Կռուեց՝ ի նպաստ Էդուարդի թագի, Վարձի փոխարէն նա բանտարկուած է։ Ա՜խ, երանի թէ քարսիրտ լինէի ես Էդուարդի պէս, Կամ նրա սիրտը իմ սրտի նման կարեկից լինէր։ Աւա՜ղ, ես ինչքան միամիտ մարդ եմ այս չար աշխարհում։

QUEEN MARGARET.
[Aside.] Թո՛ղ այդ աշխարհը եւ դժոխք փութայ, Դու, անամօթ դեւ, այնտեղ է քո սեւ իշխանութիւնը։

RIVERS.
Իմ լորդ Գլոստեր, այն ծանր օրերին Մենք թշնամիներ չենք եղել գահին, Այլ ընթացել ենք մեր օրինական թագաւորի հետ։ Մենք այդպէս էլ ձեզ կը հետեւէինք, Եթէ մեր արքան ինքդ լինէիր։

GLOUCESTER.
Ե՞ս արքայ լինեմ... գերադասում եմ փերեզակ լինել, Հեռու իմ սրտից մտածումն անգամ։

QUEEN ELIZABETH.
Ինչպէս քեզ համար չնչին հաճոյք է Լինել թագաւոր այս երկրի վրայ, Այնպէս էլ, դուքս իմ, համոզուած եղիր, Չնչին հաճոյք է ինձ համար լինել երկրիս թագուհին։

QUEEN MARGARET.
[Aside.] Նոյնպիսի չնչին հաճոյք է զգում եւ այս թագուհին, Այդ ե՛ս եմ, ե՛ս եմ եւ համա՛կ տրտում. Ո՜չ, անկարող եմ այլեւս համբերել։

[Queen Margaret steps forward.]

QUEEN MARGARET [cont.]
Լսեցէք դուք ինձ, նենգ ծովահէններ, որ գզվռտում էք Իմ ձեռքից կորզած աւարը ձեր մէջ բաժանելու համար։ Որը՞ ձեզանից չի դողում այժմ վրաս նայելիս։ Խոնարհ էիք ինձ, երբ ես ձեզ վրայ թագուհի էի, Ապստամբո՞ւմ էք, երբ վայր եմ ընկած որպէս զոհը ձեր։ Դու, ազնիւ հրէշ, մի՛ շուռ գա այդպէս։

GLOUCESTER.
Դու, պառաւ ջադու, ինչո՞ւ ելար դէմս։

QUEEN MARGARET.
Որպէսզի հաշուեմ քո ոճիրները. Քեզ բաց չեմ թողնի։

GLOUCESTER.
Աքսորուած չէի՞ր դու մահուան սարսափով։

QUEEN MARGARET.
Աքսորուած էի։ Բայց ես գտնում եմ՝ առաւել վիշտ է ապրել աքսորում, Քան մեռնել այստեղ՝ հայրենի տանը։ Դու ինձ պարտք ես, դուքս, մի հատիկ որդի եւ մի ամուսին, Իսկ դու՝ մի ամբողջ թագաւորութիւն, խոնարհուէ՛ք դէմս. Այս համակ վիշտը, որ ես կրում եմ, օրէնքով ձերն է. Իսկ հաճոյքները ձեր յափշտակած՝ բոլորը ի՛մն են։

GLOUCESTER.
Իմ ազնիւ հայրը քեզ նզովք կարդաց, Երբ թղթէ թագով իր գոռ ճակատը դու պսակեցիր, Այդ անարգանքից գետեր հոսեցին նրա աչքերից։ Ապա տուեցիր դու դուքսին մի լաթ, որ այն չորացնէր Ներկուած Ռուտլենդի անմեղ արիւնով. Նրա անէծքը՝ հոգու դառնութեամբ քո գլխին թափուած, Դեռ մինչեւ հիմա վրադ է ընկած, Եւ տե՛ս, Աստուածն է քո այդ արիւնռուշտ Արարքն հատուցում։

QUEEN ELIZABETH.
Աստուածն անմեղին վրէժխնդիր չէ։

HASTINGS.
Անարգ ոճիր էր մանկանն սպանել. Այդչափ անգութ բան երբեք չի լսուած։

RIVERS.
Բռնակալները նոյնիսկ լաց եղան, երբ այդ լուրն առան։

DORSET.
Ամէնքն անխտիր վրէժ գոչեցին։

BUCKINGHAM.
Նորթեմբերլենդը, որը ներկայ էր, նոյնիսկ արտասուեց։

QUEEN MARGARET.
Ի՞նչ, ամէնքդ այստեղ իրար էիք կրծում իմ գալուց առաջ՝ Պատրաստ բռնելու միմեանց կոկորդից. Այժմ ձեր մաղձը վրա՞ս շուռ տուիք։ Եորքի ահարկու անէծքը միթէ՞ յաղթեց երկնքին. Որ Հենրիի մահը եւ իմ սիրասուն Էդուարդի մահը, Կորուստը նրանց թագաւորութեան, դժբախտ աքսորն իմ, Այդ ամէնը հազիւ հատուցում եղան այդ շան լակոտին։ Եթէ անէծքը, ամպը ճեղքելով, երկինք է մտնում, Արդ, ճամփայ տուէք, ո՛վ մթին ամպեր, սուր անէծքներիս։ Ձեր թագաւորը թող սատակ դառնայ անարգ զեխութեան, Ինչպէս որ մերը զոհ դարձաւ ահեղ ոճրագործութեան։ Թող Էդուարդ որդիդ, որը Վալեսի իշխանն է հիմա, Էդուարդիս տեղակ, որը Վալեսի իշխանն էր առաջ, Մանուկ մահանայ եւ նոյն բիրտ մահով։ Իմ տեղը այժմ դու ես թագուհի. Կ'ուզեմ, որ ապրես քո փառքից երկար, տարաբախտիս պէս, Որ երկար ողբաս քո զաւակների ծանր կորուստը Եւ տեղդ տեսնես մի այլ թագուհի, Ինչպէս որ ես եմ տեսնում քեզ հիմա, Իրաւազրկուած, քո ձեռքով շորթած իմ փառքի նման։ Թող քո երջանիկ բախտը վախճանուի քո մահից առաջ, Եւ երկարաձիգ բազում օրերի վշտերից յետոյ Մեռնես մօր փառքից եւ կնոջ փառքից եւ գահից զրկուած։ Ռիւերս եւ Դորսետ, դուք ներկայ էիք, Դուք նոյնպէս, Հեստինգս, երբ որ իմ որդուն խոցեցին արնոտ ժանտ դաշոյններով։ Կ'աղօթեմ Աստծուն. Որ ոչ ոք ձեզնից չմեռնի երբեք բնական մահով, Այլ մի չարաղէտ դիպուածով գնայ...

GLOUCESTER.
Վերջացրու թովքդ, գարշելի վհուկ։

QUEEN MARGARET.
Որ քեզ արձակեմ առանց յիշելո՞ւ։ Կա՛ց, շուն, լսի՛ր ինձ. Եթէ երկինքը ամբարած ունի մի ահեղ պատիժ, Որ գերազանցի իմ փափագածին, Թող նա պահի այն, մինչեւ մեղքերդ լաւ հասունանան, Եւ ապա ցասմամբ որոտայ գլխիդ, Որ խառնակիչն ես թշուառ աշխարհի խաղաղութեանը։ Թող խղճմտանքի որդը հանապազ կրծէ քո հոգին, Քանի ապրում ես, անվերջ կասկածես, Որ բարեկամդ մարդ է չարակամ, Եւ ամենանենգ դաւաճաններին Ճանաչես իբրեւ անկեղծ բարեկամ։ Թող այդ մահացու աչքերից բնաւ քուն չգայ մօտիկ, Բացի խոշտանգող մղձաւանջներից՝ Քեզ սարսափեցնող տձեւ դեւերի դժոխքով լեցուն։ Դու դիւանշան, գոսնելի վիժուածք, դու աւերիչ կինճ, Դու, որ ծնունդով կնքուած ես իբրեւ Բնութեան ստրուկ եւ դժոխքի բիճ։ Դու, քո մայրական արգանդի ամօթ, Դու, քո հօր մէջքի նողկալի ծնունդ, Պատուի ցնցոտի, դու գարշելի։ Դո՛ւ։

GLOUCESTER.
Մարգարի՛տ։

QUEEN MARGARET.
Ռիչա՛րդ։

GLOUCESTER.
Ի՞նչ է։

QUEEN MARGARET.
Քեզ հետ չեմ։

GLOUCESTER.
Ներիր, ուրեմն, ինձ այնպէս թուաց, Որ այդ անէծքը ինձ էր ուղղուած։

QUEEN MARGARET.
Քեզ էր ուղղուած, բայց պատասխանի կարիք չեմ զգում։ Օ՜, թոյլ տուր՝ ես իմ անէծքն աւարտեմ։

GLOUCESTER.
Ես քո անունով աւարտեցի այն։

QUEEN ELIZABETH.
Դու քո անէծքով քեզ անիծեցիր։

QUEEN MARGARET.
Դու կեղծ թագուհի, բախտիս դժգոյն փայլ, Ինչո՞ւ ես շաքար ցանում այդ սարդին, Որի մահաբեր ոստայնացանցը թակարդում է քեզ։ Օ՜, յիմա՛ր, յիմա՛ր, սրում ես մի սուր, որ քեզ սպանես։ Կը գայ այն օրը, երբ դու կ'անիծես Այդ սապատաւոր թունոտ դօդօշին Եւ իմ անէծքի կարիքը կը զգաս։

HASTINGS.
Վերջ տուր նզովքիդ, խելացնոր վհուկ, Քանի չի հատել համբերութիւնս։

QUEEN MARGARET.
Ամօթ բոլորիդ, իմս հատել է։

RIVERS.
Գիտակ չես պարտքիդ, ուստի չգիտես՝ ում հետ ես խօսում։

QUEEN MARGARET.
Իսկ դուք գիտա՞կ էք արդեօք ձեր պարտքին. Ես թագուհի եմ, դուք՝ հպատակներ, Խոնարհուէ՛ք իմ դէմ։

DORSET.
Մի վիճէք հետը, նա ցնորուած է։

QUEEN MARGARET.
Լռեցէք, մարկիզ, իսկ դուք էլ լիրբ էք, Եւ ձեր տիտղոսը, որ նոր է կնքուած, Հազիւ է մտել իր ընթացքի մէջ։ Գէթ երիտասարդ ձեր ազնուական դասը իմանար, Թէ ինչ կորուստ է զրկուել այդ փառքից եւ թշուառանալ, Ով բարձր է կանգնած, բազում փոթորիկ ցնցում է նրան. Իսկ երբ ընկնում է, ցրիւ է գալիս սաստիկ անկումից։

GLOUCESTER.
Բարի խորհուրդ է, օգտուիր դու, մարկիզ։

DORSET.
Դուք էլ օգտուեցէք, ձեզ նոյնպէս պէտք է։

GLOUCESTER.
Այո՛, եւ խիստ շա՛տ։ Բայց ես ծնուել եմ անչափ վերեւում, Արծուաբոյնս շինուած է բարձր եղեւնու գլխին, Նա կատակում է քամիների հետ, հեգնում արեւին։

QUEEN MARGARET.
Եւ խափանում է արեւի լոյսը, օ՜, աւա՜ղ, աւա՜ղ, Վկայ է որդիս, որն այժմ մահուան ստուերի մէջ է, Որի լուսափառ ճառագայթները ցասումիդ թուխպը Յաւիտենական մութով պարուրեց, Բոյնդ հիւսուած է մեր քանդուած բնում. Ամենատես Աստուած, մի հանդուրժիր այդ. Արեամբ խլուածը արեամբ կործանի՛ր։

BUCKINGHAM.
Լռէք, ամօթ է, միթէ՞ գութ չունէք։

QUEEN MARGARET.
Ո՛չ գութ պահանջէք եւ ո՛չ էլ ամօթ, Դուք անգթօրէն վարուեցիք ինձ հետ Եւ իմ յոյսերը սրի քաշեցիք անամօթաբար. Գութս ցասումն է, իսկ կեանքս՝ ամօթ, Եւ այդ ամօթում եռում է վիշտն իմ։

BUCKINGHAM.
Վե՛րջ տուր, հերի՛ք է։

QUEEN MARGARET.
Իշխան Բուկինգեմ, ձեռքդ եմ համբուրում՝ Ի նշան ուխտի եւ մտերմութեան. Բախտաւոր լինես, եւ քո մեծ տունը պանծալի լինի։ Քո պատմուճանը մեր տոհմի արեամբ չի ապականուած, Դու իմ անէծքի շրջանից դուրս ես։

BUCKINGHAM.
Բոլորն էլ դուրս են, քանզի անէծքը Անիծող մարդու շուրթին է մնում։

QUEEN MARGARET.
Նրանք, վստահ եմ, երկինք են ելնում Եւ զուարթեցնում են Աստծոյ խոր քնած խաղաղութիւնը։ Աւա՜ղ, Բուկինգեմ, զգոյշ այդ շնից, Երբ նա քծնում է, ուրեմն կծում է, իսկ երբ կծում է, Թունոտ ժանիքից վէրքը նեխելով մահ է պատճառում։ Գործ չունես հետը, հեռու կաց նրանից, Նա դրոշմուած է մեղքի, դժոխքի մահուան կնիքով, Եւ դրանց բոլոր գործակալները իր ծառաներն են։

GLOUCESTER.
Այդ ի՞նչ է խօսում, իշխան Բուկինգեմ։

BUCKINGHAM.
Կարեւոր բան չէ, ողորմած տէր իմ։

QUEEN MARGARET.
Դո՞ւ էլ ես ծաղրում բարի խորհուրդն իմ եւ շոյում դեւին, որի վտանգից քեզ զգուշացրի։ Օ՛, յիշիր խօսքս դու մի ուրիշ օր, Երբ նա քո սիրտը վշտով կը ճեղքի, եւ դու կը գոչես. «Ճի՛շտ էիր, Մարգարիտ»։ Իր ատելութեան զոհը դառնաք դուք, Նա էլ՝ ձեր զոհը, իսկ դուք բոլորդ՝ Աստծոյ զոհը։

[Exits.]

HASTINGS.
Մազերս ցցուեցին նրա անէծքից։

RIVERS.
Իմն էլ ոչ պակաս։ Ես զարմանում եմ, որ նա ազատ է։

GLOUCESTER.
Երկինքը վկայ, նա մեղաւոր չէ։ Նա շատ է տանջուել, ինքս եմ յանցաւոր Այդ տառապանքի մի մասի համար։

QUEEN ELIZABETH.
Որքան ես գիտեմ, անիրաւութիւն չեմ արել նրան։

GLOUCESTER.
Նրա կորուստը դու ես վայելում։ Անբաւ բարիք եմ ես արել նրան, Ով սառնութեամբ է այժմ յիշում այդ։ Տե՛ս, Կլարենսը. իր ջանքի համար լա՛ւ են հատուցել. Զնդան են դրել խոզանոցի մէջ, որ լա՛ւ գիրանայ։ Աստուած թող ների պատճառ եղողին։

RIVERS.
Չարագործին ներել՝ առաքինի գործ է. Այդպէս վարւում է միայն քրիստոնեան։

GLOUCESTER.
Ես միշտ այդպէս եմ [Aside.], քանզի քաջ գիտեմ. Անիծելիս պէտք է ես ինձ անիծեմ։

[Catesby enters.]

CATESBY.
Տիրուհի, արքան ձեզ իր մօտ է կանչում. Ձեզ նոյնպէս, դո՛ւքս իմ, ձեզ էլ, իշխաննե՛ր։

QUEEN ELIZABETH.
Իսկոյն, Քետսբի։ Գնա՛նք, տեարք իմ։

RIVERS.
Երթա՛նք, թագուհի։

[All exit save Gloucester.]

GLOUCESTER.
Չարիք եմ նիւթում եւ առաջինը ես եմ սկսում Մեծախօս թնդալ՝ Իմ լարած բոլոր գաղտնի դաւերը Բառնալով այլոց ուսերի վրայ։ Ե՛ս Կլարենսին զնդան նետեցի Եւ ինքս եմ հիմա բարձրագոչ ողբում Այդ յիմարների՝ Հեստինգսի, Դերբու, Բուկինգեմի մօտ՝ Յայտարարելով, թէ թագուհին է իր եղբայրներով Արքային գրգռում իմ կոմս եղբօր դէմ։ Հաւատում են դրան եւ դրդում են ինձ, Որ վրէժ լուծեմ ես կոմս Ռիւերսից, Վոգենից, Գրուց։ Ես հառաչում եմ եւ Սուրբ Գրոցից մի խօսք կորզելով՝ Յայտնում եմ նրանց, թէ մեզ Աստուածն է Պատուիրել չարին բարութեամբ յաղթել։ Եւ այսպէս ահա, պաճուճելով իմ չարախինդ հոգին Սուրբ մատեաններից շորթած եզակի մէջբերումներով, Սուրբ եմ ձեւանում, երբ ներքուստ դեւ եմ։ Բայց, սո՛ւս, գալիս են իմ դահիճները։

[Two Murderers enter.]

GLOUCESTER [cont.]
Ա՛, բարի եկաք, իմ հուժկու քաջե՛ր, Արդէն գնում էք վե՞րջ տալու նրան։

MURDERER 1.
Գնում ենք, տէր իմ։ Անցագիր է պէտք, Որ մօտը մտնենք, դրա համար եկանք։

GLOUCESTER.
Լա՛ւ էք մտածել։ Իմ մօտ է, վերցրէ՛ք։

[Hands them the warrant.]

GLOUCESTER [cont.]
Երբ որ կ'աւարտէք, եկէք Կրոսբի։ Սակայն, պարոնայք, անվրէպ եղէք, նաեւ խստասիրտ, Ականջ մի դրէք իր աղերսանքին. Նա ճարտասան է, եթէ լսէք նրան, Գուցէ խղճահարուէք։

MURDERER 1.
Մենք չենք խօսի, տէր իմ, Շատախօսները լաւ գործաւոր չեն. համոզուած եղէք, Մենք կը գործենք ձեռքով եւ ոչ թէ լեզուով։

GLOUCESTER.
Սիրում եմ ձեզ, տղերք։ Ապուշի աչքից արցունք է ցայտում, Իսկ ձեր աչքից՝ կայծքար։ Յառա՛ջ, ձեր գործին. Արա՛գ վերջացրէք։

MURDERER I.
Անպատճա՛ռ, տէր իմ։

[All exit.]

][][

ACT I. SCENE IV.

London. The Tower. Clarence and Brakenbury enter.

BRAKENBURY.

Ինչո՞ւ դուք սաստիկ տրտում էք այսօր, ձերդ բարձրութիւն։

CLARENCE.

Օ՜, ես անցկացրի մի դժբախտ գիշեր՝ Այնքան ահաւոր երազներով լի Եւ լի այլանդակ տեսարաններով, Որ իբրեւ ազնիւ մի քրիստոնեայ, Չէի ցանկանայ վերապրել նորից այդ սարսափները, Թէկուզ տիրանամ մի ամբողջ աշխարհի ուրախ օրերի. Այնքան սոսկալի եւ ժանտ գիշեր էր։

BRAKENBURY.

Ի՞նչ երազ տեսաք, խնդրում եմ, պատմէք։

CLARENCE.

Ինձ թուաց, որ ես, բանտից փախչելով, Նաւով լողում եմ դէպի Բուրգունդիա, Ինձ հետ էր եւ իմ եղբայր Գլոստերը, Որն իմ խցիկից յորդորում էր ինձ Միջնադուռ ելնել։ Այնտեղից նայեցինք դէպի Անգլիա Եւ վերհիշեցինք բիւրաւոր դժնի փորձութիւնները, Որ Լանկաստերեան եւ Եորքի ահեղ ռազմի օրերին Վիճակուեցին մեզ։ Երբ քայլում էինք Նաւի երերուն տախտակամածին, Ինձ այնպէս թուաց, թէ Գլոստերը յանկարծ սայթաքեց։ Փութացի օգնել։ Նա վայր ընկնելիս Ուժգին հրեց ինձ եւ բարձրից նետեց Ծովի թաւալուն ալիքների մէջ։ Օ՜, Աստուա՜ծ, խեղդուելն ի՜նչ տանջալից էր, Ջրի ինչպիսի՜ ահեղ աղմուկ կար ականջներիս մէջ, Մահուան ինչպիսի՜ պատկերներ եկան աչքերիս առաջ։ Թւում էր, թէ ես տեսնում էի բազում խորտակուող նաւեր եւ անթիւ մարդկանց, որոնց ձկները կուլ էին տալիս. Երիթներ ոսկու, մեծ-մեծ խարիսխներ, շեղջեր մարգարտի Եւ ադամանդներ, գոհարներ անգին. Ողջը սփռուած ծովի յատակին։ Դրանց մի մասը լցուած էր մեռած մարդկանց գանգերում Եւ այն խորշերում, Ուր մի ժամանակ աչքեր էին փայլում։ Սողոսկել էին Իբրեւ նախատինք այդ նոյն աչքերի շողացող ակներ, Որ անյագօրէն դիտում էին ծովի յատակը տղմուտ Եւ հեգնում մեռած այդ ոսկորները՝ դէսուդէն ցրուած։

BRAKENBURY.

Բայց մահուան պահին ինչպէ՞ս կարողացաք Ծովի այդ ամբողջ գաղտնիքը տեսնել։

CLARENCE.

Կարծում եմ՝ տեսայ։ Եւ բազում անգամ ես մաքառեցի Մահուան դէմ։ Սակայն յորձանքն անողորմ Հոգիս կաշկանդուած չէր թողնում, որ լայն, ազատ օդ դուրս գայ՝ Խեղդելով նրան հանգչող մարմնիս մէջ, Պատրաստ ժայթքելու ծովի յատակում։

BRAKENBURY.

Դուք չզարթնեցի՞ք այդ հոգեվարքում։

CLARENCE.
Ո՛չ, իմ երազը տեւեց կեանքից դէն, Ապա սկսուեց փոթորիկն հոգուս. Ինձ թուաց, որ ես անցայ այն մթին յորձանքի միջով, - Այն սարսափելի նաւավարի հետ, Որին երգում են բանաստեղծները - Դէպի խաւարի մշտնջենական թագաւորութիւն։ Եւ առաջինը, որ իմ տարագիր հոգուն ողջունեց, Իմ մեծ աներն էր՝ Վորուիկն անուանի. Նա բարձր գոչեց. «Այս մութ աշխարհը ի՞նչ պատիժ ունի Նենգ Կլարենսին տանջելու համար»։ Յետոյ չքացաւ։ Ապա յայտնուեց հրեշտակադէմ Մի այլ ուրուական՝ արիւնաթաթաւ, Պայծառ վարսերով. նա բարձր գոչեց. «Կլարենսը եկաւ, նենգ, չար, ուխտադրուժ, կեղծ Կլարենսը, Որն ինձ խողխողեց Տեկսբուրի դաշտում, Բռնեցէք նրան, ահեղ ֆուրիներ, տարէք տանջելու»։ Այդ խօսքի վրայ սատանաների մի ամբողջ լեգէոն Շրջապատեց ինձ եւ իմ ականջը Այնպէս խլացրեց գոռում-գոչումով, որ այդ աղմուկից Քնից վեր թռայ դողահար մարմնով, եւ երկար ատեն Թւում էր, որ դեռ դժոխքի մէջ եմ. Այնքան սոսկալի երազ տեսայ ես։

BRAKENBURY.
Ձեր վախը, տէր իմ, զարմանալի չէ, Ես ինքս եմ սոսկում ձեր այդ պատմածից։

CLARENCE.
Օ՛, Բրակենբերի, իմ գործած բոլոր այն յանցանքները, Որ ծառացել են այժմ խղճիս դէմ, Ես կատարել եմ ի սէր Էդուարդի. Բայց տեսէք՝ ինչո՞վ նա ինձ հատուցեց։ Օ՛, Աստուած, եթէ ջերմ աղօթքներս անզօր են քո դէմ, Եւ կամիս պատժել մեղքերիս համար, Քո դատաստանը թող բացառապէս իմ գլխին պայթի։ Օ՛, խնայիր դու իմ անմեղ կնոջն ու թշուառ մանկանց։ Աղաչում եմ քեզ, բարի պահապան, մօտս մնա դու, Հոգիս տրտում է, ուզում եմ քնել։

BRAKENBURY.
Կը մնամ, տէր իմ, քնէ՛ք, տէր ընդ ձեզ։

[Clarence sleeps.]

BRAKENBURY [cont.]
Վիշտը մեր կեանքի անդորրն է փշրում, Նա մեր միջօրէն գիշեր է դարձնում, գիշերն՝ առաւօտ։ Մեծաւորները փառքի համար են տիտղոսի ձգտում, Արտաքին պատիւ՝ ներքին ցաւի դէմ. Եւ անզգալի ցնորքի համար Յաճախ զգում են անքուն հոգսերի մի ամբողջ աշխարհ, Այնպէս որ նրանց մեծ կոչումների եւ բախտի միջեւ Տարբերութիւնը միայն արտաքին մի փուչ հռչակ է։

[The Two Murderers enter.]

MURDERER I.
Է՛յ, ո՞վ կայ այստեղ։

BRAKENBURY.
Ի՞նչ ես ուզում, մարդ, ինչպէ՞ս ներս մտար։

MURDERER I.
Իմ սրունքներով։ Ես պէտք է խօսեմ Կլարենսի հետ։

BRAKENBURY.
Եւ այդքան կտրո՞ւկ։

MURDERER II.
Լաւ է կտրուկ լինել, քան թէ ձանձրալի.

[He hands Brakenbury the warrent, who reads it.]

BRAKENBURY.
Ինձ այս գրութեամբ հրամայուած է Դուքս Կլարենսին ձեր ձեռքը յանձնել։ Հարկ չունեմ դրա պատճառն իմանալ, Քանզի չեմ ուզում մեղաւոր դառնալ։ Ահա բանալիք, ահա դուքսը քնած։ Գնամ արքայի մօտ եւ հաղորդեմ նրան, Որ իմ պաշտօնը ես ձեզ զիջեցի։

MURDERER I.
Խելօք ես դատում, բարի ճանապարհ։

[Brakenbury exits.]

MURDERER II.
Հը, ի՞նչ ես ասում, քնա՞ծ տեղը սպանենք։

MURDERER I.
Ո՛չ. թէ չէ կ'ասի, որ մենք վախից ենք այդպէս վարուել, երբ զարթնի։

MURDERER II.
Երբ զարթնի՞։ Ա՛յ ապուշ, նա էլ չի զարթնելու մինչեւ դատաստանի օրը։

MURDERER I.
Ուրեմն էդ ժամանակ կ'ասի, որ մենք իրեն սպանել ենք քնած տեղը։

MURDERER II.
Ճիշտն ասած՝ «դատաստան» բառը իմ խղճմտանքը մի տեսակ շարժեց։

MURDERER I.
Վախենո՞ւմ ես, ի՞նչ է։

MURDERER II.
Նրան սպանելը չէ, որ վախեցնում է ինձ. դրա համար մենք հրաման ունենք։ Վախենում եմ, որ ես

կ'անիծուեմ այդ սպանութեան համար, որից ոչ մի հրամանագիր չի կարող փրկել ինձ։

MURDERER I.
Ես կարծում էի, թէ դու վճռական ես։

MURDERER II.
Եւ հաստատ վճռել եմ չսպանել նրան։

MURDERER I.
Ես կը վերադառնամ դուքս Գլոստերի մօտ եւ այդպէս էլ կ'ասեմ նրան։

MURDERER II.
Խնդրում եմ, մի քիչ սպասիր, մինչեւ իմ սրբակրօն տրամադրութիւնը փոխուի. սովորաբար դա տեւում է, մինչեւ ես քսան հաշւեմ։

MURDERER I.
Հիմա՞ ինչպէս ես զգում քեզ։

MURDERER II.
Հաւատա, դեռ մի քիչ խղճմտանքի մրուր նստած է մէջս։

MURDERER I.
Յիշիր, որ մեզ վարձատրելու են, հէնց որ աւարտենք...

MURDERER II.
Ուրեմն մա՛հ նրան, ես մոռացել էի վարձի մասին։

MURDERER I.
Այժմ որտե՞ղ է քո խղճմտանքը։

MURDERER II.
Դուքս Գլոստերի քսակում։

MURDERER I.
Իսկ եթէ մեզ վարձատրելիս, երբ նա իր քսակը բանայ, խղճմտանքդ դուրս թռչի՞։

MURDERER II.
Թող կորչի գնայ, ո՞ւմ է հարկաւոր։

MURDERER I.
Իսկ եթէ նորից ետ դառնա՞ս։

MURDERER II.
Պրծա՛, էլ ես նրա հետ գործ չունեմ։ Էդ խղճմտանք ասածդ վտանգաւոր բան է. մարդուն վախկոտ է դարձնում։ Մարդն ուզում է գողանալ, խղճմտանքը ամբաստանում է։ Նա ուզում է երդուել, խղճմտանքը կաշկանդում է։ Ուզում է պառկել հարեւանի կնոջ հետ, խղճմտանքը գաղտնիքը մատնում է։ Դա մի կարմրադէմ, ամօթխած ոգի է, որ ապստամբւում է մարդուս կրծքում եւ անհամար խոչընդոտներ է յարուցում։ Խղճմտանքի պատճառով ես մի անգամ ետ տուեցի ոսկու մի քսակ, որ պատահմամբ գտել էի։ Ով խղճմտանք ունի, նա հեշտութեամբ կարող է աղքատանալ, այդ է պատճառը, որ նրան դուրս են վռնդում քաղաքներից՝ որպէս չարագործի։ Ով կամենում է հանգիստ ապրել, նա պէտք է ապաւինի սեփական ուժերին եւ ձեռք քաշի խղճմտանքից։

MURDERER I.
Գետինը մտնի, նա հէնց հիմա արմունկիս մօտն է եւ համոզում է ինձ, որ չսպանեմ դքսին։

MURDERER II.
Մի հաւատա նրան, եթէ չես ուզում յետոյ վայ տալ գլխիդ։ Նա ուզում է սողոսկել քո մէջ, որ քեզ թուլացնի։

MURDERER I.
Չէ՛, ես պնդակազմ մարդ եմ, նա ինձ չի կարող խաբել, համոզուած եղիր։

MURDERER II.
Ա՛յ, ինչ եմ ասում, դու խօսեցիր քաջ տղամարդու պէս, որ յարգում է իր պատիւը։

MURDERER I.
Սրիդ կոթովը հարուածիր գլխին, յետոյ մենք նրան շուռ կը տանք կողքի սենեակի գինու տակառի մէջ։

MURDERER II.
Պատուական միտք է. նրանից հրաշալի արգանակ կը ստացուի։

MURDERER I.
Սո՛ւս, զարթնում է։ Զարկե՞մ գլխին։

MURDERER II.
Չէ՛, առաջ մի քիչ խօսեցնենք։

CLARENCE.
[Waking up.] Որտե՞ղ ես, պահապան, մի գաւաթ գինի տուր ինձ։

MURDERER I.
Հիմա կուշտ կը խմէք, տէր իմ։

CLARENCE.
Ի սէր Աստծոյ, ասա, ո՞վ ես դու։

MURDERER I.
Քեզ նման մի մարդ։

CLARENCE.
Բայց ոչ արքայական զարմից, ինչպէս ես եմ։

MURDERER I.
Բայց քեզնից աւելի արքայասէր։

CLARENCE.
Ձայնդ որոտ է, իսկ հայեացքդ՝ հեզ։

MURDERER II.
Որովհետեւ իմ ձայնը պատկանում է արքային, իսկ հայեացքս սեփական է։

CLARENCE.
Որչափ մահաբեր ու մութ ես խօսում։ Ինչո՞ւ ես գունատ։ Ո՞վ ուղարկեց քեզ, եւ ինչո՞ւ եկար։

BOTH MURDERERS.
Ո՛ր, ո՛ր, ո՛ր...

CLARENCE.
Որ ինձ սպանէ՞ք։

BOTH MURDERERS.
Այո, ի հարկէ՛, ի հարկէ՛։

CLARENCE.
Հազիւ սիրտ արիք խոստովանելու, Ուրեմն անզօր էք ոճիր գործելու։ Ի՞նչ եմ արել ձեզ, իմ բարեկամներ։

MURDERER I.
Մեզ ոչինչ չես արել, թագաւորին ես արել։

CLARENCE.
Ես նորից կը հաշտուեմ նրա հետ։

MURDERER II.
Երբե՛ք, իշխան իմ։ Պատրաստուիր մեռնել։

CLARENCE.
Բոլոր մարդկանցից երկուսի՞դ են ընտրել՝ Մորթել անմեղիս։ Յանցանքս ի՞նչ է։ Ինձ ամբաստանող ապացոյցն ո՞ւր է, Ո՞ր դատարանն է վճիռ կայացրել, Այդ ժանտատեսիլ դատաւորն ո՞վ է։ Ո՞վ է բարբառել Մահավճիռը խեղճ Կլարենսի։ Երբ ես օրէնքով դատապարտուած չեմ, Ո՞վ կը յանդգնի մահ սպառնալ ինձ։ Փրկչի սուրբ արեամբ, որ մեր մեղքերի համար է թափուել, Որով յոյս ունէք քաւել ձեր մեղքը, Ես պարտադրում եմ, որ դուք հեռանաք եւ ձեռք չտաք ինձ։ Ձեր բռնած գործը անիծեալ գործ է։

MURDERER I.
Մեզ հրամայուած է։

MURDERER II.
Եւ հրամայողը թագաւորն է։

CLARENCE.
Ստում ես, ստրո՛ւկ, մեր ամենազօր արքայից արքան Իր օրէնսգրքում հրամայել է, Որ մարդ չսպանես։ Եւ յանդգնում ես Դու ոտնահարել տիրոջ օրէնքը եւ իրագործել Պատուէրը՞ մարդու։ Օ՛, զգուշացիր, նրա բազուկը վրէժխնդիր է. Թափով իջնում է այն մարդկանց գլխին, Որ բեկանում են իր պատուիրանը։

MURDERER II.
Եւ նոյն վրէժը քո գլխին կ'իջնի Սուտ երդմանդ համար, նոյնպէս եւ ոճրի։ Դու հաղորդուեցիր սրբազան ուխտով, Որ Լանկաստերեան տան համար կռուես։

MURDERER I.
Եւ Աստծոյ հանդէպ իբրեւ, դաւաճան, ուխտդ խախտելով՝ Դու նենգ, դաւադիր սուրդ խրեցիր Քո թագաւորի որդու թիկունքը։

MURDERER II.
Որին երդուեցիր սիրել, պաշտպանել։

MURDERER I.
Ինչպէ՞ս կարող ես դու մեզ պարտադրել օրէնքն Աստծոյ, Երբ ինքդ ես խախտել նրա օրէնքը այնքան նենգօրէն։

CLARENCE.
Ո՞ւմ սիրոյ համար գործեցի, աւա՛ղ, ես այդ յանցանքը, Էդուարդի համար, եղբօրս համար, նրա սիրոյ համար։ Ո՛չ, ո՛չ, պարոններ, Նա ձեզ չի յղել, որ ինձ սպանէք, Քանզի այդ գործում նրա յանցանքը իմից չափ ծանր է։ Եթէ Աստուածն ինձ պատժել կամենար, Ապա, իմացէք, նա ինձ կը պատժէր ի տես

հանրութեան։ Մի՛ կորզէք դատը նրա հզօր բազկից. Նա կարիք չունի խոտոր, անիրաւ վարուեցողութեան՝ Պատժելու նրանց, որ մեղանչել են իր օրէնքի դէմ։

MURDERER I.
Իսկ ո՞վ քեզ կարգեց անողորմ դահիճ, Որ դու սպանես Պլանտագենետ Վսեմ, քաջազուն, ջահէլ իշխանին։

CLARENCE.
Իմ եղբօր սէրը, դեւն ու ցասումս։

MURDERER I.
Քո եղբօր սէրը, նաեւ մեր պարտքը եւ քո յանցանքը Հրամայում են, որ քեզ սպանենք։

CLARENCE.
Օ՛, մի՛ ատէք ինձ, եթէ սիրում էք դուք իմ եղբօրը. Ես իր եղբայրն եմ եւ ամբողջ հոգով սիրում եմ նրան։ Եթէ վարձուել էք ստոր կաշառքով, ետ վերադարձէք, Ես ձեզ կ'ուղարկեմ իմ ազնիւ եղբայր Գլոստերի մօտ, Նա ձեզ աւելի շռայլ վարձ կը տայ իմ կեանքի համար, Քան թէ Էդուարդը՝ իմ մահուան գոյժը ձեզնից առնելիս։

MURDERER II.
Դու սխալուած ես, քո եղբայրը քեզ սաստիկ ատում է։

CLARENCE.
Օ՛, ո՛չ, սիրո՛ւմ է, խորն է սիրում ինձ, Դուք իմ անունից իր մօտ գնացէք։

Ա ԵՒ Բ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐ
Անպայման կ'երթանք։

CLARENCE.
Պատմեցէք նրան, որ երբ մեր հայրը՝ Եորքն արքայական, Յաղթական բազկով օրհնեց երեքիս, Նա մեզ պատուիրեց սիրել միմեանց. Նա չէր կարծում, որ մենք կարող ենք իրար հետ գժտուել. Թող Գլոստերը այդ օրը յիշի եւ դառնօրէն լա։

MURDERER I.
Այո՛, աչքերից կայծքար թափելով, մեզ էլ խրատեց Այդպէս արտասուել։

CLARENCE.
Օ՛, մի զրպարտէք, նա գթառատ է,..

MURDERER I.
Ուղիղ ասացիր, Ամռան ձիւնի պէս։ Խելքդ հաւաքիր, Նա՛ մեզ ուղարկեց, որ քեզ սպանենք։

CLARENCE.
Կարելի բան չէ. երբ բաժանուում էր, Ինձ իր գիրկն առաւ, հեկեկաց, երդուեց, Որ ինձ կ'ազատի։

MURDERER I.
Եւ ազատում է. երկրի կապանքից Նա քեզ հէնց հիմա երկինք կ'ուղարկի։

MURDERER II.
Հաշտուիր Աստծոյ հետ, քո ժամը հասաւ։

CLARENCE.
Միթէ՞ քո հոգում այնքան խիղճ ունես, Որ ինձ խորհուրդ տաս հաշտուել Աստծոյ հետ։ Եւ միթէ՞ այնքան կոյր ես հոգուդ դէմ, Որ ինձ սպանելով՝ համարձակուել ես գժտուել Աստծոյ հետ։ Աւա՛ղ, պարոններ, ով ձեզ այդ ստոր գործին է կոչել, Այդ ոճրի համար ձեզ պիտի ատի։

MURDERER II.
Ապա ի՞նչ անենք։

CLARENCE.
Գթացէք դուք ինձ, փրկէք ձեր հոգին։ Ո՞ր մէկը ձեզնից, եթէ նա լինէր իշխանի որդի եւ լինէր զրկուած ազատութիւնից, ինչպէս ես եմ արդ, Չէր աղերսելու իր կեանքի համար, եթէ ձեզ նման Իր մօտ մտնէին երկու մարդասպան։ Դուք կ'աղերսէիք Իմ տառապանքում...

MURDERER I.
Գթում են միայն երկչոտն ու կինը։

CLARENCE.
Իսկ չգթալը դիւային գործ է, բիրտ, գազանային։ Լսիր, բարեկամ, ես նայուածքիդ մէջ գութ եմ նշմարում, Եթէ աչքերդ շողոքորթող չեն, Իմ կողմը անցիր եւ խնդրիր սրան, որ ինձ չսպանի, Մուրացիկ իշխան ... ո՞ր մուրացիկը չի գթայ նրան։

MURDERER II.
Ետ նայիր, տէր իմ։

MURDERER I.
Ա՛ռ քեզ։ Սա՛ էլ առ

[He stabs Clarence.]

MURDERER I [cont.]
Իսկ եթէ քիչ է, Ես քեզ կը խեղդեմ գինու կարասում։

[Exits, carrying the corpse.]

MURDERER II.
Արիւնոտ ոճի՜ր՝ սաստկօրէն գործուած։ Որքա՜ն կ'ուզէի Պիղատոսի պէս ձեռքս լուանալ Այս խիստ ցաւագին դժնեայ սպանդից։

[Murderer I returns.]

MURDERER I.
Հը, ի՞նչ ես պաղել եւ ինձ չես օգնում։ Երկինքը վկայ, ես դուքսին կ'ասեմ, որ անճարակ ես։

MURDERER II.
Երանի լսէր, որ ես փրկել եմ իր եղբօր կեանքը։ Վարձը քեզ վերցրու եւ յայտնիր նրան, ինչ որ ասացի. Սաստիկ զղջում եմ, որ դուքսն սպանուեց։

[Exits.]

MURDERER I.
Իսկ ես չեմ զղջում, հեռացի՜ր, վախկո՜տ, Գնամ դիակը պահեմ մի փոսում, Մինչեւ որ դուքսը կարգադրի թաղել։ Երբ վարձս առնեմ, կը չքուեմ մի տեղ, Քանզի կը բացուի այս ոճիրն ահեղ։

[Exits.]

][][

ACT II. SCENE I.

London. The palace. King Edward IV (massively sick), Queen Elizabeth, Dorset, Rivers, Hastings, Buckingham and Grey all enter.

KING EDWARD IV.

Այդպէս, ուրեմն, այսօր մենք բարի գործ կատարեցինք։ Ազնիւ տեարք իմ, ձեր այս դաշինքը անխախտ պահեցէք, Ես ամենայն օր ակնկալում եմ իմ հրեշտակին, Որ այս աշխարհից հրաժեշտ առնեմ։ Այժմ շատ հանգիստ կարող եմ հոգիս յանձնել երկնքին, Երբ երկրի վրայ ես միաբան եմ դարձրել ամէնքիդ։ Ռիւերս եւ Հեստինգս, ձեռք մեկնէք իրար, Ձեր սէրն երդուեցէք՝ վերջ տալով ոխին։

RIVERS.

Վկայ է երկինք, որ հոգիս զերծ է ատելութիւնից, Ձեռքով կնքում եմ ճշմարիտ սէրս։

HASTINGS.

Նոյնպէս եւ իմը, հոգովս եմ երդւում։

KING EDWARD IV.

Զգո՛յշ, չխաբէք ձեր թագաւորին, Որպէսզի բարձրեալ արքայից արքան Ձեր այդ կեղծաւոր սուտ երդման համար Մէկիդ միւսի ձեռքով չջնջի։

HASTINGS.

Թող այդպէս ջնջուեմ, եթէ թշնամի դառնամ Ռիւերսին։

RIVERS.

Թող ես կործանուեմ, եթէ չպաշտեմ յաւէտ Հեստինգսին։

KING EDWARD IV.

Թագուհի, դու էլ զերծ չես այս մեղքից, Ոչ էլ դու, Դորսետ, իմ անգին որդեակ, դու էլ, Բուկինգեմ։ Թշնամի էք եղել մէկդ միւսին։ Կի՛ն, սիրիր նրան, թոյլ տուր՝ Հեստինգսը ձեռքդ համբուրի, Հաշտուեցէք անկեղծ, ոչ թէ առերես։

QUEEN ELIZABETH.

Հաշտւում եմ, Հեստինգս. ընդմիշտ ջնջում եմ յիշողութիւնից Մեր նախկին քէնը։ Ինչ որ ձեզ ցանկամ, նոյն բախտին հասնեմ։

KING EDWARD IV.

Գրկիր նրան, Դորսետ, գգուիր մարկիզին, սիրասուն Հեստինգս։

DORSET.

Սիրոյ դաշինքն այս, երդւում եմ ի լուր, Անխախտ պահել միշտ։

HASTINGS.
Երդւում եմ եւ ես։

[They embrace.]

KING EDWARD IV.
Իշխան Բուկինգեմ, կնքիր այս ուխտը՝ Ողջագուրուելով իմ կնոջ բոլոր եղբայրների հետ, եւ երջանկացրու ինձ ձեր միութեամբ։

BUCKINGHAM.
[To the Queen.] Եթէ Բուկինգեմը ոխով համակուի Երբեւէ ձեր դէմ, բացի ամենայն ակնածու սիրով Ձեզ ծառայելուց, թող Աստուած նրան Իր ամենաթանկ բարեկամների ոխով հատուցի։ Եւ ճիշտ այն պահին, երբ բարեկամի ծայր-կարիք զգամ եւ վստահ լինեմ, որ նա՛ է միակ ընկերն անձնուէր, Թող նա դաւաճան, նենգ ու չարակամ ոսոխ դառնայ ինձ, Այս եմ խնդրում Աստծուց, Եթէ, ձեր հանդէպ կամ ձերոնց հանդէպ իմ սէրը պաղի։ Նրանք գրկախառնւում են։

KING EDWARD IV.
Քո այդ երդումը, ազնիւ Բուկինգեմ, Սփոփիչ դեղ է իմ հիւանդ սրտին։ Միայն մեր եղբայր Գլոստերն է պակաս, Որ գայ լրացնի այս հաշտութիւնը։

BUCKINGHAM.
Ազնիւ դուքսն եկաւ եւ պատեհ ժամին։

[Gloucester enters.]

GLOUCESTER.
Բարի օր արքայիս եւ իմ թագուհուն, Եւ իշխանական մեծամեծներին։

KING EDWARD IV.
Օրը, արդարեւ, բարի աւարտուեց։ Այսօր գթութեան գործ կատարեցինք, Չարը բարութեամբ եւ ոխը սիրով փոխարինեցինք Այս բարկութեամբ լի լորդերի միջեւ։

GLOUCESTER.
Դա օրհնեալ գործ է, գերագոյն տէր իմ։ Այս իշխանական շէղջի մէջ եթէ որեւէ մէկը Սուտ հասողութեամբ կամ թիւր կասկածով Ինձ համարում է իրեն թշնամի, Կամ եթէ ինքս իմ ցասման պահին կամ անգիտաբար Վիրաւորել եմ շատ դաժանօրէն Այս ներկաներից որեւէ մէկին, Ես հաշտութիւն եմ խնդրում նրա հետ։ Թշնամութիւնը մահ է ինձ համար, Ես ատում եմ այն եւ սէրն եմ տենչում բոլոր լաւ մարդկանց։ Նախ ես, թագուհի, ձեզնից եմ խնդրում անկեղծ հաշտութիւն, Որ ես կը քաւեմ ակնածու սիրով եւ ծառայութեամբ։ Ձեզնից, Բուկինգեմ, ազնիւ քեռորդի, Եթէ որեւէ ոխ է դարանել երկուսիս միջեւ։ Ձեզնից, լորդ Ռիւերս, լորդ Գրի, ձեզնից, Որ առանց հիմքի թխպել էք վրաս.

Եւ ծեզնից, դուքսեր, կոմսեր, պարոնայք, իրաւ ամէնքից։ Ես Անգլիայում չգիտեմ մի մարդ, Որին աւելի թշնամի լինեմ, Քան թէ այս գիշեր ծնուած երեխան. Փառք Աստծուն իմ այս հեզութեան համար։

QUEEN ELIZABETH.
Այս օրը իբրեւ տօն պիտի յիշուի. Երանի տէրը վերջ տայ մեր համակ հակառակութեան։ Իմ գերագոյն տէր, այժմ խնդրում եմ ձեր բարձրութիւնից, Որ ներում շնորհէք եղբայր Կլարենսին։

GLOUCESTER.
Միթէ՞, թագուհի, ես դրա համար սէր քարոզեցի, Որ արքայի մօտ այսպէս անարգուեմ։ Ո՞վ չի իմանում, որ ազնիւ դուքսը արդէն մեռած է։

[They all start in shock.]

GLOUCESTER [cont.]
Դուք անպատւում էք նրա աճիւնը։

RIVERS.
Ո՞վ չի իմանում, որ նա մեռած է։ Իսկ ո՞վ գիտէ այդ։

QUEEN ELIZABETH.
Ամենատե՛ս երկինք, այս ի՜նչ աշխարհ է։

BUCKINGHAM.
Ասէք, լորդ Դորսետ, ես է՞լ եմ գունատ միւսների պէս։

DORSET.
Այո՛, բարի տէր իմ։ Եւ չկայ մի մարդ, Որի այտերի գոյնը չթռաւ։

KING EDWARD IV.
Կլարենսը մեռա՞ծ. չէ՞ որ փոխուած էր իմ հրամանը։

GLOUCESTER.
Խեղճն առաջին հրամանով մեռաւ, Որ թեւաթռիչ մի Հերմէս բերեց. Երկրորդը բերեց մի դանդաղ բանբեր, Որ հազիւ նրա թաղմանը հասաւ։ Ես գիտեմ ոմանց, որ պակաս ազնիւ եւ հնազանդ են, - Ոչ արենակից, սակայն արնախոհ, - Եւ արժանի են առաւել պատժի, քան Կլարենսը, Բայց կասկածից զերծ ազատ շրջում են։

[Derby enters.]

DERBY.
Մի շնորհ արէք, գերագոյն տէր իմ, ի սէր անցեալիս։

KING EDWARD IV.
Լռի՛ր, իմ հոգիս տխրութեամբ է լի։

DERBY.
Ես վեր չեմ կենայ, մինչեւ չլսէք։

KING EDWARD IV.
Ուրեմն շուտ ասա, ի՞նչ է խնդրածդ։

DERBY.
Խնայիր, արքայ, ծառայիս կեանքը. Նա այսօր սպանեց մի խռովարար ազնուականի, Որ դուքս Նորֆոլկի շքախմբումն էր։

KING EDWARD IV.
Միթէ՞ այն լեզուն, որ իմ եղբորը դատապարտեց մահուան, Կարող է այժմ ստրուկի ներել։ Եղբայրս ոչ մի ոճիր չէր գործել, - Նրա յանցանքը մտացածին էր, - Բայց իր պատիժը դառնագոյն մահ էր։ Ո՞վ նրա համար ներում խնդրեց ինձնից։ Ո՞վ իմ ցասման մէջ ծունր իջաւ իմ դէմ եւ աղաչեց, որ խոհական լինեմ։ Ո՞վ եղբայրութեան անունից խօսեց։ Ո՞վ խօսեց սիրուց։ Ո՞վ պատմեց, թէ ինչպէս խեղճը, լքելով Հզօր Վորուիկին, իմ կողմը անցաւ, ինձ համար կռուեց։ Ո՞վ պատմեց, թէ ինչպէս Տեկսբուրի դաշտում. Երբ Օքսֆորդը սպառնում էր ինձ, նա կեանքս փրկեց եւ ասաց. «Ապրիր եւ արքայ եղիր, սիրելի եղբայր»։ Ո՞վ յիշեցրեց ինձ, երբ մենք երկուսով պառկած էինք դաշտում Գրեթէ ցրտահար, ինչպէս ծածկեց ինձ Նա իր հանդերձով, իսկ իրեն յանձնեց Այդպէս մերկ ու բաց՝ գիշերուայ դաժան սառնամանիքին։ Վայրագ ցասումը չարաչար պոկեց Այդ բոլորը իմ յիշողութիւնից, եւ ոչ ոք ձեզնից Մի շնորհ չարաւ յիշեցնելու այն։ Սակայն երբ որ ձեր կառապանները կամ ծառաները Յանկարծ գործում են մի արբշիռ ոճիր եւ եղծանում են Մեր անգին փրկչի ազնիւ պատկերը, Դուք անմիջապէս ծունկի էք իջնում, թէ ներէ՛ք, ներէ՛ք, Եւ հանիրաւի պէտք է ներեմ նրանց։ Իմ եղբօր համար ոչ ոք ծունկ չիջաւ, Ոչ էլ ես ինքս յիշեցի նրան, ես՝ ապերախտս, Օ՜, իմ խեղճ եղբայր։ Ձեր բոլորիդ մէջ ամէնից վեհը Ամէնից շատ է նրան պարտական. Բայց ոչ ոք ձեզնից մի խօսք չաղերսեց նրա կեանքի սիրոյն։ Օ՜, աստուա՜ծ, գիտեմ, քո դատաստանը Կ'իջնի իմ գլխին, նաեւ ձեր գլխին այդ մեղքի համար։ Գնա՜նք, լորդ Հեստինգս, ինձ սենեակս տար, Ա՛խ, խե՛ղճ Կլարենս։ Թագաւորը, թագուհին, Հեստինգսը, Ռիւերսը, Դորսետը եւ Գրին դուրս են գնում։

[The King, Queen, Hastings, Rivers, Dorset and Gray all exit.]

GLOUCESTER.
Ահա անզգոյշ գործի պտուղը։ Նկատեցի՞ր դու, Թէ ինչպէս թագուհու ազգականները խիստ գունատուեցին, երբ Կլարենսի մահուան լուրն առան։ Ի հեճուկս արքայի՝ խոնարհուեցին նրան։ Վրէժխնդիր կը լինի Աստուած դրա համար։ Չգնա՞նք, լորդեր, Էդուարդին խմբով մխիթարելու։

BUCKINGHAM.
Միշտ ծառայ ենք ձեզ։

[All exit.]

]|[

ACT II. SCENE II.

The palace. Duchess of York with the two children of Clarence enter.]

SON.

Տատիկ, մեր հայրը մեռե՞լ է, ասա՛։

DUCHESS OF YORK.

Ո՛չ, զաւակս։

DAUGHTER.

Ապա ինչո՞ւ ես այդքան շատ լալիս եւ կուրծքդ ծեծում Եւ ճչում այդպէս. «Օ՛, իմ Կլարենս, իմ անբա՛խտ որդեակ»։

SON.

Ինչո՞ւ ես այդքան խղճահարութեամբ նայում մեզ վրայ Եւ անուանում մեզ անտէրունչ որբեր, Եթէ մեր հայրը ողջ է իսկապէս։

DUCHESS OF YORK.

Իմ սիրուն թոռներ, իրաւացի չէք. Արքան հիւանդ է, դա է պատճառը իմ արտասուքի։ Նրան եմ սգում, ոչ թէ ձեր հօրը, Ի՞նչ օգուտ ողբալ մէկին, որ չկայ...

SON.

Ա՛յ, տեսա՞ր, տատիկ, ինքդ ես հաստատում, որ նա մեռած է, Եւ մեղաւորը իմ հօրեղբայրն է. Եւ ես ամէն օր աղօթքներիս մէջ կ'աղաչեմ Աստծուց, Որ նրան պատժի։

DAUGHTER.

Ես էլ կը խնդրեմ։

DUCHESS OF YORK.

Լռէ՛ք, երեխեք, թագաւորը ձեզ սաստիկ սիրում է։ Դուք փոքրիկ, անմեղ արարածներ էք։ Եւ չէք իմանում, թէ ո՞վ է ձեր հօր մահուան պատճառը։

SON.

Մենք գիտենք, տատիկ։ Ազնիւ հօրեղբայր Գլոստերն ասաց, Որ թագաւորը թագուհու դրդմամբ Հրամայել է հօրս բանտարկել, Եւ երբ պատմում էր, խեղճ հօրեղբայրս այնպէս էր լալիս Եւ խղճում էր ինձ, այտերս էր պագում. Ասում էր, որ ինձ հայրութիւն կ'անի Եւ չի տարբերի հարազատ որդուց։

DUCHESS OF YORK.

Ա՛, նենգութիւնը նա քօղարկում է ազնիւ ձեւի տակ Եւ առաքինի դիմակով ծածկում չարիքն անյատակ։ Նա իմ որդին է եւ հետեւաբար իմ նախատինքը, Բայց նենգութիւնը նա իմ մայրական կաթից չի ծծել։

SON.
Իսկ հօրեղբայրս միթէ՞ կեղծում է։

DUCHESS OF YORK.
Այո՛, իմ թոռնիկ։

SON.
Ես չեմ հաւատում։ Բայց այս ի՞նչ ձայն է։

[Queen Elizabeth, with her hair about her ears, enters, followed by Rivers and Dorset.]

QUEEN ELIZABETH.
Ա՜խ, մի խափանէք իմ լացն ու կոծը, Թողէք տանջեմ ինձ, բախտս անիծեմ։ Ես պիտի փարուեմ սեւ վհատութեանն՝ ընդդէմ իմ հոգու, Եւ իբրեւ ոսոխ՝ զինուեմ անձիս դէմ։

DUCHESS OF YORK.
Այս ի՞նչ տեսիլ է այսքան ապաժոյժ։

QUEEN ELIZABETH.
Սա սկիզբն է մեծ մի ողբերգութեան, Էդուարդս մեռաւ, մեր արքան՝ որդիդ՝ իմ ամուսինը։ Ինչո՞ւ համար են ճիւղերը ապրում, արմատն երբ չկայ, Եւ տերեւներն ինչո՞ւ չեն թօշնում, երբ զուրկ են հիւթից։ Ողբացէք, եթէ ապրել էք ուզում, Մեռնե՞լ էք ուզում, արագ վերջացրէք, Որ թեւաթռիչ մեր հոգիները արքայի հոգու հետեւից հասնեն։ Խոնարհ ստրուկներ, հետեւենք նրան Դէպի նրա նոր արքայութիւնը յաւէրժ գիշերի։

DUCHESS OF YORK.
Աւա՜ղ, քո վիշտն իմ վիշտն է նոյնպէս, Չէ՞ որ ես մայրն եմ ազնիւ ամուսնուդ։ Երբ իմ վեհափառ ամուսինը մեռաւ, Նրա պատկերը ես տեսնում էի որդիներիս մէջ, Բայց ժանտատեսիլ մահը կործանեց Իր շքեղ դէմքի երկու հայելին. Ինձ մխիթարող երրորդը մնաց՝ մի ծուռ հայելի, Որին նայելիս ես ամաչում եմ։ Թէպէտ այրի ես, սակայն մայր ես դու, Քո զաւակները սփոփանք են քեզ. Բայց մահը շորթեց իմ բազուկներից անգին ամուսնուս Եւ երկու նեցուկ կորզեց իմ տկար ձեռքերի միջից՝ Իմ Կլարենսին եւ իմ Էդուարդին։ Օ՜, վիշտս մեծ է, Քոնը իմ ցաւի կէսն է հազիւհազ, Քո ամբողջ ողբը կարող է սուզուել կսկիծներիս տակ։

SON.
Աւա՜ղ, հօրաքոյր, մեր հայրը մեռաւ, դու չարտասուեցիր, Ինչպէ՞ս կարող ենք մենք քեզ կարեկցել։

DAUGHTER.
Երբ մենք որբացանք, մի «ախ» չասացիր. Մենք էլ քեզ համար արցունք չենք թափի։

QUEEN ELIZABETH.

Ձեր օգնութիւնը ինձ հարկաւոր չէ իմ ողբի ժամին, Ես արցունքներից բնաւ ցամաք չեմ. Ինչքան աղբիւր կայ, գալիս թափւում է իմ աչքերի մէջ, Որ ես ջրարբի լուսնի զօրութեամբ Աշխարհը սուզեմ հորդ արցունքիս տակ։ Ա՛խ, իմ ամուսի՛ն, ա՛խ, անգի՛ն Էդուարդ։

BOTH CHILDREN.

Ա՛խ, մեր անգի՛ն հայր, մեր խե՛ղճ Կլարենս։

DUCHESS OF YORK.

Աւա՛ղ, իմ որդիք՝ Էդուա՛րդ, Կլարե՛նս։

QUEEN ELIZABETH.

Միակ նեցուկս Էդուարդն էր՝ չկա՛յ ...

BOTH CHILDREN.

Մեր թեւն ու թիկունքը Կլարենսն էր՝ չկա՛յ ...

DUCHESS OF YORK.

Իմ ապաւէնը նրանք էին, չկա՛ն ...

QUEEN ELIZABETH.

Երբեք չի եղել ինձ պէս դժբախտ կին։

BOTH CHILDREN.

Երբեք չեն եղել մեզ պէս խեղճ որբեր։

DUCHESS OF YORK.

Երբեք չի եղել ինձ պէս անբախտ մայր։ Վա՛յ ինձ, ես մայրն եմ այս բոլոր վշտի. Իմ ցաւն հանուր է, նրանցը՝ յատուկ. Նա հառաչում է Էդուարդի համար, ես էլ եմ ողբում, Ես արտասւում եմ Կլարենսի համար, իսկ նա չի ողբում։ Սրանք լալիս են Կլարենսի համար, ես էլ եմ լալիս։ Ես արտասւում եմ Էդուարդի համար, նրանք չեն լալիս։ Ա՛խ, դուք երեք էք, ցաւս՝ եռակի, Օ՛, արտասուեցէ՛ք, ես դայակն եմ ձեր բոլորի վշտի Եւ կը խճողեմ ձեր ապաշաւը ահեղ ողբերով։

DORSET.

Հանդարտուիր, մայր իմ. մեղք է տրտնջալ Աստծոյ գործի դէմ. Այս երկրի վրայ ապերախտ է նա, Ով դժկամութեամբ վերադարձնում է այն անգին պարտքը. Որ շռայլ ձեռքով տրուած է իրեն։ Առաւելապէս կարելի բան չէ վիճել երկնքի հետ, Քանզի նա իր պերճ պարգեւն է ուզում, որ քեզ շնորհեց։

RIVERS.

Լսէք, թագուհի, մայրաբար խորհէք Մանուկ իշխանի՝ ձեր որդու մասին։ Շուտ կանչէք նրան, Թող

թագադրուի. նա է ձեր յոյսը։ Ձեր վիշտը թաղէք մեռած Էդուարդի գերեզմանի մէջ, Ձեր խինդն հաստատէք Էդուարդի գահին, որ ողջ է հիմա։

[Gloucester, Buckingham, Derby, Hastings and Ratcliff all enter.]

GLOUCESTER.
Հանդարտուիր, քոյր իմ, ամենքս էլ պատճառ ունենք ողբալու՝ Մեր պայծառ աստղի աղօտացումը։ Սակայն լացով չէ վիշտը ամոքւում։ Տիրուհի, մայր իմ, ներիՙր, խնդրում եմ, Ես քեզ չտեսայ։ Խոնարհ ծունր իջած՝ Տես, թախանձում եմ քո օրհնութիւնը։

DUCHESS OF YORK.
Աստուած օրհնէ քեզ. սէՙր, կարեկցութիՙւն, Հնազանդութիւն եւ անկեղծութիւն ներշնչէ հոգուդ։

GLOUCESTER.
[Aside.] Ամէն, եւ ապրեմ մինչեւ խոր հասակ, Այդ է ամեն մօր փափագը վերջին. Ապշում եմ, որ նա այդ մասին չասաց։

BUCKINGHAM.
Տրտում իշխաններ եւ աւագանի, Որ այս ընդհանուր սուգի բեռան տակ հեւում էք այդպէս, Ցնծացէք այժմ փոխադարձ սիրով. Թէպէտ մահը մեր արքային հնձեց, Բայց որդու հունձը մենք կը ժողովենք։ Ձեր այդ երկպառակ, գոռոզ սրտերի ոխը փշրուեց, Նրանք վերջերս ի մի զօդուեցին բարեկամութեամբ, Մեր պարտքն է այժմ խնամքով պահել եւ փայփայել այն։ Առաջարկում եմ մի շքախմբով, փոքրիկ, ի հարկէ, Լուդլոյից բերել մանուկ իշխանին Եւ Լոնդոնի մէջ արքայ կարգել մեզ։

RIVERS.
Իսկ ինչո՞ւ փոքրիկ։

BUCKINGHAM.
Միթէ՞ պարզ չէ, կոմս։ Երբ մեծ ամբոխ կայ, Հազիւ ամոքուած վէրքը կարող է պայթել աղէտով, Որը դառնում է խիստ վտանգաւոր միայն այն դէպքում, Երբ երկիրը դեռ ղեկավար չունի եւ երերուն է. Որտեղ ամէն ձի՝ ինքն իր սանձին տէր, Պատրաստ է ուզած ուղղութեամբ սուրալ։ Ուստի կարծում եմ՝ մենք պարտաւոր ենք Կանխելու ամէն երկիւղ ու չարիք։

GLOUCESTER.
Մեզ թագաւորը հաշտեցրեց միմեանց, Անխախտ կը պահեմ ես այդ դաշինքը։

RIVERS.
Ես էլ կը պահեմ, բոլորս էլ, կարծեմ. Բայց քանի որ մեր դաշինքը թարմ է, մենք պարտաւոր ենք Այն պահպանելու ամէն ճեղքուածքից, Որը կարող է առկայ լինել մեծ բազմութեան դէպքում։ Ահա թէ ինչու ես համամիտ եմ դուքս Բուկինգեմին, Որ փոքրիկ խմբով բերենք իշխանին։

HASTINGS.
Ես էլ յօժար եմ։

GLOUCESTER.
Թող այդպէս լինի։ Գնանք որոշենք, թէ ովքեր պէտք է Առաքուեն Լուդլոյ։ Տիկին եւ մայր իմ, չէ՞ք կամի արդեօք Մեզ ձեր խորհրդով օգնել այդ գործում։

QUEEN ELIZABETH and THE DUCHESS OF YORK.
Ի սրտէ կ'ուզենք։

[All but Buckingham and Gloucester exit.]

BUCKINGHAM.
Ում էլ ուղարկենք թագաժառանգի հետեւից, տէր իմ, Ի սէր Աստծոյ, մեր երկուսին էլ արտօնէք գնալ։ Քանզի ուզում եմ ես ճանապարհին մի միջոց խորհել, - Ի կատարումն մեր նախկին ծրագրի, - Որ անջրպետեմ թագուհու ցեղը մանուկ իշխանից։

GLOUCESTER.
Օ՜, իմ երկրորդ անձ, իմ խորհրդարան, Իմ պատգամախօս եւ իմ մարգարէ։ Իմ անգի՜ն եղբայր, Մանկան պէս կը գամ ես քո հետեւից։ Արդ, դէպի Լուդլոյ, յապաղել պէտք չէ։

[They exit.]

]|[

ACT II. SCENE III.

London. A street. Two Citizens enter.

CITIZEN I.

Բարեւ, հարեւան, ո՞ւր ես շտապում։

CITIZEN II.

Ճշմարիտն ասած՝ ինքս էլ չգիտեմ։ Նոր բան լսե՞լ ես։

CITIZEN I.

Այո՛, արքան մեռել է։

CITIZEN II.

Շատ տխաճ լուր է։ Լաւ բան չսպասես, Ես վախենում եմ՝ կեանքը վատանայ։

[Citizen III enters.]

CITIZEN III.

Բարեւ, դրացիք։

CITIZEN I.

Բարի լոյս, պարոն։

CITIZEN III.

Ճի՞շտ է, որ Էդուարդ արքան մեռել է։

CITIZEN II.

Աւա՜ղ, շատ ճիշտ է։ Մեր տէրն է Աստուած։

CITIZEN III.

Աշխարհիս բանը բուրդ է ուրեմն։

CITIZEN I.

Աստուած բարի է, իր որդին կ'իշխէ։

CITIZEN III.

Եղո՜ւկ այն երկրին, որի տէրն է մանուկ։

CITIZEN II.

Տէրութեան յոյսը նրա վրայ է. Քանի դեռ փոքր է, մեծերը կ'օգնեն, Իսկ երբ մեծանայ, ինքը կը սկսի ինքնուրոյն իշխել։ Է՜, վնաս չկայ, կարծում եմ՝ կարգի կը գայ ամէն ինչ։

CITIZEN I.
Այդպէս եղաւ նաեւ Հենրի Վեցերորդ թագաւորի հետ. Ինն ամսական էր, երբ որ Փարիզում արքայ կարգեցին։

CITIZEN III.
Միթէ՞ այդպէս էր։ Ո՛չ, բարեկամներ, Այն տարիներին մեր երկիրն ունէր Բանագէտների մի լրջմիտ խորհուրդ, իսկ արքան ունէր Իր մէջքին կանգնած ողջախոհ, ազնիւ, քաջ հօրեղբայրներ։

CITIZEN I.
Սա նոյնպէս ունի թէ՛ իր հօր կողմից եւ թէ՛ մօր կողմից։

CITIZEN III.
Երանի բոլորը հօր կողմից լինէր, Կամ թէ հօր կողմից ոչինչ չունենար, Չէ՞ որ պայքարը առաջնութեան համար Մեզ է դիպչելու առաւելապէս, եթէ Աստուածը չխափանի այն։ Դուքս Գլոստերը խիստ վտանգաւոր եւ խորամանկ է. Թագուհու որդիք եւ եղբայրները՝ բարձրամի՛տ, գոռո՛զ, Նրանց պէտք է զսպել. միայն այդ դէպքում Դժբախտ երկիրն այս առաջուայ նման շունչ կ'առնի ազատ։

CITIZEN I.
Վախենալ պէտք չէ, ամէն ինչ լաւ կը լինի։

CITIZEN III.
Երկինքն ամպելիս վերարկու հագիր, Երբ վայր են թափւում մեծ սաղարթները, ձմեռը մօտ է. Երբ արեւը մտաւ, գիշերն է գալիս, Անժաման հողմը սով է գուշակում։ Ամէն ինչ լաւ կը լինի, թէ Աստուած օգնեց, Բայց դրան չարժենք, ոչ էլ յոյս ունեմ։

CITIZEN II.
Մարդկանց սրտերը երկիւղով են լի, Եւ չկայ մէկը, Որ չսարսափի այս արհաւիրքից։

CITIZEN III.
Ցնցումից առաջ միշտ այդպէս է լինում, Մարդկային միտքը երկնային բնազդով Զգում է վտանգը. այդպէս էլ ահա Ջրերն են ուռչում փոթորկից առաջ, Մեր տէրն է Աստուած։ Դուք ո՞ւր էք գնում։

CITIZEN II.
Միթէ՞ չգիտես, ատեան ենք կանչուած։

CITIZEN III.
Ես էլ եմ կանչուած։ Գնանք միասին։

[All exit.]

ACT II. SCENE IV.

London. The palace. Archbishop of York enters with Queen Elizabeth, the Duchess of York and her son.

ARCHBISHOP.

Նորթեմպտոնում են երեկ գիշերել, Այսօր կը հասնեն Ստոնի-Ստրետֆորդ, Վաղը - միւս օր այստեղ կը լինեն։

DUCHESS OF YORK.

Ի սրտէ կ'ուզեմ իշխանին տեսնել, Նա հիմա անշուշտ շատ է մեծացել։

QUEEN ELIZABETH.

Այդպէս չեմ լսել։ Նրանք ասում են, թէ կրտսեր որդին Նրանից աւելի արագ է աճում։

YOUNG YORK.

Այդ ճիշտ է, տատիկ, բայց երանի թէ այդպէս չլինէր։

DUCHESS OF YORK.

Իսկ ինչո՞ւ, թոռնիկ, աճելը լաւ է։

YOUNG YORK.

Տատիկ, մի անգամ ընթրիքի վրայ Քեռի Ռիւերսը նկատեց, որ ես Աւելի բարձր եմ, քան թէ եղբայրս։ «Այո, - հօրեղբայր Գլոստերն ասաց, - Մանր ծաղկունքը ուշ է կանաչում, Իսկ անպէտք խոտը արագ է աճում»։ Չէի կամենայ բոյ քաշել այդպէս, Այլ՝ դանդաղ աճել անուշ ծաղկի պէս։

DUCHESS OF YORK.

Բայց, դժբախտաբար, այդ նոյն առածից Ինքը շեղւում է։ Երբ երեխայ էր, մի վտիտ բան էր, Շատ վատ էր աճում եւ այնքան դանդաղ, Որ հիմա պէտք է, ըստ իր կանոնի, բարի մարդ լինէր։

ARCHBISHOP.

Եւ նա, անկասկած, այդպիսի մարդ է։

DUCHESS OF YORK.

Հնարաւոր է, բայց ես վստահ չեմ։

YOUNG YORK.

Ափսո՜ս, մոռացայ. եթէ յիշէի, Ես նրա մասին մի խօսք կ'ասէի Իբրեւ պատասխան իր այդ առածին։

DUCHESS OF YORK.

Ի՞նչ կ'ասէիր, Եորք, խնդրում եմ, ասա։

YOUNG YORK.
Ասում են, որ նա ծնուելուց ուղիղ երկու ժամ յետոյ Սկսել է հացի չորուկը կրծել, Մինչդեռ ես երկու տարի ապրել եմ առանց ատամի։ Ա՜յ թէ ինչպիսի սուր խօսք կ՚ասէի։

DUCHESS OF YORK.
Ո՞վ է քեզ ասել։

YOUNG YORK.
Նրա դայակը։

DUCHESS OF YORK.
Նրա դայակը՞։ Դու ծնուած չէիր, երբ նա մեռել է։

YOUNG YORK.
Ուրեմն չեմ յիշում, թէ ով է ասել։

QUEEN ELIZABETH.
Շատախօս մանուկ, չար ես երեւում։

ARCHBISHOP.
Օ՜, մի բարկացիր վրան, թագուհի։ Դեռ երեխայ է։

QUEEN ELIZABETH.
Պատերն ականջ ունեն։

ARCHBISHOP.
Ահա մի բանբեր։

[Messenger enters.]

ARCHBISHOP [cont.]
Ի՞նչ լուր ես բերել։

MESSENGER.
Այնպիսի մի լուր, որ ինձ համար խիստ ցաւ է հաղորդել։

QUEEN ELIZABETH.
Իշխանն ինչպէ՞ս է։

MESSENGER.
Առողջ է, տիկին։

DUCHESS OF YORK.
Հապա ի՞նչ լուր է։

MESSENGER.
Իշխան Ռիւերսը, նաեւ լորդ Գրին եւ Թոմաս Վոգեն ձերբակալուած են եւ տարուած Պոմֆրետ։

DUCHESS OF YORK.
Ո՞վ է բանտարկել։

MESSENGER.
Դուքս Գլոստերը եւ Բուկինգեմը։

QUEEN ELIZABETH.
Ի՞նչ մեղքի համար։

MESSENGER.
Ինչ որ գիտէի, յայտնեցի լրիւ։ Թէ ինչու համար ձերբակալուած են, Այդ անյայտ է ինձ։

QUEEN ELIZABETH.
Վա՜յ ինձ, ես մեր տան անկումն եմ տեսնում։ Ամեհի վագրը յափշտակել է քնքուշ այծեամին։ Վայրագ չարիքը սկսում է սիգալ Անմեղ, անպաշտպան մեր գահի վրայ։ Ե՜կ, ով կործանում, արիւն եւ ոճիր, Ես պարզ տեսնում եմ այժմ ամէն ինչ։

DUCHESS OF YORK.
Նզովեա՜լ, խառնա՜կ, դաւադիր օրեր, Քանիսին տեսաւ աչքս ձեզանից. Ամուսինս զոհուեց թագի ձգտելիս, Որդիքս վեր ու վար նետուեցին յաճախ՝ Ի խինդ իմ սրտի եւ ի կսկիծ ինձ։ Հազիւ հանդարտուեց թշնամութիւնը, Ծայր առան ներքին խռովութիւններ, նուաճողները Իրար դէմ ելան, եղբայրն եղբօր դէմ, Արիւն արեան դէմ եւ անձ անձի դէմ։ Օ՜, դու տարադէպ Մոլի բռնութիւն, զսպիր անիծեալ կատաղութիւնդ։ Մեռնելը լաւ է, քան անվերջ տոկալ արիւն ու անկում։

QUEEN ELIZABETH.
Եկ գնանք, որդեակ եւ մտնենք տաճար։ Մնացէք բարի։

DUCHESS OF YORK.
Ես էլ եմ գալիս։

QUEEN ELIZABETH.
Դուք պատճառ չունէք։

ARCHBISHOP.

[To the Queen.] Այո, գնացէք, ազնիւ տիրուհի, Բայց վերցրէք ձեզ հետ ձեր ամբողջ գանձը։ Ուզում եմ յանձնել Ձեզ այն կնիքը, որ մօտս եմ պահում։ Թող բարձրեալ տէրը Ինձ օգնի այնպէս, ինչպէս ինքս՝ ձեզ։ Դէ, գնանք տաճար, ես ձեզ կ՚ուղեկցեմ։

[All exit.]

][][

ACT III. SCENE I.
London. A street. Young Prince Edward, Gloucester, Buckingham, The Cardinal and Catesby all enter.

BUCKINGHAM.
Բարի եկար, իշխան, քո արքայանիստ քաղաքը՝ Լոնդոն։

GLOUCESTER.
Օ՛, բարի եկար, իմ եղբօրորդի, մտքիս տիրակալ։ Տրտում տեսք ունես, ճամփին յոգնեցի՞ր։

PRINCE EDWARD.
Օ՛, ոչ, հօրեղբայր, թէեւ իսկապէս ճամփան դժուար էր, երկար, տաղտկալի։ Պատճառն ուրիշ է։ Ինչո՞ւ իմ բոլոր հօրեղբայրները այստեղ ներկայ չեն։

GLOUCESTER.
Անուշիկ իշխան, անմեղ հասակդ Դեռ խորամուտ չէ մեր այս աշխարհի նենգութիւններին։ Դու մարդու մասին կարող ես դատել Լոկ նրա տեսքով, որն, Աստուած գիտէ, Թէ որքան յաճախ ներհակ է սրտին։ Քո այդ ցանկալի հօրեղբայրները վտանգաւոր են։ Դու, նրանց մեղրոտ խօսքերով արբած, Դեռ նրանց սրտի թոյնը չես տեսած։ Թող Աստուած փրկէ քեզ բոլոր այդ նենգ բարեկամներից։

PRINCE EDWARD.
Աստուած փրկէ ինձ նենգ բարեկամի՞ց, նրանք նենգ չէին։

GLOUCESTER.
Իշխան, Լոնդոնի քաղաքապետը ողջոյնի եկաւ։

[The Lord Mayor of London enters with a procession.]

LORD MAYOR.
Աստուած օրհնի ձեզ եւ երկար օրեր բախտաւոր դարձնի։

PRINCE EDWARD.
Շնորհակալ եմ, միլորդ։ Բոլորից նոյնպէս։ Քաղաքապետը եւ շքախումբը ետ են քաշւում։ Ես կարծում էի, որ իմ մայրիկը եւ Եորք եղբայրս Մեզ պէտք է վաղուց դիմաւորէին։ Օ՛, այս Հեստինգսը ինչ դանդաղկոտ է, ինչո՞ւ չի գալիս, Որ մի լուր բերի՝ գալո՞ւ են, թէ՞ ոչ։

BUCKINGHAM.
Ահա նա եկաւ սաստիկ քրտնաթոր։

[Hastings enters.]

PRINCE EDWARD.
Բարի եկար, լորդ։ Մայրս գալի՞ս է։

HASTINGS.
Թէ ինչ առիթով, - Աստծուն է յայտնի, - Թագուհին՝ մայրդ, եւ եղբայր Եորքը Սուրբ տաճար մտան։ Մանուկ իշխանը Ուզում էր ինձ հետ ձեզ տեսութեան գալ, Մայրը չթողեց։ Բռնի արգելեց։

BUCKINGHAM.
Խիստ տարօրինակ եւ ապօրէն է Իր այդ վարմունքը։ Դուք, լորդ կարդինալ, չէ՞ք կամի արդեօք Համոզել նրան, որ Եորքի դուքսը պարտաւոր է գալ Արքունի իշխան եղբօր տեսութեան։ Դուք էլ, լորդ Հեստինգս, գնացէք իր հետ, Եթէ մերժի գալ, կորզեցէք դքսին մօր խանդոտ գրկից։

CARDINAL.
Իմ լորդ Բուկինգեմ, եթէ իմ տկար ճարտասանութեամբ Կարենամ դքսին մօր գրկից կորզել, Նրան անյապաղ այստեղ կը բերեմ։ Բայց եթէ մայրը անտարբեր մնաց Խոնարհ խնդրանքիս, քաւ լիցի, մեր սուրբ Ապաստարանի կարգը խանգարել։ Թէկուզ այս ամբողջ երկիրը ինձ տան, Այդպիսի ծանր յանցանք չեմ գործի։

BUCKINGHAM.
Դուք շատ անբան էք եւ յամառ, տէր իմ, Սաստիկ ծիսասէր եւ աւանդապահ։ Մեր ժամանակի ոգով դատեցէք. Յանցանք չէ նրան տաճարից հանել։ Սուրբ ապաստանի պաշտպանութեանը նրանք են դիմում, Որ իրենց վարքով արժանի են դրան, Նաեւ այն մարդիկ, որ կամենում են զգոյշ թաքնուել։ Մինչդեռ իշխանը բնաւ պէտք չունի պատսպարուելու, Ուստի այդ վայրը նրա տեղը չէ։ Նրան բերելով՝ դուք չէք խախտելու Սուրբ ապաստանի օրէնքն ու կարգը։ Յաճախ եմ լսել, որ մարդիկ այնտեղ պատսպարւում են, Բայց մանուկների մասին չեմ լսել։

CARDINAL.
Տէր իմ, դուք այժմ ինձ համոզեցիք. Գնանք, լորդ Հեստինգս։ Կամի՞ք ինձ հետ գալ։

HASTINGS.
Պատրաստ եմ, տէր իմ։

PRINCE EDWARD.
Փութացէք, լորդեր, եւ շուտ ետ դարձէք։

[Hastings and the Cardinal exit.]

PRINCE EDWARD [cont.]
Ասա, հօրեղբայր, երբ եղբայրս գայ, Մինչ թագադրուելը ո՞ւր պիտի ապրենք։

GLOUCESTER.

Այդ իշխանական ձեր կամքն է արդէն։ Իմ խորհուրդն այն է, որ մէկ-երկու օր Դուք Բերդում մնաք, Իսկ այնուհետեւ՝ որտեղ կամենաք կամ որտեղ յարմար եւ առողջարար մի շէնք կը գտնէք ապրելու համար։

PRINCE EDWARD.

Ոչ մի շինութիւն այնպէս չեմ ատում, ինչպէս այդ Բերդը։ Յուլիոս Կեսարն է շինել, այնպէս չէ՞։

BUCKINGHAM.

Նա, ազնիւ իշխան, լոկ հիմքը դրեց, Բայց այն աւարտուեց շատ դարեր յետոյ։

PRINCE EDWARD.

Այդպէս գրուա՞ծ է, թէ՞ հին զրոյց է, Որ նա է շինել։

BUCKINGHAM.

Գրուած է, տէր իմ։

PRINCE EDWARD.

Իսկ եթէ, միլորդ, գրուած չլինէր, Ճշմարտութիւնը, կարծում եմ, դարձեալ դարեդար կ'անցնէր Սերնդեսերունդ, Մինչեւ վերջնագոյն օրը աշխարհի։

GLOUCESTER.

[Aside.] Երբ մանուկները շատ խելացի են, երկար չեն ապրում։

PRINCE EDWARD.

Ի՞նչ ես ասում, հօրաք։

GLOUCESTER.

Ասում եմ՝ փառքը առանց գրի էլ երկար է ապրում։ [Aside.] Թագաւորի հին խեղկատակի պէս Իմ ամէն բառը սուր է երկսայրի։

PRINCE EDWARD.

Յուլիոս Կեսարը փառաւոր մարդ էր. Նա քաջութեան մէջ փայլում էր խելքով, Եւ նրա խելքով անմահացան այդ քաջութիւնները։ Այդ մեծ յաղթողին մահը չի յաղթի, Քանզի նա այժմ ապրում է փառքով, թէպէտ մեռած է։ Ձեզ մի բան կ'ուզեմ ասել, լորդ Բուկինգեմ...

BUCKINGHAM.

Ի՞նչ է, իշխան իմ։

PRINCE EDWARD.

Երբ որ մեծանամ, Կա՛մ Ֆրանսիայից ես ետ կը խլեմ մեր հին հողերը, Կա՛մ թէ քաջաբար կ'ընկնեմ

կռուի մէջ։

GLOUCESTER.
[Aside.] Վաղամուտ գարնան ամառը կարճ է ...

[Young York, Hastings and the Cardinal all re-enter.]

BUCKINGHAM.
Ահա դուքս Եորքը։

PRINCE EDWARD.
Ռիչարդ, եղբայր իմ, ինչպէ՞ս ես, անգին։

YOUNG YORK.
Լաւ եմ, գերագոյն։ Ես պէտք է այժմ քեզ այդպէս կոչեմ։

PRINCE EDWARD.
Այո՛, եղբայր իմ, ի ցաւ երկուսիս, Արդէն չկայ նա, որ կարող էր այդ տիտղոսը կրել, Եւ այդ տիտղոսն էլ առաջուանը չէ, երբ նա մեռել է։

GLOUCESTER.
Ինչպէ՞ս է դուքսը, իմ եղբօրորդին։

YOUNG YORK.
Շնորհակալ եմ, ազնիւ հօրեղբայր։ Դու ասում էիր, Որ անպէտք խոտը արագ է աճում, Տես, իշխանն ինձնից բարձր է հասակով։

GLOUCESTER.
Այո՛, նա բարձր է...

YOUNG YORK.
Ուրեմն անպէ՞տք է։

GLOUCESTER.
Այդպէս չեմ ասել։ Չէի յանդգնի։

YOUNG YORK.
Ուրեմն նա է շատ պարտական քեզ։

GLOUCESTER.
Նա գերագոյնս է, ես՝ նրա ծառան, Իսկ դու մօտ ես ինձ իբրեւ ազգական։

YOUNG YORK.
Նուիրիր, խնդրեմ, այդ դաշոյնը ինձ։

GLOUCESTER.
Դաշո՞յնս, վերցրո՛ւ։

PRINCE EDWARD.
Ա՛խ դու, մուրացկան։

YOUNG YORK.
Աննշան բան է, Ուստի չի ցաւում ինձ տալու համար։

GLOUCESTER.
Պատրաստ եմ աւելի մեծ նուէր տալու։

YOUNG YORK.
Աւելի մեծը՞։ Քո սուրը կը տա՞ս։

GLOUCESTER.
Ափսո՛ս, շատ ծանր է. թէ ոչ՝ կը տայի։

YOUNG YORK.
Արդէն տեսնում եմ, որ թեթեւ ընծան դիւրին ես տալիս, Ծանրը մերժում ես։

GLOUCESTER.
Բայց սուրս ծանր է, չես կարող կրել։

YOUNG YORK.
Դրանից ծանրը կարող եմ կրել։

GLOUCESTER.
Իրա՞ւ կ'ուզէիր իմ սուրը կապել, մատնաչափ իշխան։

YOUNG YORK.
Այո՛, կ'ուզէի, որ ձեզ պարտական լինեմ այդ կոչմամբ։

GLOUCESTER.
Ինչպէ՞ս։

YOUNG YORK.
Մատնաչափի պէս։

PRINCE EDWARD.
Եորքի դուքսը միշտ այդպէս խիզախ է, Սիրով էք նրան տանում, հօրեղբայր։

YOUNG YORK.
Ուզում ես ասել՝ հանդուրժում է ինձ, ոչ թէ շալակում։ Տեսա՞ր, հօրեղբայր, ինչպէս է ծաղրում իմ եղբայրը մեզ։ Փոքր եմ կապկի պէս, Ուստի կարծում է, ինձ կը շալակես։

BUCKINGHAM.
(Առանձին՝ Հեստինգսին։) Ի՜նչ սուր է խօսում։ Նա ինքը իրեն ճարտար հեգնում է, Որ չափաւորի հօրեղբօրն ուղղած սոսկալի ծաղրը։ Այսքան դեռահաս եւ այսքան խելօք՝ շատ զարմանք բան է։

GLOUCESTER.
Չէ՞ք բարեհաճի առաջանալ, տէր իմ։ Բուկինգեմի հետ Ես հիմա պէտք է գնամ մօրդ մօտ՝ խնդրելու նրան, Որ Բերդի առաջ դիմաւորի ձեզ։

YOUNG YORK.
Ինչպէ՞ս, իշխան իմ, Բե՞րդ պիտի երթանք։

PRINCE EDWARD.
Իմ հոգաբարձու հօրեղբօր կամքն է։

YOUNG YORK.
Ես Բերդում հանգիստ քնել չեմ կարող։

PRINCE EDWARD.
Ինչի՞ց է վախդ։

YOUNG YORK.
Հօրեղբայր Կլարենսի զայրացած ոգուց։ Տատս ինձ պատմեց, որ Բերդի մէջ են նրան սպանել։

PRINCE EDWARD.
Մեռած հօրեղբօրից ես չեմ վախենում։

GLOUCESTER.
Ոչ էլ նրանցից, որ կենդանի են։

PRINCE EDWARD.
Հօրեղբայրներս քանի դեռ ողջ են, ես երկիւղ չունեմ։ Բայց գնանք, եղբայր, վշտալի սրտով Նրանց

յիշելով՝ մեկնենք դէպի Բերդ։

[All exit save Gloucester, Buckingham and Catesby.]

BUCKINGHAM.
Ի՞նչ էք կարծում, լորդ, խորամանկ մայրը Շատախօս մանկանն արդեօք չի՞ դրդել Ձեզ լկտի ծաղրել, անարգել այդքան։

GLOUCESTER.
Օ՜, անշո՜ւշտ, անշո՜ւշտ։ Յանդուգն լակոտ է, Շաղակրատ, ճարպիկ, խելօք, խորամանկ, Իսկ եւ իսկ մայրն է՝ գագաթից կրունկ։

BUCKINGHAM.
Լա՛ւ, թողնենք նրանց։ Եկ այստեղ, Քետսբի, Դու երդուել ես մեր գործին աջակցել Եւ մեր խորհուրդը խիստ գաղտնի պահել։ Մեր ծրագիրը քեզ ճանապարհին արդէն պարզեցինք. Դու ի՞նչ ես կարծում, հնարաւոր չէ՞ Համամիտ դարձնել մեզ լորդ Հեստինգսին, Եւ բարեհռչակ այս ազնիւ դքսին Մեր արքայական գահին բարձրացնել։

CATESBY.
Ի սէր արքայի, նա այնքան բուռն է սիրում իշխանին, Որ նրա հանդէպ երբեք չի զինուի։

BUCKINGHAM.
Իսկ լորդ Ստենլի՞ն. ինչպէ՞ս ես կարծում։

CATESBY.
Նա նոյնը կ'անի, ինչ որ Հեստինգսը։

BUCKINGHAM.
Լաւ, բաւական է. գնա՛, Քետսբի, Եւ հեռուից փորձիր դու լորդ Հեստինգսին. Տես՝ ինչ աչքով է մեր գործին նայում, Իսկ վաղը նրան Բերդ հրաւիրիր, Ասա՝ խորհուրդ կայ թագադրման առթիւ։ Եթէ նկատես, որ նա մեր հանդէպ բարեհամբոյր է, Քաջալերիր նրան, պարզիր մեր հիմքը։ Իսկ եթէ սառն է, կապարի պէս պինդ, սաստիկ անյօժար, Դու էլ այդպէս եղիր։ Զրոյցն ընդհատիր Եւ հաղորդիր մեզ, թէ նա ինչպիսի ախորժակ ունի։ Վաղը առանձին երկու խորհուրդ ենք մենք գումարելու. Դու այնտեղ կարեւոր դեր պիտի խաղաս։

GLOUCESTER.
Նաեւ ողջոյնս լորդ Վիլեամին տար, պատմիր, Քետսբի, Որ վաղը նրա թշնամիները Պոմֆրետ ամրոցում պիտի գլխատուեն։ Եւ ասա նրան, թող այս ցնծագին լուրերի համար Նա տիկին Շոռին մէկ էլ համբուրի։

BUCKINGHAM.
Գնա, շուտ արա՝ ինչ որ ասացինք, ազնիւ Քետսբի։

CATESBY.
Կը փութամ, որքան հնարաւոր է։

GLOUCESTER.
Գուցէ այս գիշեր մեզ լո՞ւր կը բերես։

CATESBY.
Այո՛, բարի լորդ։

GLOUCESTER.
Կը գաս Կրոսբի, մենք այնտեղ կը լինենք։

[Catesby exits.]

BUCKINGHAM.
Ասէք, իշխան իմ, ի՞նչ ենք անելու, Եթէ Հեստինգսը մեր կողմը չանցաւ։

GLOUCESTER.
Գլուխը կը կտրենք, կը պատժենք անշուշտ։ Տե՛ս, չմոռանաս, երբ արքայ դառնամ, ինձնից պահանջիր Հերֆորդ գաւառը՝ շարժական կայքով, Որին տիրում էր արքայ եղբայրս։

BUCKINGHAM.
Ես այդ խոստումը ձեզ կը յիշեցնեմ։

GLOUCESTER.
Ինչ խոստացել եմ, բոլորը՛ կը տամ։ Եկ հիմա ընթրենք, Յետոյ այդ մասին երկար կը խօսենք։

[Both exit.]

][][

ACT III. SCENE II.

Before Lord Hastings' house. Messenger enters and knocks on door.

MESSENGER.

Տէ՛ր իմ, տէ՛ր իմ։

HASTINGS.

[From inside.] Այդ ո՞վ է բախում։

MESSENGER.

Ինձ լորդ Ստենլին ձեզ մօտ ուղարկեց։

HASTINGS.

Ժամը քանի՞սն է։

MESSENGER.

Չորսը զարկել է։

[Hastings enters.]

HASTINGS.

Տէրդ, երեւի, գիշերը չի քնում։

MESSENGER.

Այո՛, իմ բերած լուրի համեմատ։ Նա նախ եւ առաջ ձեզ բարեւում է։

HASTINGS.

Իսկ յետո՞յ, յետո՞յ։

MESSENGER.

Յետոյ ասում է, որ այս գիշերը երազ է տեսել. Մի ամեհի կինճ իր սաղաւարտը պոկել է գլխից։ Բացի այդ, ասաց, գումարուելու է այսօր երկու նիստ, Վախենում է, որ մէկի վճիռը Յաջորդ նիստի մէջ աղէտով պայթի երկուսիդ գլխին, Դրա համար էլ խնդրում է, որ դուք շտապ ձի հեծնէք եւ դէպի հիւսիս սլանաք իր հետ, Որ իր գուշակած վտանգից խոյս տաք։

HASTINGS.

Շուտ վերադարձիր դու քո տիրոջ մօտ Եւ ասա նրան, որ չվախենայ այդ երկու նիստից։ Մէկին ես եւ նա պիտի մասնակցենք, Իսկ միւս նիստին՝ իմ բարեկամը՝ ազնիւ Քետսբին։ Մեր մասին ինչ էլ որ խօսեն այնտեղ, իսկոյն կ'իմանամ. Ասա, որ նրա երկիւղն անհիմն է։ Գալով երազին՝ զարմանում եմ, որ նա հաւատում է Անհանգիստ քնի խեղկատակութեանց. Կինճից փախչելը, երբ նա անշարժ է, Կը նշանակէ գրգռել, որ նա յարձակում գործի, Որ իզուր տեղը որսի գնանք իր դէմ։ Գնա, տիրոջդ ասա՝

մօտս գայ, Բերդ տանեմ իրեն, որ անձամբ տեսնի, Թէ այդ վարազը որքան բարի է վերաբերւում մեզ։

MESSENGER.
Ինչ որ ասացիք, կը յայտնեմ նրան։

[As the Messenger exits Catesby enters.]

CATESBY.
Հազար բարի լոյս իմ ազնիւ լորդին։

HASTINGS.
Բարեւ, Քետսբի, վաղ ես վեր կացել, Ի՞նչ լուրեր ունես մեր այս երերուն տէրութեան մասին։

CATESBY.
Իրաւ, այս երկիրը վեր ու վար է լինում Եւ չի հանդարտուի, Մինչեւ Ռիչարդը պսակ չկապի։

HASTINGS.
Ինչպէ՞ս, պսակը՞, թա՞գն ես ակնարկում։

CATESBY.
Այո՛, բարի տէր։

HASTINGS.
Այս գլուխը կ'առնեմ իմ ուսերից ցած, Նախքան մեր թագը տեսնեմ անարգուած։ Միթէ՞ կարծում ես՝ աչք ունի թագին։

CATESBY.
Այո՛, երդւում եմ, եւ յոյս է տածում, Որ դուք կ'աջակցէք նրան այդ գործում։ Նա յղել է ձեզ այս բարի լուրը. Այսօր ձեր բոլոր թշնամիները՝ Թագուհու ցեղը, պիտի գլխատուի Պոմֆրետ ամրոցում։

HASTINGS.
Իրաւ, այդ լուրը ուրախալի է, Նրանք շարունակ թշնամի են մեզ, Սակայն Ռիչարդին կուսակից դառնալ, Դաւել արքային եւ գահը շորթել ստոյգ ժառանգից, Երկինքը վկայ, ես այդ չեմ անի, քանի դեռ ողջ եմ։

CATESBY.
Թող տէրը անխախտ պահի ձեր ազնիւ մտադրութիւնը։

HASTINGS.
Մէկ տարի յետոյ ես կը ծիծաղեմ, Թէ ինչպէս նրանք, որ դրդում էին արքային իմ դէմ, Ոչնչացել են ողբալի մահով։ Լսիր, Քետսբի, հազիւ մէկ-երկու շաբաթ բոլորած՝ Ես մի քանիսին ճամփու կը դնեմ ...

CATESBY.
Օ՛, դժուար բան է մեռնել, իշխան իմ, Մեղքը չքաւած եւ անպատրաստի։

HASTINGS.
Օ՛, սոսկալի է, անչափ սոսկալի. այդպէս պատահեց Ռիւերսի, Գրու եւ Վոգենի հետ։ Այդպէս կը մեռնեն Նաեւ շատերը, որ ապահով են համարում իրենց. Ինչպէս դու եւ ես, որ սիրելի ենք Ռիչարդ իշխանին եւ Բուկինգեմին։

CATESBY.
Այդ երկու դուքսն էլ ձեզ շատ են յարգում ... [Aside.] Քանզի գլուխդ ուզում են տեսնել կամուրջի վրայ ...

HASTINGS.
Ես հաւատում եմ. այդ սիրոյ համար նրանք հիմք ունեն։

[Stanley enters.]

HASTINGS [cont.]
Ապա եկ տեսնենք, ո՞ւր է նիզակդ, Անզէն ես շրջում, միթէ՞ վարազից դու երկիւղ չունես։

STANLEY.
Բարի լոյս, միլորդ, բարի լոյս, Քետսբի, Կարող էք ծաղրել, բայց խաչը վկայ, Ինձ դուր չեն գալիս գաղտնի նիստերն այդ։

HASTINGS.
Լսիր ինձ, միլորդ, Քո կեանքի նման իմ կեանքն էլ թանկ է, Բայց այն, երդւում եմ, երբեք ինձ համար Չի եղել այնպէս քաղցր ու կաթոգին, ինչպէս հէնց այժմ։ Եթէ ապահով չզգայի ես ինձ, միթէ՞ կարծում ես Կարող էի այսչափ յաղթական լինել։

STANLEY.
Եւ այն լորդերը, որ Պոմֆրետումն են, Լոնդոնից զուարթ մեկնեցին այնտեղ, Նրանք տրտմելու առիթ չունէին։ Բայց, տեսէք, օրը ինչ շո՛ւտ ամպոտեց. Այս յանկարծական բանտարկութիւնը կասկածելի է։ Աստուա՛ծ, երանի իմ երկիւղները անհիմն լինէին։ Լոյսը բացուել է, գնալո՞ւ ենք Բերդ։

HASTINGS.
Կ'երթանք, մի՛ յուզուիր։ Գիտե՞ս ինչ, միլորդ, Այդ լորդերն այսօր գլխատուելու են։

STANLEY.
Նրանք աւելի արժանի էին գլուխ կրելու, Քան ոմանք՝ գլխարկ, որ այդ լորդերին ամբաստանել են։ Բայց գնանք, տէր իմ, ժամանակն է արդէն։

[An Officer enters.]

HASTINGS.
Դուք առաջ անցէք, ես այս մարդու հետ մի քիչ կը խօսեմ։

[Stanley and Catsby exit.]

HASTINGS [cont.]
Ինչպէ՞ս ես, բարեկամ։

OFFICER.
Լաւ եմ, մանաւանդ, երբ դուք էք հարցնում։

HASTINGS.
Ես նոյնպէս լաւ եմ, շատ աւելի լաւ, Քան վերջին անգամ, երբ այն նոյն վայրում հանդիպեցիր ինձ։ Ես այն ժամանակ Բերդ էի տարւում Իբրեւ թագուհու հարազատների պարսաւանքի զոհ. Բայց այժմ լսիր, տե՛ս, մարդու չասես, Այսօր այդ բոլոր թշնամիներս պիտի գլխատուեն, Ահա թէ ինչու ուրախ եմ այդպէս։

OFFICER.
Աստուած տայ, որ միշտ բախտաւոր լինէք։

HASTINGS.
Շնորհակալ եմ։ Առ, կենացս խմիր։

[He throws the Officer in his purse.]

OFFICER.
Աստուած օրհնի ձեզ, ազնիւ իշխան իմ։

[As the Officer exits a Priest enters.]

PRIEST.
Բարի աջողում, բարի տեսայ ձեզ։

HASTINGS.
Գոհ եմ ի սրտէ, տէր հայր Յովհաննէս, Դեռ անցեալ ժամուց պարտական եմ քեզ, Եկ միւս շաբաթ, վարձդ կը ստանաս։

[As he whispers in his ear Buckingham enters.]

BUCKINGHAM.

Ինչպէ՞ս, խօսո՞ւմ էք քահանայի հետ, լորդ սենեկապետ, Ձեր ծանօթները, որ Պոմֆրետում են, Նրանք են կարօտ խոստովանութեան, Իսկ դուք պէտք չունէք։

HASTINGS.

Ճիշտ է, երբ տեսայ այս սուրբ երէցին, Ձեր ասած մարդկանց մտաբերեցի։ Բե՞րդ ես շտապում։

BUCKINGHAM.

Այո՛, բայց երկար չեմ կարող մնալ, Կը վերադառնամ ձեզանից առաջ։

HASTINGS.

Իսկ ես, միգուցէ, այնտեղ ճաշի մնամ։

BUCKINGHAM.

[Aside.] Նաեւ ընթրիքի, թէեւ չգիտես։ Երթանք, գալի՞ս էք։

HASTINGS.

Պատրաստ եմ, միլորդ։

[Exits.]

][][

ACT III. SCENE III.

Pomfret Castle. Ratcliff and Guards with halberds lead Rivers, Grey, and Vaughan to be executed.

RATCLIFF.

Դէ, առաջ բերէք բանտարկեալներին։

RIVERS.

Լսիր, Ռետկլիֆ, թէ ինչ եմ ասում, Այսօր քո առաջ պիտի գլխատուեմ Յանուն հաւատի եւ արդարութեան եւ յանուն պատուի։

GREY.

Աստուա՛ծ, պահպանիր դու մեր իշխանին այս պիղծ խուժանից, Նզովեալ լինես, արնախում վոհմակ։

VAUGHAN.

Դուք պիտի ողբաք այս ոճրի համար։

RATCLIFF.

Բաւ է, ձեր կեանքի վախճանը հասաւ։

RIVERS.

Օ՛, Պոմֆրե՛տ, Պոմֆրե՛տ, արիւնաներկ բանտ. Դու կառափնարան ազնիւ լորդերի, Քո այդ մեղսապարտ պարիսպների տակ Ռիչարդ Երկրորդը ընկաւ նահատակ, Արդ, ի հաւելում քո անարգանքին, Խմիր արիւնը մեր անմեղ կեանքի, ո՛վ սոսկալի Բերդ։

GREY.

Տես, Մարգարիտի անէծքը ինչպէ՛ս պայթեց մեր գլխին, Մենք ներկայ էինք, երբ Գլոստերը Սպանեց նրա անմեղ զաւակին։

RIVERS.

Եւ Մարգարիտը անիծեց Ռիչարդին ու Բուկինգեմին. Անիծեց Հեստինգսին։ Օ՛, յիշի՛ր, Աստուած, Նրա անէծքը։ Դու նրա՛նց պատժիր, Բայց իմ քրոջը եւ նրա որդոց եղիր պահապան։ Գոհացիր, ով տէր, մեր անմեղ արեամբ, Որն, ինչպէս գիտես, անիրաւ է թափւում։

RATCLIFF.

Ուշ է, վե՛րջ տուէք, մահուան ժամն հասաւ։

RIVERS.

Եկէք, Գրի, Վոգեն, իրար փարուենք այստեղ, Մինչեւ հանդիպենք նորից երկնքում։

[All exit.]

ACT III. SCENE IV.

The Tower of London. Buckingham, Derby, Hastings, the Bishop of Ely, Ratcliff and Lovel all enter and take their seats at the table.

HASTINGS.

Այժմ, տեարք իմ, մենք հաւաքուել ենք, Որ թագադրման օրը որոշենք։ Արդ, ի սէր Աստծոյ, վճռենք այդ օրը։

BUCKINGHAM.

Ամէն ինչ պատրա՞ստ է այդ օրուայ համար։

DERBY.

Այո՛, պատրաստ է։ Մնում է միայն օրը անուանել։

BISHOP.

Վաղը, կարծում եմ, փառաւոր օր է։

BUCKINGHAM.

Լորդ հոգաբարձուն ի՞նչ կարծիք ունի, Ո՞վ է մտերիմ ազնիւ դքսի հետ։

BISHOP.

Իսկ իմ կարծիքով՝ դո՛ւք պէտք է նրա միտքը գիտենաք։

BUCKINGHAM.

Ո՞վ, ե՞ս, սրբազան։ Մենք արտաքուստ ենք իրար ճանաչում։ Գալով սրտերին՝ նա իմ սրտի հետ նոյնքան է ծանօթ, Որքան որ ես եմ ծանօթ ձեր սրտին։ Նրա հոգին ինձ անյայտ է այնպէս, ինչպէս իմը՝ ձեզ։ Բայց դուք, լորդ Հեստինգս, նրա հետ մերձ էք։

HASTINGS.

Շնորհակալ եմ. նա ինձ սիրում է, ես այդ քաջ գիտեմ, Բայց չեմ շօշափած, թէ ինչ է խորհում թագադրման առթիւ։ Ոչ էլ յայտնել է որեւէ կերպով իր կարծիքը ինձ։ Բայց դուք, ազնիւ տեարք, որոշէք օրը. Դքսի փոխարէն ես ձայնս կը տամ, Յոյս ունեմ, որ նա շատ գոհ կը մնայ։

BISHOP.

Ահա եւ դուքսը՝ իր բարի ժամին։

[Gloucester enters.]

GLOUCESTER.

Իմ ազնիւ լորդեր եւ հարազատներ, բարեւ, բարի լոյս, Ես երկար քնեցի, սակայն վստահ եմ, Արգելք չեմ դարձել բնաւ այն գործին, Որ պիտի լուծուէր իմ ներկայութեամբ։

BUCKINGHAM.
Ձեր փոխարէն, միլորդ, Վիլեամ Հեստինգսը իր ձայնը տուեց Մանուկ իշխանի թագադրման համար։

GLOUCESTER.
Միայն Հեստինգսը իրաւունք ունի այդքան խիզախել, - Նա ինձ քաջ գիտէ եւ շատ է սիրում։ Օ՛, լորդ իմ Իլի, վերջերս, երբ ես Հոլբոռնում եղայ, Ընտիր ելակներ տեսայ ձեր այգում։ Ուղարկէք՝ մի քիչ մեզ համար քաղեն։

BISHOP.
Հաճոյքով, տէր իմ։

[The Bishop exits.]

GLOUCESTER.
Ձեզ հետ, Բուկինգեմ, խօսելիք ունեմ։

[The two converse in whispers.]

GLOUCESTER [cont.]
Քետսբին Հեստինգսին քննել է արդէն. Կրակոտ լորդը նրան ասել է, Որ աւելի շուտ կը համաձայնի իր գլխից զրկուել, Քան թէ իր տիրոջ ժառանգին տեսնել Գահը կորցրած։

BUCKINGHAM.
Մի պահ դուրս ելնենք։

[Gloucester exits, followed by Buckingham.]

DERBY.
Եւ, այսուհանդերձ, հանդէսի օրը անորոշ մնաց. Վաղուայ օրն, ըստ իս, չափազանց շուտ է, Ինքս էլ պատրաստ չեմ հարկ եղած չափով, Պէտք է յետաձգել. իմ կարծիքն այդ է։

[The Bishop returns.]

BISHOP.
Ո՞ւր է իմ իշխան դուքս Գլոստերը, Մարդ ուղարկեցի, որ ելակ բերեն։

HASTINGS.
Իշխանը այսօր զուարթատես է եւ քաղցրահամբոյր. Ինչ-որ մի բանով ուրախացած է, Երբ այդքան սրտանց բարի լոյս մաղթեց։ Համայն աշխարհում ոչ ոք նրա պէս անընդունակ չէ Սէրն ու վրէժը սքօղելու մէջ։ Իշխանի դէմքին իր սիրտն ես տեսնում։

DERBY.
Դուք նրա սրտից ի՞նչ նկատեցիք Իր դէմքի վրայ։

HASTINGS.
Որ սիրալիր է ամէնքիս հանդէպ, Թէ չէ հայեացքը իսկոյն կը մատնէր։

DERBY.
Տայ Աստուած, որ նա այդպիսին լինի։

[Gloucester and Buckingham return.]

GLOUCESTER.
Խնդրեմ, ասացէք, թէ ի՞նչ պատժի են արժանի նրանք, Որոնք դիւային որոգայթներով իմ մահին են տենչում. Անարգ մոգութեամբ ու դժոխային կախարդանքներով Կամին ներգործել իմ մարմնի վրայ։

HASTINGS.
Միլորդ, այն սէրը, որ ես տածում եմ ձեր վերաբերմամբ, Ինձ փութացնում է ձեր ներկայութեամբ Դատապարտելու յանցաւորներին, - ով կ'ուզէ լինի, - Նրանք, իշխան իմ, մահուան են արժանի։

GLOUCESTER.
Արդ, աչքով դիտէք նրանց չարիքը. Տեսէք, թէ ինչպէս կախարդուած եմ ես։ Տեսէք, բազուկն իմ Թօշնել է, ինչպէս մի չորացած ոստ։ Էդուարդի կինը՝ այդ հրէշաւոր անարգ ճիւաղը, Միաբանելով այդ լկտի պոռնիկ տիկին Շոռի հետ, Իրենց հմայքով կախարդել են ինձ։

HASTINGS.
Եթէ այդ բանը նրանք են արել, ազնիւ իշխան իմ...

GLOUCESTER.
Եթէ՞, անիծեալ պոռնիկի պաշտպան, Ինձ հետ խօսում ես դու «եթէ»-ներով։ Դաւաճան ես դու, Գլխատել սրան, սուրբ Պօղոսը վկայ, Ճաշի չեմ նստի, մինչեւ չտեսնեմ դրա գլուխը։ Լովել եւ Ռետկլիֆ, վերջացրէք գործը։ Ով ինձ սիրում է, Թող հետեւի ինձ։

[All exit save Hastings, Lovell and Ratcliffe.]

HASTINGS.
Վա՜յ քեզ, Անգլիա, վա՜յ քեզ, ոչ թէ ինձ։ Ես այս չարիքը կարող էի կանխել։ Աւա՜ղ, երազդ ճի՜շտ էր, Ստենլի. կինճը պոկել էր Քո սաղաւարտը։ Ես անգոսնեցի քո խորհուրդները, մերժեցի փախչել։ Այսօր երեք անգամ իմ ձին սայթաքեց Եւ ընդոստ եղաւ, երբ Միջնաբերդի պատերին նայեց. Կարծես տանում էր ինձ սպանդանոց։ Ա՜խ, հիմա էր պէտք ինձ այն քահանան։ Այժմ զղջում եմ, որ հպարտացայ մունետիկի մօտ, Թէ ինչպէս այսօր իմ ոսոխները Արիւնաշաղախ կ'ընկնեն Պոմֆրետում, Եւ ես ինձ կը

զգամ ապահո՛վ, հզօ՛ր։ Աւա՜ղ, Մարգարի՛տ, աւա՛ղ, Մարգարի՛տ, ահեղ նզովքդ Իջնում է թշուառ Հեստինգսի գլխին։

RATCLIFF.
Շտապէք, միլո՛րդ, իշխանը արդէն ճաշի է գնում. Կարճ խոստովանէք, նա ուզում է ձեր գլուխը տեսնել։

HASTINGS.
Օ՛, դու վաղանցիկ մարդկային շնորհք, Որ վեր ենք դասում Աստծոյ շնորհքից։ Վա՛յ նրան, ով որ ապաւինում է ձեր ժպիտներին։ Նա նման է այն հարբած նաւորդին, որ կայմին նստած՝ Ամէն ճօճումին պատրաստ է գլորուել Անդունդն ովկիանի։

LOVEL.
Դէ, շուտ, վերջ տուէք, ողբալն իզուր է։

HASTINGS.
Օ՛, արիւնռուշտ Ռիչարդ, դժբա՛խտ Անգլիա. Ես գուշակում եմ ամենադժնի օրեր քեզ համար, Որ ժամանակը երբեք չի տեսել։ Այժմ՝ դէպի կոճղ։ Գլուխս շտապ տարէք Ռիչարդին, Սակայն իմացէք, դո՛ւք էլ կ՚ենթարկուէք այս նոյն վիճակին։

[All exit.]

][][

ACT III. SCENE V.

The Tower-walls. Gloucester and Buckingham enter in rotten armor, marvelous ill-favored.

GLOUCESTER.

Ասա ինձ, եղբայր, կարո՞ղ ես գոյնդ փոխել, դողդողալ եւ խօսքի կէսին շունչդ ընդհատել, Վերստին սկսել, ապա կանգ առնել, Կարծես սարսափից վախեցած լինես։

BUCKINGHAM.

Է՛, բան ասացիք, ողբերգակից էլ յաջող կը խաղամ։ Խօսելիս յանկարծ հետեւ կը նայեմ, աչք կ'ածեմ չորս կողմ, Կը դողամ, կը ցնցուեմ յարդի շարժումից, Ինչպէս լինում է վտանգից առաջ։ Սոսկալի նայուածք եւ շինծու ժպիտ՝ ահա սրանք են իմ ծառաները՝ Երկուսն էլ պատրաստ իրենց պաշտօնին, Որ ուզած ժամին որոգայթ լարեն։ Քետսբին գնա՞ց։

[The Lord Mayor and Catesby enter.]

GLOUCESTER.

Այո՛, եւ նայիր, քաղաքապետին այստեղ է բերում։

BUCKINGHAM.

Գնամ ընդառաջ։

[The Lord Mayor and Catesby enter.]

BUCKINGHAM [cont.]

Լորդ քաղաքապե՛տ --

GLOUCESTER.

Կամուրջն իջեցնե՛լ։

BUCKINGHAM.

Այս ի՞նչ թմբուկ է։

GLOUCESTER.

Քետսբի, շտապ աչք ածիր Բերդին։

BUCKINGHAM.

Լորդ քաղաքապետ, մենք ձեզ կանչեցինք --

GLOUCESTER.

Պաշտպանուի՛ր, այստեղ թշնամիներ կան։

BUCKINGHAM.

Օ՛, Աստուած, փրկիր այս անմեղներիս։

GLOUCESTER.

Ոչ, հանգստացի՛ր, բարեկամներ են. Մէկը Լովելն է, միւսը՝ Ռետկլիֆը։

[Lovell and Ratcliffe enter, with Hastings' head.]

LOVEL.

Ահա գլուխը նենգ դաւաճանի, Այս վտանգաւոր թաքնուած Հէստինգսի։

GLOUCESTER.

Այնքան բո՛ւռն էի ես նրան սիրում, որ պէտք է ողբամ։ Ապրողների մէջ համարում էի ես նրան միակ Ազնի՛ւ, անարա՛տ մարդը աշխարհում։ Նա իմ մատեանն էր, որտեղ իմ հոգին Գրում էր բոլոր իր գաղտնիքները, Իր նենգութիւնը այնպէս էր պճնում առաքինութեամբ, Որ բացառութեամբ իր այդ բացայայտ յանցագործութեան, Ուզում եմ ասել՝ տիկին Շոռի հետ ունեցած կապին, Բոլորը կարծում էին, որ նա ազնիւ է։

BUCKINGHAM.

Այո՛, այդպիսի թաքնուած դաւաճան Աշխարհը չի տեսել։ Կարո՞ղ էք արդեօք դուք պատկերացնել կամ զէթ հաւատալ, Որ եթէ չլինէր հրաշքն Աստծոյ, Մենք ողջ չէինք պրծնի։ Ճարտար սրիկան Մտադրուել էր խորհրդատանը նիստի ժամանակ Լորդ Գլոստերին եւ ինձ սպանել։

LORD MAYOR.

Միթէ՞ այդ ճիշտ է։

GLOUCESTER.

Ի՞նչ է, չլինի՞ մեզ թուրք էք կարծում կամ թէ անհաւատ. Ինչպէ՞ս կարող էինք մենք առանց դատի Այս չարագործի գլուխը կտրել, Եթէ ծայրագոյն վտանգ չսպառնար Մեր Անգլիայի խաղաղութեանը եւ մեր փրկութեան։ Ահա թէ ինչու մենք տեղնուտեղը պատժեցինք նրան։

LORD MAYOR.

Ապրէ՛ք, լաւ էք արել։ Մահուա՛ն էր արժանի. Եւ դուք երկուսդ էլ արդար էք, լորդեր, Որ վերջ էք տուել այդ չարագործին։ Թող զգուշանան դաւաճանները նման փորձերից։ Ես նրա ձեռքից որեւէ լաւ բան չեմ ակնկալել Այն օրից ի վեր, երբ նա կապուել էր տիկին Շոռի հետ։

BUCKINGHAM.

Մենք չէինք ուզում գլխատել նրան, Մինչեւ դուք անձամբ ներկայ չլինէք։ Բայց տագնապը մեր բարեկամների, որոնք այստեղ են, Գործը փութացրեց ընդդէմ մեր կամքի։ Մենք ուզում էինք, որ դուք լսէիք Այդ չարագործին՝ իր դաւադրութեան Ամբողջ ընթացքը եւ նպատակը խոստովանելիս, Որ կարողանաք ճշգրիտ բացատրել դուք քաղաքացոց Նրա պատմածը, որպէսզի նրանք ձեզ լաւ

հասկանան եւ նրա մահը ողբով չընդունեն։

LORD MAYOR.
Բայց, բարի լորդ իմ, ձեր խօսքը բաւ է, Որ ես տեսել եմ ու լսել նրան։ Եւ մի կասկածէք, ազնիւ իշխաններ, Որ հաւատարիմ մեր քաղաքացոց ես կը հաղորդեմ Այդ արդար դատի ողջ պատմութիւնը։

GLOUCESTER.
Հէնց դրա համար մենք ձեզ կանչեցինք, Որ խույս տանք մարդկանց հերիւրանքներից։

BUCKINGHAM.
Թէպէտ ուշացաք բաւականաչափ, Բայց մեր պատմածից գործը պարզ դարձաւ. Այդ էլ պատմեցէք։ Դէ, բարի երթաք, լորդ քաղաքապետ։

[The Lord Mayor exits.]

GLOUCESTER.
Հետեւից գնա, ազնիւ Բուկինգեմ։ Նա քաղաքային վարչութիւն է գնում, Շտապիր այնտեղ եւ յարմար պահին Յայտնիր դու նրանց, որ թագաւորի երեխաները ապօրինի են։ Պատմիր, թէ ինչպէս Էդուարդը մի օր Մահուան ենթարկեց մի քաղաքացու, Որն ասել էր, թէ ուզում է թագը որդուն կտակել. Խօսքը այդ մարդու տան ցուցանակի մասին է եղել։ Դու պատմիր նաեւ նրա նողկալի բղջախոհութեան, Տռփանքից տռփանք անցնող իր վայրագ տենչանքի մասին, Որ տարածուելով հասնում էր նրանց աղախիններին, Դուստրերին, կանանց, Ուր այդ գազանի վաւաշոտ աչքը Մի որս էր տեսնում խժռելու համար՝ առանց արգելքի։ Ապա մի քիչ էլ իմ մասին խօսիր. Յիշեցրու, որ երբ Էդուարդն էր ծնւում, Վեհազգի Եորքը՝ քաջարի հայրս, Կռիւ էր մղում Ֆրանսիայի մէջ։ Երբ որ հաշուեցին ճիշտ ժամանակը, Պարզուեց, որ երեխան իր զաւակը չէ, Եւ դա հաստատուեց նաեւ այն բանով, Որ հօրս բնաւ նման չէր դէմքով. Այդ բանը, սակայն, զգոյշ ակնարկիր, Չէ՞ որ իմ մայրը, ինչպէս դու գիտես, դեռ ողջ է, միլորդ։

BUCKINGHAM.
Անհոգ կաց, դուքս իմ, ճարտար կը խօսեմ. Որպէս թէ ոսկու համար եմ ճգնում։ Արդ, մնաք բարով։

GLOUCESTER.
Թէ խօսքդ ազդեց, նրանց Բէյնարդի դղեակ բեր իսկոյն, Որտեղ կը գտնես ինձ՝ շրջապատուած Սուրբ երէցներով եւ բարեկրօն սրբազաններով։

BUCKINGHAM.
Ահա գնացի. ժամը երեքին կամ մինչեւ չորսը Լուրեր սպասէք ժողովարանից։

[Buckingham exits.]

GLOUCESTER.
Լովել, շուտ գնա դոկտոր Շոյի մոտ, Իսկ դու, Քետսբի, Պենկերին կանչիր։ Ասացէք նրանց, Որ մէկ ժամ յետոյ Բէյնարդում լինեն։

[Lovell, Catsby and Ratcliffe exit.]

GLOUCESTER [cont.]
Այժմ ես գաղտնի հրաման կը տամ, Որ Կլարենսի այդ լակոտներին աչքից հեռացնեն։ Կը կարգադրեմ նոյնպէս, որ ոչ մի մարդու Մուտք չտան մանուկ իշխանների մօտ։

[Exits.]

][][

ACT III. SCENE VI.

The same. Scrivener enters with a paper in his hand.

SCRIVENER.

Ահա բարի լորդ Հեստինգսի վճիռը, Որ շատ խնամքով արտագրուած է. Այն պիտի կարդան այսօր տաճարում։ Եւ տեսէք՝ որքան ճարտար է հիւսուած. Արտագրութիւնը տասնմէկ ժամ խլեց. Հէնց երեկ գիշեր Քետսբին բերեց, Եւ բնագիրն էլ պակաս ժամանակ չի խլել, անշուշտ։ Մինչդեռ Հեստինգսը մի հինգ ժամ առաջ տակաւին ողջ էր, Չէր մեղադրուած, չէր հարցաքննուած, անպա՛րտ էր, ազա՛տ։ Զարմանալի՜ աշխարհ։ Ո՞վ է այնքան բութ, Որ այս ակներեւ դաւը չի տեսնում, Միաժամանակ ո՞վ է այնքան քաջ, Որ անվախ կ'ասի, թէ ես տեսնում եմ։ Չար է աշխարհը, ապրելը փուչ է, Երբ այսքա՛ն դաւեր հիւսւում են շուրջդ։

[Exits.]

][][

ACT III. SCENE VII.
Baynard's Castle. Gloucester and Buckingham enter.]

GLOUCESTER.
Շուտ պատմի՛ր, պատմի՛ր։ ժողովուրդն ի՞նչ է ասում։

BUCKINGHAM.
Տիրամայրը վկայ, Ժողովուրդը լուռ է, ոչինչ չի ասում։

GLOUCESTER.
Ասացի՞ր, որ Էդուարդի մանուկները բիճ են։

BUCKINGHAM.
Այո՛, յիշեցի նրա դաշինքը տիկին Լիւսիի հետ Եւ Ֆրանսիայում կնքուած դաշինքը, Նրա տարփանքի անյագութիւնը, Քաղաքի կանանց բռնաբարելը, Նրա բռնակալ եւ բիճ լինելը, Թէ ինչպէս ծնուեց, երբ որ ձեր հայրը Ֆրանսիայումն էր, Եւ դէմքով ինչպէս նրան նման չէր։ Ասացի նաեւ, որ ձեր երեսը Ճշգրիտ դրոշմն է ձեր հօր պատկերի, Թէ՛ ձեր վեհ հոգու, թէ՛ կազմի կողմից։ Մէկ-մէկ թուեցի ձեր սկովտիական յաղթանակները, Որ կռւում քաջ էք, իսկ հաշտութեան մէջ՝ խելօք, խոհական, Որ բարեսիրտ էք, հեզ, առաքինի։ Արդարեւ, ինչ որ օգնում էր գործին, բոլորն ասացի։ Եւ ճառիս վերջում բացականչեցի. - Ով հայրենիքին բարիք է ուզում, թող գոչի ինձ հետ. «Կեցցէ՛ Ռիչարդը, Անգլիոյ արքան»։

GLOUCESTER.
Եւ ի՞նչ, գոչեցի՞ն։

BUCKINGHAM.
Վկայ է Աստուած, մի խօսք չասացին, Բայց մեռելատիպ նայեցին իրար Արձանների պէս։ Երբ որ այդ տեսայ, պարսաւեցի նրանց Եւ իսկոյն հարցրի, ինչո՞ւ են այդպէս քարացած լռում. Քաղաքապետն ասաց, որ ժողովուրդը Սովոր չէ առանց միջնորդի խօսել։ Ստիպուած եղաւ իմ խօսքը նորից բացատրել նրանց։ «Այսպէս ասաց դուքսը, դուքսն այսպէս պատմեց», Սակայն ձեր օգտին ոչ մի բառ չասաց նա իր անունից։ Երբ որ աւարտեց, մի քանիսը իմ կողմնակիցներից, Որ կանգնած էին սրահի վերջում, Իրենց գդակները վեր շպրտեցին, Եւ լսուեց յանկարծ մի տասը հոգու ձայն. «Կեցցէ՛ Ռիչարդ արքան»։ Ես, այդ առիթը օգտագործելով, բացականչեցի. «Շնորհակալ եմ, ազնիւ քաղաքացիք եւ բարեկամներ, Ձեր այդ ցնծագին ծափն ու կոչերը Ցոյց են տալիս ձեր իմաստութիւնը եւ սէրն առ Ռիչարդ»։ Այսքանն ասելով՝ իսկոյն հեռացայ։

GLOUCESTER.
Այդ ի՞նչ անլեզու կոճղեր են եղել։ Ոչինչ չասացի՞ն։

BUCKINGHAM.
Ոչ մի խօսք, միլորդ։

GLOUCESTER.
Իսկ քաղաքապետն իր շքախմբով գալո՞ւ է, թէ՞ ոչ։

BUCKINGHAM.
Նա հիմա կը գայ։ Դուք ձեզ ցոյց տուէք սաստիկ վրդովուած. Ինքներդ մի խօսէք, թող շատ աղաչեն։ Մի աղօթագիրք պահէք ձեր ձեռքում եւ կանգնէք երկու կղերի մէջտեղ։ Երբ փառաբանեմ ես ձեր սուրբ վարքը, Դուք մեր խնդրանքին մի զիջէք իսկոյն. Աղջկայ պէս վարուէք, ասէք՝ չեմ առնի, բայց գործով առէք։

GLOUCESTER.
Ահա գնում եմ. եթէ թախանձէք այնպիսի ուժով, Ինչպիսի ուժով ես պիտի մերժեմ, Մեր գործը յաջող կ'աւարտուի անշուշտ։

BUCKINGHAM.
Բարձրացէք վերեւ, քաղաքապետը դուռը ծեծում է։

[As Gloucester exits the Lord Mayor enters with members of the Parliament.]

BUCKINGHAM [cont.]
Բարի եկաք, միլորդ, զուր էք սպասում, Դուքսը, կարծում եմ, խօսել չի ուզում։

[Catsby enters.]

BUCKINGHAM [cont.]
Ի՞նչ կայ, Քետսբի, դուքսը ի՞նչ ասաց։

CATESBY.
Նա, ազնիւ միլորդ, խնդրում է, որ դուք Իրեն այցելէք վաղը կամ միւս օր։ Երկու պատուական սուրբ հայրերի հետ Նա անձնատուր է ներսում երկնային բարեխօսութեան։ Ոչ մի աշխարհիկ աղերս չի կարող Նրան անջատել իր սուրբ խոհերից։

BUCKINGHAM.
Դարձիր, Քետսբի, ազնիւ դքսի մօտ, Յայտնիր, որ ինքս, քաղաքապետը եւ խորհրդատան մեծամեծները խիստ ծանրակշիռ, հրատապ գործով, Որից մեր երկրի վիճակն է կախուած, եկել ենք իր հետ խորհրդակցելու։

CATESBY.
Գնամ եւ շտապ յայտնեմ իշխանին։

[Catesby exits.]

BUCKINGHAM.
Ա՛, այս իշխանը Էդուարդ չէ, միլո՛րդ, Սա չի թաւալւում իր անկողնու մէջ, Այլ ծունկի իջած՝ ապաշխարում է։ Պոռնիկների հետ չի զուարճանում, Այլ մտորում է սուրբ հայրերի հետ։ Չի պարարտացնում իր հեղգ մարմինը՝ անվերջ քնելով, Այլ աղօթքներով հարստացնում է իր զգաստ հոգին։ Որքա՜ն բախտաւոր կը լինէր Անգլիան, եթէ այս դուքսը Նրան գերագոյն վեհապետ դառնար, Սակայն դժուար թէ նրան համոզէք։

LORD MAYOR.
Ա՛խ, Աստուած, միթէ՞ մեզ պիտի մերժի։

BUCKINGHAM.
Ես վախենում եմ։

[Catesby re-enters.]

BUCKINGHAM [cont.]
Ապա, Քետսբի, իշխանն ի՞նչ ասաց։

CATESBY.
Նա զարմանում է, թէ ինչո՞ւ համար Այսքան շատ մարդ էք հաւաքել իր մօտ՝ Առանց նախապէս տեղեկացնելու։ Նա վախենում է ձեր չար մտքերից։

BUCKINGHAM.
Ցաւում եմ, որ իմ ազնիւ եղբայրը Կասկածանքով է վերաբերւում ինձ։ Երկինքը վկայ, բարի մտքով ենք նրա մօտ եկել, Ուստի վերստին գնա եւ յայտնիր մեր նպատակը։

[Catesby exits.]

BUCKINGHAM [cont.]
Երբ Աստուածանուէր, ջերմեռանդ մարդիկ Մաղթանքի մէջ են, դժուար է նրանց կորզել այնտեղից, այնքան դիւթիչ է խոկումի պահը։

[As Catesby returns Gloucester enters, standing between the two Bishops.]

LORD MAYOR.
Տեսէք, նա երկու հայրերի հետ է. նրանց մէջտեղում։

BUCKINGHAM.
Առաքինական երկու նեցուկներ մեր սուրբ իշխանի, Որ նրան փրկեն ունայն անկումից։ Եւ տեսէք, ձեռքում աղօթագիրք կայ, Որ ճշգրիտ զարդն է բարեպաշտ մարդու։- Մեծ Պլանտագենետ, վեհագոյն

իշխան, Զիջիր ականջդ մեր աղերսանքին Եւ ներիր դու մեզ, որ յանդգնեցինք Քո Աստուածասէր ծէսը խափանել։

GLOUCESTER.
Այդ ներողութեան հարկ չկայ, միլորդ, Ե՛ս պէտք է ձեզնից թողութիւն խնդրեմ, Որ Աստուածային ծէսին անձնատուր՝ Ուշադիր չեղայ բարեկամներիս այցելութեանը։ Սակայն թողնենք այդ. փափագդ ի՞նչ է։

BUCKINGHAM.
Այն է, որ յուսամ, փափագն է Աստծոյ Եւ այս որբ կղզու ողջ բարի մարդկանց։

GLOUCESTER.
Ես վախենում եմ, թէ մի որեւէ յանցանք եմ գործել, Որ նախատինք է թւում ձեր աչքին, եւ դուք եկել էք պարսաւելու ինձ։

BUCKINGHAM.
Գործել էք, իշխան, բայց այդ սխալը Կարող էք շտկել՝ մեր աղերսանքին ընդառաջ գալով։

GLOUCESTER.
Էլ ո՞ւր եմ ապրում քրիստոնեայ երկրում, եթէ չօգնեմ ձեզ։

BUCKINGHAM.
Իմացէք, ուրեմն, ձեր յանցանքն այն է, որ դուք զիջել էք Ձեր վեհ աթոռը, մեծափառ գահը, Ձեր նախնիների մեծ գայիսոնը, Ձեր օթեւանը, իրաւունքը տոհմի, Ձեր արքունի տան հրաշող փառքը՝ Փուչ ժառանգների աւերածութեան։ Յանուն մեր երկրի բարեբախտութեան Մենք զարթեցնում ենք թմրած խոհերդ. Այս վսեմ կղզին շունչը փչում է. Նրա երեսը այլանդակուած է գարշ սպիներով. Անարգ բոյսեր են նրա արքունի բոյնին պատուաստուած, Նա համարեա թէ սեւ մոռացութեան եւ մութ գիշերուայ Անյագ անդունդի ուսին է ընկած։ Ի փրկութիւն իր՝ մենք թախանձում ենք, որ դուք յանձն առնէք Արքունի բեռը երկրիդ պետութեան, Ո՛չ իբրեւ պաշտպան, փոխանորդ կամ տէր, Ո՛չ որպէս վարձկան օտար տէրութեան, Այլ իբրեւ յաջորդ ձեր արքունի տան, Իբրեւ սեփական թագաւորութեան ժառանգն իսկական։ Ահա թէ ինչու այս թափօրի հետ, Որտեղ բոլորը ձեզ անչափ սիրող բարեկամներ են, Եւ նրանց սաստիկ յորդորից ազդուած՝ Ես եկայ այստեղ՝ թախանձելու ձեզ։

GLOUCESTER.
Չգիտեմ՝ ինչ ասեմ, անխօս ե՞տ դառնամ, Թէ՞ ձեզ կշտամբեմ դառնագին խօսքով, Որը՞ դրանցից յարմար է հիմա. Եթէ լուռ մնամ, կարող էք կարծել, Թէ ես պապանձուած մի փառասէր եմ, որ իմ լռութեամբ Տենչում եմ կրել թագաւորութեան ոսկեղէն լուծը, Որ գորովանքով դուք կամենում էք իմ վզին դնել։ Եթէ պարսաւեմ աղերսիդ համար, Որով անձնուէր սէր էք յայտնում ինձ, Անարգած կը լինեմ բարեկամներիս։ Որպէսզի խօյս տամ ես առաջինից Եւ առիթ չտամ բարեկամներիս արդար տրտունջին, Ահա վճռական իմ պատասխանը. Շնորհակալ եմ ձեր սիրոյ համար, բայց իմ վաստակը Ձեր այս խնդրանքին դեռ արժանի չէ։ Նախ, եթէ բոլոր արգելակները վերացած լինեն, Եւ ողորկ լինի դէպի թագ տանող իմ ճանապարհը՝ Իբրեւ իմ ծագման հասեալ իրաւունք, Դարձեալ ես հոգով այնքան

տնանկ եմ, Այնքան աhռելի եւ այնքան շատ են թերութիւններս, Որ աւելի շուտ խոյս կը տամ փառքից, Ինչպէս մի նաւակ, որ վախենում է մեծ ծով դուրս գալու, Քան թէ կ'ամփոփուեմ իմ մեծութեան մէջ, Որպէսզի փառքիս գոլորշում խաշուեմ։ Բայց գոհ եմ Աստծուց, որ իմ կարիքը բնաւ չէք զգում։ Ինքս թոյլ տեղով սատար կը լինէի ձեզ, թէ կարենայի։ Արքունի ծառը մեզ իր արքունի պտուղն է թողել, Որ, ժամանակի աննշմար վազքում հասունանալով, Վեհափառ գահը պիտի զարդարի եւ մեզ անկասկած բախտաւոր դարձնի իր իշխանութեամբ։ Իմ յոյսը նա է. ողջ իրաւունքը եւ բախտը նրա երջանիկ աստղի Իր վրայ բարձէք, ոչ թէ ինձ վրայ, Աստուած ոչ անի, որ ես այդ փառքը կորզեմ նրանից։

BUCKINGHAM.
Ձեր խօսքը, միլորդ, անչափ անկեղծ է։ Բայց ձեր հիմքերը մանր են, աննշան, Երբ ամէն կողմից լաւ քննում ենք այն։ Դուք մեզ ասում էք, որ Էդուարդը ձեր եղբօրորդին է. Մենք էլ ենք ասում, բայց ո՞ր կնոջից. ոչ թէ նրանից Որ օրինական կինն էր ձեր եղբօր, Քանզի Էդուարդը նախ նշանուած էր տիկին Լիւսիի հետ, - Վկան ձեր մայրն է, որը դեռ ողջ է։ Դրանից յետոյ փոխանորդութեամբ Բոնային առաւ, Որ ֆրանսիական արքայի քոյրն էր։ Սակայն նա լքեց այդ երկուսին էլ. մի շա՛տ աղքատ կին. Մի խիստ տառապած բազմազաւակ մայր, Մի թշուառ այրի՝ խամրած գեղեցկութեամբ, Որ մուտք էր գործել կեանքի միջօրէն, Գրաւեց նրա աչքը վաւաշոտ, Նրա վերամբարձ մտքերը սանձեց եւ ուղղեց դէպի կրկնամուսնութիւն, դէպի անարգ էջք։ Այդ ապօրինի ու պիղծ անկողնում ծնուեց Էդուարդը, Որին սովոր ենք մենք իշխան կոչել։ Կարող էի աւելի խիստ խօսքեր ասել, Բայց ի յարգ ոմանց, որ դեռ ապրում են, Ես ստիպուած եմ սանձել իմ լեզուն։ Արդ, ազնիւ իշխան, ընդունէք, խնդրեմ, Ձեզ առաջարկուող այս վեհ կոչումը։ Եթէ ոչ ի սէր մեր եւ մեր երկրի բարերարութեան, Գէթ ձեր վեհագոյն տոհմի պատիւը Ժանտ ժամանակի ապականումից փրկելու համար եւ իշխանութեան խափանուած կարգը վերականգնելու։

LORD MAYOR.
Վճռեցէք, միլորդ, ձեր քաղաքացիք յատուկ խնդրում են։

BUCKINGHAM.
Մի մերժէք, իշխան, նրանց ջերմ սէրը։

CATESBY.
Օ՛, երջանկացրէք դուք նրանց, տէր իմ։

GLOUCESTER.
Աւա՜ղ, ինչո՞ւ էք բառնում ինձ վրայ այդքան շատ hոգսեր. Ես պիտանի չեմ թէ՛ իշխանութեան, թէ՛ փառքի համար. Աղաչում եմ ձեզ, մի՛ պարսաւէք ինձ, Այդ բանը անել ես անկարող եմ, Ոչ էլ ուժ ունեմ ընդառաջելու։

BUCKINGHAM.
Եթէ մերժում էք իբրեւ խանդավառ մի ազգականի, Որ համաձայն չէ գահից զրկելու իր եղբօրորդուն, Չէ՞ որ ծանօթ ենք մենք ձեր հեզ սրտին եւ ազնիւ, բարի, մեղկ կարեկցութեան, Որ ցոյց էք տուել մերձաւորներին, Այլեւ ամենայն հեռաւորներին։ Դուք մեր խնդիրքը կ'ընդունէք թէ ոչ, Ձեր

եղբորորդուն արքայ չենք կարգի, Նրա փոխարէն մենք մէկ ուրիշի կը հանենք գահին, Իբրեւ ամօթ ու անկում ձեր փառքի։ Մեր վճիռն այս է, արդ, հրաժեշտ ձեզ, Գնանք, սիրելիք, չարժէ աղերսել։

GLOUCESTER.
Օ՛, մի կշտամբիր, ազնի՛ւ Բուկինգեմ։

[Buckingham exits with the Citizens.]

CATESBY.
Ետ կանչէք, տէր իմ, համաձայն եղէք, Երկիրն ափսոս է, տէր կանգնէք նրան։

GLOUCESTER.
Բռնութեա՞մբ կ'ուզէք աշխարհի հոգսը բառնալ ուսերիս։ Դէ լաւ, ետ կանչիր, քարից չեմ շինուած, Անզօր եմ ձեր այդ բարի խնդրի դէմ, Ընդդէմ իմ հոգու եւ խղճմտանքի։

[Buckingham and the Citizens return.]

GLOUCESTER [cont.]
Եղբայր Բուկինգեմ, եւ դուք, մեծանուն, իմաստուն այրեր, Քանի որ վճռել էք իմ մէջքին բառնալ Մեր երկրի բախտը կառավարութեան, ուզեմ թէ չուզեմ Ես պէտք է վերցնեմ այդ բեռը վրաս։ Բայց եթէ ձեր այս բուռն աղերսանքին Յաջորդեն լկտի զրպարտանք, բասրանք, Դուք ուժով պէտք է պատիւս փրկէք Ամենայն կեղտից ու պիղծ արատից, Չի գիտէ Աստուած, եւ դուք էք տեսնում, Որչափ հեռու եմ ես այդ փափագից։

LORD MAYOR.
Աստուած պահէ ձեզ։ Մենք այդ տեսնում ենք, Այդպէս էլ կ'ասենք։

GLOUCESTER.
Ճշմարիտն ասէք։

BUCKINGHAM.
Արդ, ողջունում եմ արժանի կոչմամբ. Կեցցէ՛ Ռիչարդը՝ Անգլիոյ արքան։

EVERYONE.
Ամէն։

BUCKINGHAM.
Վաղը յարմար չէ՞, որ թագադրենք ձեզ։

GLOUCESTER.
Ես համաձայն եմ, թէ կամիք այդպէս։

BUCKINGHAM.

Ուրեմն վաղը մենք այստեղ կը գանք, Այժմ հեռանանք ցնծագին սրտով։

GLOUCESTER.

[To the Bishop.] Արդ, դառնանք դարձեալ մեր սուրբ աղօթքին. Բարի երթ, եղբայր։ Ձեզ էլ բարի երթ, իմ բարեկամներ։

[All exit.]

]{}[

ACT IV. SCENE I.

Before the Tower. On one side of the stage Queen Elizabeth, Duchess of York and Dorset enter, while on the other Anne and the Duchess of Gloucester lead Lady Margaret Plantagenet, Clarence's young Daughter.

DUCHESS OF YORK.

Այս ո՞ւմն եմ տեսնում, ահա թոռնիկս՝ Պլանտագենետ, Իր հօրեղբօր կնոջ՝ Գլոստերի հետ։ Արեւս վկայ, նրանք Բերդ են գնում, Որ իշխաններին ողջունեն սրտանց։ - Բարի տեսանք, դուստր։

LADY ANNE.

Աստուած երկուսիդ Արժանի դարձնի բախտաւոր օրուայ։

QUEEN ELIZABETH.

Քեզ էլ, բարի քոյր։ Ո՞ւր ես շտապում։

LADY ANNE.

Դէպի Միջնաբերդ, դուք էլ, տեսնում եմ, Այնտեղ էք գնում միեւնոյն ուխտով՝ Շնորհաւորելու մեր իշխաններին։

QUEEN ELIZABETH.

Ապրե՛ս, բարի քոյր, միասին երթանք։ Բայց, ի դէպ, Բերդի պահապանը եկաւ։

[Brackenberry enters.]

QUEEN ELIZABETH [cont.]

Ասացէք, խնդրեմ, պարոն պահապան. Իշխանն ինչպէ՞ս է, եւ Եորքի դուքսը՝ իմ մանուկ որդին։

BRAKENBURY.

Ողջ եւ առողջ են, անգին տիրուհի։ Սակայն ներեցէք, Ես ձեզ նրանց մօտ չեմ կարող թոյլ տալ. Արքան խստօրէն արգելք է դրել։

QUEEN ELIZABETH.

Արքա՞ն։ Ի՞նչ արքայ։

BRAKENBURY.

Ուզում եմ ասել՝ լորդ հոգաբարձուն։

QUEEN ELIZABETH.

Աստուած փրկի նրան այդ վեհ կոչումից։ Պարի՞սպ է քաշել իմ եւ նրանց միջեւ։ Ես նրանց մայրն եմ. ո՞վ կը յանդգնի մուտքս խափանել։

DUCHESS OF YORK.
Իսկ ես հօր մայրն եմ. պէտք է տեսնեմ նրանց։

LADY ANNE.
Ես հօրաքոյրն եմ, բայց մայր եմ եղել երկուսի համար։ Տար ինձ նրանց մօտ, թող ինձ մեղադրեն, ես ձեր փոխարէն պատասխան կը տամ։

BRAKENBURY.
Ո՛չ, ո՛չ, տիրուհի՛, չեմ կարող թոյլ տալ, Երդում եմ տուել, ուստի ներէք ինձ։

[As Brakenbury exits Stanley enters.]

STANLEY.
Թէ հանդիպէինք մենք մի ժամ յետոյ, Եորքի դքսուհուն կ'ողջունէի որպէս սիրող մօր Եւ հանդիսատես երկու յարգարժան չքնաղ թագուհու։

[To Lady Anne.]

STANLEY [cont.]
Գնանք, տիրուհի, շտապ պէտք է գաք, Որ Վեստմինստերում թագուհի օծուէք Ռիչարդի համար։

QUEEN ELIZABETH.
Ա՜խ, կտրէք իսկոյն կրծքիս կապերը, Որ ճնշուած սիրտս ազատ բաբախի, Թէ ոչ՝ վայր կ'ընկնեմ այդ ահեղ գոյժից։

LADY ANNE.
Օ՜, չարաղէտ բօթ, դժնի՜ նորութիւն։

DORSET.
Ա՜խ, հանգստացէք։ Ինչպէ՞ս ես, մայր իմ։

QUEEN ELIZABETH.
Օ՜, փախի՛ր, Դորսետ, մի՛ խօսիր ինձ հետ, սուրա այստեղից, Անկումն ու մահը հետապնդում են քեզ կրնկակոխ։ Մօրդ անունը չարագուշակ է իր որդոց համար։ Եթէ ուզում ես մահից խուսափել, գնա, ծովն անցիր։ Ռիչմոնդի մօտ գնա, փախիր դժոխքից, Փախիր այս անարգ սպանդանոցից, Ուր առանց քեզ էլ մեռնողներ շատ կան։ Մի ստիպիր ինձ, որ Մարգարիտի անէծքից դողամ, Մեռնեմ մօր փառքից, ե՛ւ կնոջ փառքից, ե՛ւ գահից զրկուած։

STANLEY.
Ձեր այդ խորհուրդը խելօք է, թագուհի։ Ժամը թռչում է, օգտուէք առիթից։ Ձեր մասին որդուս նամակ կը գրեմ. Որ ճանապարհին դիմաւորի ձեզ։ Էլ մի յապաղէք յիմար ծուլութեամբ։

DUCHESS OF YORK.

Օ՛, թշուառութեան մահասփիւռ հողմ, Անիծեալ իմ արգանդ՝ մահաբեր մահին, Մի թունաւոր օձ աշխարհ վիժեցիր, Որի աչքն անգամ մարդախոշոշ է։

STANLEY.

Գնանք, տիրուհի, շտապ էք կանչուած։

LADY ANNE.

Կը գամ, թէեւ խիստ ընդդէմ է կամքիս։ Օ՛, բարի Աստուած, երանի թէ այդ ոսկեձոյլ թագը, Որ պիտի կամար կապէ ճակատիս, Հրաշէկ այրող մի պողպատ լինէր՝ կիզէր ուղեղս։ Թող ես մահառիթ թոյնով օծանուեմ եւ մեռնեմ, նախքան մարդիկ կը գոչեն. «Կեցցէ՛ թագուհին»։

QUEEN ELIZABETH.

Գնա, տարաբախտ, չեմ նախանձում քեզ, Եւ գլխիդ մի բեր ոչ մի չար արարք։

LADY ANNE.

Չար արա՞րք։ Ինչո՞ւ։ Երբ նա, որ այժմ իմ ամուսինն է, Եկաւ այն պահին, երբ ողբում էի ես Հենրու վրայ, Երբ բոլորովին դեռ չէր լուացել ձեռքի արիւնը, Որ նա քամել էր իմ սուրբ ամուսնուց եւ այն սուրբ մարդուց, որի դագաղին Հետեւում էի իբրեւ սգաւոր։ Օ՛, երբ Ռիչարդի դէմքին նայեցի, Փափագս այս էր. «Անիծեալ լինես», - ասացի նրան, «Որ ինձ իմ այսքան ծաղիկ հասակում որբ պառաւ դարձրիր։ Երբ ամուսնանաս, թող քո մահիճը վշտի բոյն դառնայ, Եւ թող քո կինը, - եթէ այդպիսի մի անմիտ գտնուի, - Առաւել թշուառ դառնայ քեզանով, Քան թէ ինձ դարձրիր ամուսնուս մահով»։ Բայց տե՛ս իմ բախտը։ Կանացի սիրտն իմ, - Աւելի արագ, քան թէ կարող եմ անէծքս կրկնել.- Խիստ գերուեց նրա մեղրոտ խօսքերով, Եւ ես զոհ դարձայ իմ իսկ անէծքին։ Այն պահից ի վեր աչքս չի փակուած, Եւ բնաւ մի ժամ նրա անկողնում Քնի ոսկեղէն ցօղով չեմ արբած, Բայց միշտ ցնցուելով՝ զարթնել եմ նրա զառանցանքներից։ Բացի դրանից, նա ինձ ատում է հօրս պատճառով Եւ, անշուշտ, շուտով ինձ էլ կը լքի։

QUEEN ELIZABETH.

Ողջ լեր, ով անբախտ, ես քեզ խղճում եմ, գանգատդ դառն էր։

LADY ANNE.

Ես էլ չափազանց կարեկցում եմ քեզ։

QUEEN ELIZABETH.

Դէ՛, մնաս բարով, փառքից խուսափող։

LADY ANNE.

Ողջ լեր, որ փառքին հրաժեշտ ես տալիս։

DUCHESS OF YORK.

[To Dorset.] Ռիչմոնդի մօտ գնա, բախտաւոր լինես։ [To Anne.] Ռիչարդի մօտ գնա, հրեշտակները թող պահպանեն քեզ։ [To Queen Elizabeth.] Դու մտիր տաճար, տէր ընդ քեզ լինի, Իսկ ես՝ գերեզման, որ հանգստանամ ... Ես ութսուն տարի լոկ վիշտ եմ տեսել, Մէկ ժամ բերկրանքիս յաջորդել է մէկ շաբաթուայ կսկիծ։

QUEEN ELIZABETH.

Ա՛խ սպասեցէք, եւ նայէք ինձ հետ դէպի Աշտարակ. Աւա՜ղ, գթացէք իմ գառնուկներին, հնամեայ քարեր, Որ պարիսպներիդ ներսում են փակուած ահեղ նախանձով։ Դու բիրտ օրօրոց այդքան սիրասուն ու անմեղ մանկանց, Քարասի՛րտ դայակ, մռայլ խաղընկեր հեզ իշխաններիս. Հսկի՛ր, պահպանի՛ր իմ զաւակներին։ Խելայեղ վշտով մնաս բարով եմ ասում քարերիդ։

[All exit.]

][][

ACT IV. SCENE II.

London. The palace. Kking Richard III enters, in pomp, crowned, followed by Buckingham and Catesby.

KING RICHARD.

Դուք մի կողմ կանգնէք։ Ազնիւ Բուկինգե՛մ։

BUCKINGHAM.

Այստեղ եմ, տէր իմ։

KING RICHARD.

Տուր ինձ քո ձեռքը։

[Ascending he sits on the throne.]

KING RICHARD [cont.]

Ես քո խորհրդով եւ քո օգնութեամբ հասայ այս գահին, Արդեօ՞ք այս փառքը մէկ օր կտեւի, Թէ՞ երկար օրեր պիտի վայելենք։

BUCKINGHAM.

Թող յաւէտ տեւի։

KING RICHARD.

Այժմ, Բուկինգեմ, պիտի փորձեմ քեզ, Կ'ուզեմ իմանալ՝ իրա՞ւ դու մաքուր ոսկուց ես ձուլուած. Մանուկ Էդուարդը տակաւին ողջ է... դու ինձ հասկացա՞ր.

BUCKINGHAM.

Լսում եմ, արքայ։

KING RICHARD.

Կամիմ արքայ դառնալ։

BUCKINGHAM.

Բայց դուք արքայ էք, վեհափառ տէր իմ։

KING RICHARD.

Արքայ՛, արքա՛յ եմ։ Այդպէս է, սակայն Էդուարդը ողջ է։

BUCKINGHAM.

Այդ ճիշտ է, տէր իմ։

KING RICHARD.
«Այդ ճիշտ է, տէր իմ»։ Ուզում ես ասել՝ թող Էդուարդն ապրի։ Այդքան թանձրամիտ երբեք չես եղած, Միտքս պարզ ասեմ. ազատուել կ'ուզեմ այդ շան բճերից, եւ անմիջապէս. յապաղել պէտք չէ։ Այժմ ի՞նչ կ'ասես։ Խօսքդ կարճ կապիր։

BUCKINGHAM.
Ձեր կամքն է, տէր իմ։

KING RICHARD.
Պա՛հ, պա՛հ, տեսնում եմ՝ սառոյց ես կտրել, խանդդ սառել է, Գուցէ յօժար չե՞ս, որ նրանք մեռնեն։

BUCKINGHAM.
Արքայ, թոյլ տուէք՝ մի քիչ մտածեմ. Ապա այդ մասին պատասխան տամ ձեզ, Ես իմ վճիռը շատ չեմ ուշացնի։

[Buckingham exits.]

CATESBY.
[Sotto voce with a Stranger.] Արքան զայրացաւ։ Տե՛ս, շուրթն է կծում։

KING RICHARD.
Լաւ է՝ գործ բռնեմ ես հաստագլուխ, Միամիտ, ապուշ մանուկների հետ, որ սուր հայեացքով Չեն զննում հոգիս։ Գոռոզ Բուկինգեմը աչալուրջ դարձաւ։ - Ապա, մանկլաւի՛կ։

PAGE.
Լսում եմ, արքայ։

KING RICHARD.
Չգիտե՞ս մէկին, որ ապականիչ ոսկու զօրութեամբ Կատարի գաղտնի մի սպանութիւն։

PAGE.
Գիտեմ մի դժգոհ ազնուականի, Որի վեհ հոգին եւ սուղ քսակը հաշտ չեն իրար հետ։ Այդ մարդու համար մի ոսկին արժէ քսան ճարտասան. Նա ոսկու ուժով պատրաստ է ամէն ոճրագործութեան։

KING RICHARD.
Անունը ի՞նչ է։

PAGE.
Տիռել է, տէր իմ։

KING RICHARD.
Մասամբ ծանօթ եմ, շուտ գնա, կանչիր։

[The Page exits.]

KING RICHARD [cont.]
Ես այսուհետեւ նենգ Բուկինգեմին էլ չեմ հաղորդի իմ գաղտնիքները։ Առանց յոգնութեան ամբողջ ժամանակ վազել է ինձ հետ, Այժմ ուզում է ազատ շո՞ւնչ քաշել։

[Stanley enters.]

KING RICHARD [cont.]
Ի՞նչ լուրեր ունես։

STANLEY.
Մարկիզ Դորսետը փախել է, տէր իմ, Կոմս Ռիչմոնդի մօտ, ծովից էլ այն կողմ, Ուր նա է ապրում։

KING RICHARD.
Մօտ եկ, Քետսբի. շտապ հռչակիր, Որ կինս՝ Աննան, ծանր հիւանդ է։ Կը հրամայեմ, որ տանը մնայ։ Շուտ մի հասարակ ազնուական գտիր, Որ Կլարենսի աղջկան պսակեմ։ Որդին յիմար է, ես երկիւղ չունեմ։ Ի՞նչ ես յօրանջում։ Կրկնում եմ դարձեալ. Ասա՝ թագուհի Աննան մեռնում է, Արագ հռչակիր. իրենց արմատից ջնջել եմ ուզում Ինձ սպառնացող բոլոր յոյսերը։ Քետսբին գնում է։ Պէտք է պսակուեմ եղբօրս աղջկայ հետ, Այլապէս գահս կանգնած է փխրուն ապակու վրայ։ Սպանել նրա երկու եղբօրը եւ այնուհետեւ կին առնել նրան, Անյոյս ուղի է յաղթութեան համար։ Բայց ես արեան մէջ Այնպէս եմ խրուած, որ մի ոճիրը ոճիր է ծնում։ Արտասուող գութը օթեւան չունի իմ աչքերի մէջ։

[As Catesby exits the Page enters with Tyrrel.]

KING RICHARD [cont.]
Անունդ Տիռե՞լ է։

TYRREL.
Ջեմս Տիռել, արքայ, ձեր խոնարհ ծառան։

KING RICHARD.
Իրա՞ւ ես ասում։

TYRREL.
Կարող էք ստուգել։

KING RICHARD.
Արդեօք սիրտ կ՚անէ՞ս իմ ծանօթներից մէկին սպանել։

TYRREL.
Այո՛, տէր արքայ, Բայց մէկը քիչ է, երկուսին կ՚ուզեմ։

KING RICHARD.
Ուրեմն սպանիր։ Երկու ոխերիմ թշնամի ունեմ, Որ վրդովում են հանգստութիւնս եւ քաղցրիկ քունս։ Ես նրանց, Տիռել, քո ձեռքն եմ յանձնում, դատաստանը տես. Իմ խօսքը այն բիճ մանկանց մասին է, որ Բերդի մէջ են։

TYRREL.
Իրաւունք տուէք նրանց մօտ մտնեմ Եւ այդ երկիւղից ես ձեզ կ՚ազատեմ մի ակնթարթում։

KING RICHARD.
Անոյշ ես երգում։ Եկ այստեղ, Տիռել։ Ահա անցաթուղթ Բերդը մտնելու։ Մօտ բեր ականջդ։

[Whispers to Tyrrel.]

KING RICHARD [cont.]
Միայն այդքանը, աւելին՝ ոչինչ։ Եթէ կատարես, Ես քեզ կը սիրեմ, կը վարձատրեմ քեզ։

TYRREL.
Իսկոյն վերջ կը տամ։

[As Tyrrel exits Buckingham enters.]

BUCKINGHAM.
Տէր իմ, ձեր վերջին պահանջը լրիւ Կշռադատեցի։

KING RICHARD.
Այդ մի կողմ թողնենք։ Դորսետն է փախել կոմս Ռիչմոնդի մօտ։

BUCKINGHAM.
Լսեցի, արքայ։

KING RICHARD.
Իսկ նա քո կնոջ որդին է, Ստենլի, այդ լաւ իմացիր։

BUCKINGHAM.
Տէր իմ, խնդրում եմ ես այն պարգեւը, որ խոստացել էք Ձեր ազնիւ պատուով եւ ձեր հաւատով։

Հերֆորդ գաւառը՝ շարժական կայքով Ինձ է պատկանում՝ ըստ այդ խոստումի։

KING RICHARD.
Լսիր, Ստենլի, իսկիր կնոջդ, եթէ նամակով Նա կապ հաստատի կոմս Ռիչմոնդի հետ, պատասխան կը տաս։

BUCKINGHAM.
Ի՞նչ կ'ասէք, տէր իմ, արդար խնդրանքիս։

KING RICHARD.
Ես լաւ յիշում եմ. Հենրի Վեցերորդը Գուշակել էր, որ Ռիչմոնդը պէտք է թագաւոր դառնայ, Երբ դեռ Ռիչմոնդը փոքրիկ մանուկ էր։ Թագաւո՛ր, այո՛։ Գուցէ՛, թերե՛ւս...

BUCKINGHAM.
Տէ՛ր իմ...

KING RICHARD.
Բայց այդ մարգարէն անզօր գտնուեց Գուշակել, որ ես իրեն կը սպանեմ։

BUCKINGHAM.
Ձեր՝ ինձ խոստացած գաւառը՛, արքայ...

KING RICHARD.
Յիշեցի, Ռիչմոնդ։ Վերջերս, երբ ես Էքսետերում էի, Քաղաքապետը մի բերդ ցոյց տուեց եւ ասաց, որ դա Ռուժմոնդ ամրոցն է. իսկոյն սոսկացի, Քանզի մի անգամ մի իռլանդացի գուսան ինձ ասաց, Որ ես Ռիչմոնդին տեսնելուց յետոյ երկար չեմ ապրի։

BUCKINGHAM.
Տէ՛ր իմ...

KING RICHARD.
Ժամը քանի՞սն է։

BUCKINGHAM.
Համարձակւում եմ նորից յիշեցնել Ձեր խոստումն, արքայ։

KING RICHARD.
Ժամը քանի՞սն է։

BUCKINGHAM.
Տասի զարկին մօտ։

KING RICHARD.
Թող զարկի ուրեմն։

BUCKINGHAM.
Իսկ ինչո՞ւ զարկի։

KING RICHARD.
Քանզի կապկի պէս անվերջ ճօճւում ես Դու իմ մտքերի եւ խնդրիդ միջեւ. Այսօր շռայլ չեմ։

BUCKINGHAM.
Գոնէ ասացէք, կը ստանա՞մ, թէ՞ ոչ։

KING RICHARD.
Պա՛հ, պա՛հ, սրան տես, Արդէն զզւեցրիր, տրամադիր չեմ։

[All exit save Buckingham.]

BUCKINGHAM.
Այս անարգա՞նքն է վաստակն անբասիր իմ ծառայութեան։ Սրա՞ համար նրան արքայ կարգեցի։ Օ՜, եկ մտածեմ Հեստինգսի վրայ Եւ անմիջապէս Բրեկնոք փախչեմ, Քանի տակաւին գլուխս ողջ է։

[Exits.]

][][

ACT IV. SCENE III.
The same. Tyrrel enters.

TYRREL.
Դժնեա՜յ, արիւնռուշտ գործը կատարուեց, Ամենացնցող եւ անագորոյն սպանութիւնը, Որի պէս ոճիր դեռ այս երկիրը երբեք չի գործել։ Դայտն ու Ֆորեստը, որոնց վարձեցի, Որ այս անողորմ ջարդը կատարեն, Թէպէտ չարագործ սրիկաներ են, արնախում շներ, Բայց նրանց տխուր եւ սրտաճմլիկ մահը պատմելիս, Գթից հալուելով, հեկեկում էին մանուկների պէս. «Ահա այսպէս էին քնած այդ անմեղ երեխաները», - Ասում էր Դայտը, - «Ահա այսպէս էին իրարու գրկել Իրենց անարատ, լոյս բազուկներով, - պատմեց Ֆորեստը, - Նրանց շուրթերը համբուրւում էին Ինչպէս չորս վարդեր՝ մի ոստի վրայ ամռան պերճանքում։ Բարձին ընկած էր մի աղօթագիրք, Երբ ես այդ տեսայ, - ասաց Ֆորեստը, - ձեռքս թուլացաւ, - Բայց չար սատանա՜ն...», - այս խօսքի վրայ սրիկան լռեց։ Նրա պատմածը աւարտեց Դայտը. «Եւ մենք խեղդեցինք Այդ հրաշակերտ եւ անուշաբոյր երկը բնութեան, Որի նմանը նա դեռ չի կերտել Ստեղծագործութեան առաջին ծագից»։ Եւ նրանք, խղճից խայթուած, հեռացան, Չէին կարող խօսել։ Ես նրանց թողի, Որ շուտ լուր բերեմ արնոտ արքային։ Բայց ահա եւ նա։

[King Richard enters.]

TYRREL [cont.]
Կեցցէ՜ իմ արքան։

KING RICHARD.
Քո լուրը, Տիռել, ինձ կ'երջանկացնի՞։

TYRREL.
Եթէ պատուէրիդ կատարումն, արքայ, Երջանկութիւն է պատճառելու ձեզ, արդ, երջանկացէք. Այն կատարուած է։

KING RICHARD.
Նրանց մեռած տեսա՞ր։

TYRREL.
Անձամբ տեսայ, տէր իմ։

KING RICHARD.
Իսկ թաղուած տեսա՞ր։

TYRREL.
Նրանց թաղել է Բերդի երէցը, Բայց որտե՞ղ, ինչպէ՞ս, ճշմարիտն ասած՝ ես այդ չգիտեմ։

KING RICHARD.
Ընթրիքից յետոյ շտապ մօտս եկ եւ նրանց մահուան ընթացքը պատմիր, Մտածիր նոյնպէս, թէ ինչ պարգեւ ես խնդրում քեզ համար, Որ անմիջապէս իղձդ կատարեմ։ Դէ՛, երթաս բարով։

TYRREL.
Խոնարհ մեկնում եմ։

[Tyrrel exits.]

KING RICHARD.
Կլարենսի որդուն փակի տակ եմ դրել, Աղջկան տուեցի հասարակ մարդու։ Էդուարդի որդիք հայր Աբրահամի գրկումն են քնած, Իսկ կինս՝ Աննան, բարի գիշեր է մաղթել աշխարհին։ Այժմ ես գիտեմ, Ռիչմոնդն ուզում է կնութեան առնել Եղբօրս դստեր՝ Եղիսաբէթին, եւ այդ շաղկապով ձեռք մեկնել թագին։ Բայց ես թոյլ չեմ տայ. արդ, գնամ մօտը որպէս փեսացու։

[Catesby enters.]

CATESBY.
Իմ արքա՛յ...

KING RICHARD.
Համարձակ եկար, բերած լուրերդ բարի՞ են, թէ՞ չար։

CATESBY.
Չար են, իմ արքայ։ Իլին փախել է կոմս Ռիչմոնդի մօտ, Իսկ Բուկինգեմը, վելշացիների գլուխն անցնելով, Ռազմադաշտ իջաւ։ Նրա ուժերը սաստիկ աճում են։

KING RICHARD.
Ռիչմոնդն ու Իլին անշուշտ աւելի վտանգաւոր են, Քան Բուկինգեմը՝ իր յանդուգն զօրքով։ Եկ, փորձով գիտեմ, որ երերումը Կապարէ ծառան է դանդաղկոտութեան, Դանդաղութիւնը տանում է դէպի պղերգ թուլութիւն։ Արդ, քո հրեղէն թեւերն արձակիր, ով արագութիւն, Դու, արքայական սրընթաց Հերմէս։ Ժողովէք զօրքը։ Ասպարն է այժմ իմ խորհրդատուն, Յապաղել պէտք չէ, երբ ոսոխը մեզ մարտի է կոչում։

[All exit.]

][][

ACT IV. SCENE IV.

Same. Before the palace. Queen Margaret enters.

QUEEN MARGARET.

Յաջողութիւնը հասունանալով Մահուան գարշահոտ երախն է ընկնում։ Այստեղ ես լռիկ դիտել եմ ծածուկ Անկումը բոլոր թշնամիներիս։ Այժմ վկայ եմ դառնում դժնդակ մի նախամուտքի. Գնամ Ֆրանսիա։ Ելքը, վստահ եմ, Կը լինի նոյնչափ ծանր ու ողբալի. Սակայն նահանջիր, դժբախտ Մարգարիտ, տե՞ս ով է գալիս։ Մի կողմ է քաշւում։

[Queen Elizabeth and the Duchess of York enter.]

QUEEN ELIZABETH.

Ա՜խ, իմ թերահաս, անբա՛խտ իշխաններ, իմ հե՛զ գառնուկներ, Ա՜խ, իմ կոկոններ, նորելուկ ծիլեր, Ձեր հոգիները եթէ տակաւին թռչում են օդում եւ դեռ փակուած չեն կայանում յաւէրժ, Թեթեւ թեւերով դուք իմ մօտ ճախրէք եւ ձեր դժբախտ մօր ողբերը լսէք։

QUEEN MARGARET.

[Aside.] Ճախրէք եւ ասէք նրան իրաւամբ, Որ ձեր վառ լոյսը վճարուեց մահուամբ։

DUCHESS OF YORK.

Այնքան շատ ցաւեր փշրել են ձայնս, Որ վա՜յ գոչելուց լեզուս յոգնել է, Ա՜խ, ինչո՞ւ մեռար, Պլանտագենետ, իմ անգին Էդուարդ։

QUEEN MARGARET.

[Aside.] Մէկը միւսի փոխարէն մեռաւ, Էդուարդն Էդուարդի մահուան գինն առաւ։

QUEEN ELIZABETH.

Աստուած, դու ինչո՞ւ լքեցիր այդչափ անմեղ գառներին եւ գայլի երախ նետեցիր նրանց։ Քնա՞ծ էիր դու, երբ այդ սոսկալի ոճիրը գործուեց։

QUEEN MARGARET.

[Aside.] Երբ ամուսինս եւ որդիս մեռան։

DUCHESS OF YORK.

Դու, վախճանուած կեանք, կուրացած հայեացք, շրջիկ ուրուական, Վշտի տեսարան, երկրի նախատինք, գերեզմանի տուրք, Դժնի օրերի յիշատակարան, համառօտ քաղուածք, Ով դու անհանգիստ, հանգչիր Անգլիոյ սրբազան հողին, Որ հանիրաւի պղծուել է անմեղ արիւն ըմպելուց։

[She sits down.]

QUEEN ELIZABETH.
Աւա՜ղ, քեզ վրայ նստել չեմ կարող, Շիրիմ եմ տենչում, ո՜վ հայրենի հող, Որ ոսկորներս ծածկեմ նրա մէջ. Ա՜խ, ինձնից բացի ո՞վ պատճառ ունի ողբալու անվերջ։

[She sits down next to the Duchess.]

QUEEN MARGARET.
Եթէ գերագոյն պատիւը վաղեմի վշտին է տրւում, Իմ վիշտը հին է, ճանապա՜րհ բացէք, Աւագութիւնը տուէք իմ ողբին։

[She sits down next to both.]

QUEEN MARGARET [cont.]
Եթէ կսկիծը ընկեր է սիրում, Իմը լսելով՝ չափեցէք ձերը. Մի Էդուարդ ունէի, Ռիչարդն սպանեց իմ անգին որդուն, Ամուսին ունէի, Ռիչարդն սպանեց իմ սիրած մարդուն, Քեզ մի Էդուարդ կար, նոյն ոճրագործը նրան սպանեց, Քեզ մի Ռիչարդ կար, այդ նոյն Ռիչարդը նրան կործանեց։

DUCHESS OF YORK.
Բայց ես մի ուրիշ Ռիչարդ ունէի, դու սպանեցիր, Մի Ռետլենդ էլ կար, դո՜ւ նրա մահուանն օժանդակեցիր։

QUEEN MARGARET.
Կլարենսիդ էլ Ռիչարդն սպանեց։ Արգանդիդ խորքից լոյս աշխարհ սողաց Դժոխքի շունը, որ մեզ բոլորիս որսում է մահով. Աչքը չբացած այդ գամփռը արդէն ժանիքներ ունէր՝ Անմեղ գառներին պատառոտելու, Որ նրանց մատաղ արիւնը լակի։ Այդ պիղծ աւերիչն արարչագործի, Այդ բռնակալը, որի նմանը աշխարհը չի տեսել, Այդ գերդահիճը, որը իշխում է Հառաչող մարդկանց արցունքների մէջ, Նա քո արգանդից արձակուեց աշխարհ, Որ մեզ սրբելով՝ գերեզման լցնի։ - Ո՜վ դու ուղղամիտ եւ արդարադատ անվրէպ Աստուած, Գոհանամ քեզնից, որ այդ բղջախոհ կատաղած շունը Լափում է նաեւ իր սեփական մօր մարմնի բերքերը Եւ նրա ողբը միախառնում է մեր հառաչանքին։

DUCHESS OF YORK.
Օ՜, Հենրիկոսի տարաբախտ այրի, Մի ուրախացիր ցաւերիս վրայ, Վկայ է Աստուած, որ արտասուել եմ վշտերիդ համար։

QUEEN MARGARET.
Աւա՜ղ, ներիր ինձ, վրէժի եմ ծարաւ եւ նոր եմ դրանով անզուսպ յագենում։ Էդուարդիս սպանող Էդուարդդ մեռաւ, Երկրորդ Էդուարդդ մահով վճարեց Էդուարդիս մահը. Քո մանուկ Եորքը լոկ հաւելուած էր, քանզի երկուսն էլ Չեն հաւասարուի որդուս կորստին։ Էդուարդիս սպանող Կլարենսդ մեռաւ. Բոլոր վկաներն այս ողբերգութեան՝ Ռիւերս, Վոգեն, Գրի եւ լիրբ Հեստինգսը, Շատ վաղ խցկուեցին մութ շիրիմներում։ Լոկ Ռիչարդն է ողջ, դժոխքի դժխեմ այդ գործակալը, Որի պաշտօնն է հոգիներ գնել եւ նետել դժոխք։ Բայց մօտենում է Նրա եղկելի վախճանն անողորմ։ Հողն յօրանջում է,

դժոխքը՝ վառւում, դեւերը՝ գոռում, Հրեշտակները լուռ աղօթում են, որ նրան շուտով Այնտեղից տանեն։ Բարեգութ Աստուած, կտրիր դու նրա հանգոյցը կեանքի, Որ կարողանամ ապրել եւ ասել. «Պիղծ շունը սատկեց»։

QUEEN ELIZABETH.
Ա՜խ, այն ժամանակ դու գուշակեցիր, որ կը գայ մի օր, Երբ ես կ'անիծեմ այդ փքուած սարդին, Այդ սապատաւոր անարգ դօդօշին, Եւ քո անէծքի կարիքը կը զգամ։

QUEEN MARGARET.
Ես այն ժամանակ քեզ անուանեցի փառքիս ունայն փայլ, Դողդոջուն ստուեր եւ կեղծ թագուհի, Ողբալի հանդէսն իմ անցեալ կեանքի։ Մեծ ողբերգութեան շողոմ վարագոյր. Բարձրացար կատար, որ այդ բարձունքից գահավիժես վայր։ Մի տարաբախտ մայր երկու զաւակի, որ արագ անցան. Վաղեմի փառքիդ տխուր զառանցանք, մի սին պղպջակ. Պատուի յիշատակ, պերճաշուք դրօշ, Որ ենթակայ է ամէն թշնամու շանթող հարուածին։ Դու, բեմը պճնող միմոս թագուհի, Ամուսինդ ո՞ւր է, եղբայրներդ ո՞ւր են, Որտե՞ղ են, ասա, քո երկու որդիք։ Ո՞ւր է երբեմնի ուրախութիւնդ. Ո՞վ է քո առաջ խոնարհւում հիմա եւ բացականչում. «Կեցցէ՜ թագուհին»։ Իշխաններն ո՞ւր են, որ մէջք էին ծռում եւ շողոմում քեզ, Ո՞ւր է ամբոխը, որ քո հետեւից խուռն ընթանում էր։ Այդ ամէնն անցան, այժմ դիտիր քեզ, ի՞նչ ես դու հիմա. Բախտաւոր կին չես, այլ թշուառ այրի, Մի զուարթ մօր տեղ՝ սգաւոր մի մայր, Քեզ էին խնդրում, ինքդ ես խնդրարկու։ Մի թագուհու տեղ՝ տառապեալ ստրուկ՝ հոգսի թագ գլխիդ։ Ինձ էիր ծաղրում, ես եմ ծաղրում քեզ։ Ամէնքը քեզնից վախենում էին, Մէկն էլ հերիք է, որ դու վախենաս։ Քո հրամանով աշխարհն էր շարժւում, Ո՞վ է բանի տեղ քեզ դնում հիմա։ Այսպէս շուռ եկաւ բախտի անիւը եւ ժամանակի աւար դարձրեց քեզ. Լոկ յիշողութիւն մնաց քո փառքից, Որ դու, տեսնելով ներկայ վիճակդ, աւելի տանջուես։ Գահս խլեցիր, արդ, յափշտակիր Նաեւ վշտերիս արդար բաժինը։ Գոռոզ ուսերիդ դժնդակ բեռիս կէս լուծն է ընկել. Այժմ լիովին ես կը թօթափեմ յոգնած գլուխս եւ ամբողջ բեռը կը դնեմ մէջքիդ. Ողջ լեր, Եորքի կին։ Ողբի թագուհի, դէ, մնաս բարով. Գնամ Ֆրանսիա, որ անգլիական վէրքերս բուժեմ։

QUEEN ELIZABETH.
Օ՜, կա՜ց, հմուտ ես դու անէծքի մէջ։ Սովորեցրու ինձ՝ ինչպէս անիծեմ իմ ոսոխներին։

QUEEN MARGARET.
Գիշերն անքուն կաց, ցերեկը՝ քաղցած։ Քո մեռած փառքը բաղդատիր ներկայ տառապանքիդ հետ. Երեխաներիդ մտքով աւելի չքնաղ համարիր, քան թէ եղել են։ Իսկ մարդասպանին՝ աւելի զազիր, քան թէ իրօք է։ Այդպէս կորուստդ պճնազարդելով՝ վատ յանցագործին Հրէշ կը դարձնես. Ահա անէծքի եղանակը քեզ։

QUEEN ELIZABETH.
Իմ խօսքը բութ է, դու քո անէծքով հեսանիր նրան։

QUEEN MARGARET.
Քո վշտով սրիր, եւ նա կը շողայ իմ խօսքի նման։

[Exits.]

DUCHESS OF YORK.
Այս տառապանքին շա՞տ խօսքեր են պէտք։

QUEEN ELIZABETH.
Ա՛խ, նրանք հողմուտ փաստաբաններ են խեղճերի վշտին. Ունայն ժառանգներ անկտակ խինդի, խեղճ մունետիկներ մեր թշուառութեան։ Տեղ տուէք նրանց, խօսքերը թէպէտ օգուտ բերող չեն, Բայց նրանք սիրտը թեթեւացնում են։

DUCHESS OF YORK.
Եթէ այդպէս է, արձակիր լեզուդ, եկ գնանք ինձ հետ եւ մեր անողորմ խօսքերով խեղդենք Նզովեալ որդուս, որ երկու անմեղ զաւակիդ խեղդեց։ Թմբկահարութիւն։ Նրա թմբուկն է, համարձակ խօսիր։

[King Richard enters with his entourage and army, with drums and trumpets.]

KING RICHARD.
Ո՞վ է յանդգնում երթս խափանել։

DUCHESS OF YORK.
Նա, որ կարող էր քո երթը փակել դէպի լոյս աշխարհ՝ խողխողելով քեզ իր պիղծ արգանդում, Որ չգործէիր դու այսքան չարիք եւ սպանութիւն։

QUEEN ELIZABETH.
Ճակատդ սքօղել ես ոսկեղէն թագով, Որ դու շորթել ես իր պատկանեալից։ Դրա փոխարէն ճակատիդ վրայ Պէտք է դրոշմել եղեռն իշխանի եւ որդիներիս ու եղբայրներիս մահը սոսկալի։ Պատասխանիր ինձ, գարշելի ստրուկ, զաւակներս ո՞ւր են։

DUCHESS OF YORK.
Դու, դօդօ՜շ, դօդօ՜շ, ասա՝ քո եղբայր Կլարենսն ո՞ւր է. եւ նրա որդին՝ մանուկ Էդուարդը։

QUEEN ELIZABETH.
Ազնիւ Ռիւերսը՜, Վոգենը՜, Գրի՜ն։

DUCHESS OF YORK.
Որտե՞ղ է, ասա, բարի Հէստինգսը։

KING RICHARD.
Փողերն հնչեցրէք, թմբուկներ զարկէք, Որ այս անպատկառ կանանց ձայները երկինք չհասնեն, չարախօսում են նրանք Աստծուն։

[War drums and alarms are heard.]

KING RICHARD [cont.]
Քաղցրութեամբ խօսէք, եթէ ոչ՝ ռազմի փողահարութեան ահեղ որոտով։ Այսպէս կը խեղդեմ ձեր վայնասունը։

DUCHESS OF YORK.
Դու իմ որդի՞ն ես։

KING RICHARD.
Այո՛, փառք Աստծոյ, հօրս շնորհիւ եւ ձեր շնորհիւ։

DUCHESS OF YORK.
Արդ, համբերութեամբ լսիր ցասումն իմ։

KING RICHARD.
Դուք ինձ տուել էք մի անզուսպ երակ, Որ անկարող է պարսաւ հանդուրժել։

DUCHESS OF YORK.
Օ՛, թոյլ տուր խօսեմ։

KING RICHARD.
Խօսէք, ուրեմն, բայց ես չեմ լսի։

DUCHESS OF YORK.
Ես շատ քաղցրութեամբ կ'աշխատեմ խօսել։

KING RICHARD.
Եւ հակիրճ, մայր իմ, ես շտապում եմ։

DUCHESS OF YORK.
Այդքան շտա՞պ ես։ Ես սպասել եմ քեզ անչափ երկար, Աստծուն է յայտնի, թէ ի՛նչ տանջանքի եւ տագնապի մէջ։

KING RICHARD.
Բայց երբ ծնուեցի, ցաւերդ չանցա՞ն։

DUCHESS OF YORK.
Ո՛չ, խաչը վկայ, ինքդ լաւ գիտես, Դու աշխարհ եկար, որ դժոխք դարձնես աշխարհն ինձ համար։ Ահեղ երկունքով ես քեզ ծնեցի. Քո մանկութիւնը կամակոր էր շատ, Քո դպրոցական հասակն ահեղ էր,

անգութ, կատաղի, Պատանութիւնդ քաջ էր, աներկիւղ, ըմբոստ, դիմագրաւ, Իսկ երբ մեծացար, դարձար խորամանկ, գոռոզ, արնախում, Նենգ ու դաւադիր, Առաւել խոնարհ, սակայն չարութեամբ խիստ աղէտաբեր։ Արդեօք կարո՞ղ ես յիշել գէթ մի ժամ, Որ ինձ սփոփանք պատճառած լինես։

KING RICHARD.
Չեմ կարող յիշել։ Այն ժամն է գուցէ, Երբ մենք առանձին նախաճաշեցինք։ Եթէ ձեր աչքում այդքան տհաճ եմ, Թողէք արշաւեմ եւ չանարգեմ ձեզ։ Զարկէք թմբուկին։

DUCHESS OF YORK.
Կ'աղաչե՛մ, լսի՛ր։

KING RICHARD.
Շատ դառն էք խօսում։

DUCHESS OF YORK.
Գէթ մի խօսք միայն, Քանզի էլ երբեք ձայնս չես լսի։

KING RICHARD.
Խօսիր, ուրեմն։

DUCHESS OF YORK.
Կա՛մ տիրոջ արդար շանթով կը մեռնես, Նախքան այդ մարտից փառքով ետ կը գաս, Կա՛մ թէ ես վշտից եւ ծերութիւնից կ'իջնեմ գերեզման Եւ էլ չեմ տեսնի դէմքդ յաւիտեան։ Աւեղ անէծքս ուստի հետդ տար. Թող նա կռուի մէջ աւելի ուժգին ծանրանայ վրադ, Քան թէ պողպատէ զրահը՝ հագիդ։ Իմ աղօթքները հակառակորդիդ զօրքերի հետ են. Էդուարդի անմեղ երեխաների սուրբ հոգիները Թող քաջալերեն կռւում ոսոխիդ, Փառք ու յաղթութիւն աւետեն նրան։ Արիւնռուշտ ես դու, թող քո վախճանը լինի արիւնոտ, Անարգ ապրեցիր, շանսատակ լինես, ով դու անամօթ։

[Exits.]

QUEEN ELIZABETH.
Մեծ պատճառ ունեմ քեզ նզովելու աւելի ուժգին, Բայց հոգիս թոյլ է, հազիւ կարող եմ ես «ամէն» ասել Նրա անէծքին։

KING RICHARD.
Սպասիր, տիկին, քեզ հետ խօսք ունեմ։

QUEEN ELIZABETH.
Քո՝ ոճրագործիդ դաշոյնի համար էլ ես արքունի զաւակներ չունեմ։ Իսկ իմ դուստրերին Կուսանոց կը տամ, ինչո՞ւ ողբացեալ թագուհի դառնան։ Ուստի մի ձգտիր նրանց կեանքն հնձել։

KING RICHARD.
Դու մի դուստր ունես՝ Եղիսաբէթը, Նա շատ սիրուն է, առաքինի, հեզ եւ արքայական։

QUEEN ELIZABETH.
Եւ դրա համար կ'ուզես մեռցնե՞լ։ Օ՜, գթա նրան, Ես կ'ապականեմ աղջկաս վարքը, Կ'աւերեմ նրա գեղեցկութիւնը, Կը յայտարարեմ, որ ես Էդուարդիս դաւաճանել եմ, Անառակութեան քօղը կը քաշեմ նրա երեսին, Որ ոճրագործի արիւնոտ ձեռքից փրկեմ աղջկաս։ Ամէնքին կ'ասեմ, որ նրա հայրը իմ Էդուարդը չէր։

KING RICHARD.
Դու մի անարգիր նրա ծագումը, նա արքայազուն իշխանուհի է։

QUEEN ELIZABETH.
Ես այդ կուրանամ, որ նրան փրկեմ։

KING RICHARD.
Նրա պաշտպանը հէնց իր ծագումն է։

QUEEN ELIZABETH.
Բայց այդ ծագումը մահից չփրկեց իր եղբայրներին։

KING RICHARD.
Նրանք չէին ծնուած բարի աստղի տակ։

QUEEN ELIZABETH.
Բարի աստղը կար, անպակաս էին ոճրագործները։

KING RICHARD.
Ոչ ոք չի կարող խոյս տալ իր բախտից։

QUEEN ELIZABETH.
Այդ ճշմարիտ է, երբ չարագործն է իշխում մեր բախտին։ Երեխաներս կարող էին աւելի հանգիստ մահանալ, Եթէ Աստուած քեզ այլ կերպ ստեղծէր։

KING RICHARD.
Այնպէս ես խօսում, կարծես թէ ես եմ նրանց սպանել։

QUEEN ELIZABETH.
Իսկ ո՞վ սպանեց։ Դու՝ հօրեղբայրդ, Զրկեցիր նրանց ազգականներից, ազատութիւնից, Գահից ու կեանքից։ Ով էլ ճեղքած լինի նրանց մատաղ սիրտը, Նրա բազկին դո՛ւ ես ուղղութիւն տուել։ Դահճի դանակը բութ էր, անկասկած, Բայց հեսանել են քար սրտիդ վրայ, Որ մի հարուածով խեղճ

գառնուկներիս կրծքերը ճեղքեն։ Վշտին վարժուելով՝ սանձահարւում է մոլեգին վիշտը, Այլապէս ես իմ մանկանց անունը հնչելուց առաջ Իմ եղունգները կը խարսխէի աչքերիդ խորքը Եւ մի այդպիսի մահուան յուսահատ ծովախորշի մէջ, Կայմ եւ առագաստ կորցրած նաւի պէս Կը ջախջախուէի՝ զարկուելով քո այդ ապառաժ կրծքին։

KING RICHARD.
Թող արշաւանքս ձախողուի, տիկին, Թող ես կործանուեմ այս աղէտալի պատերազմի մէջ, Եթէ այն բոլոր ցաւերի համար, Որ պատճառել եմ քեզ եւ քո բոլոր ազգականներին, Քեզ չհատուցեմ՝ շատ աւելի մեծ բարիք գործելով։

QUEEN ELIZABETH.
Այդ ի՞նչ բարիք է երկնքում պահուած, Որն, ի յայտ գալով, ինձ կ'երջանկացնի։

KING RICHARD.
Քո զաւակների վեր բարձրանալը, ազնիւ թագուհի։

QUEEN ELIZABETH.
Մինչեւ գլխատման բեմին հասնելը, հասկանալի է։

KING RICHARD.
Մինչեւ վեհութեան եւ պատուի կատար՝ Վերջին գագաթը երկրային փառքի։

QUEEN ELIZABETH.
Այդ հեքիաթներով վիշտս օրօրիր. Ինչպիսի՞ պատիւ, մեծութիւն եւ բախտ Դու կարող ես տալ իմ զաւակներից որեւէ մէկին։

KING RICHARD.
Ինչ որ ես ունեմ. ինձ եւ ամէն ինչ Պատրաստ եմ պարգեւել ես քո աղջկան։ Արդ, խորասուզիր քո ցաւած հոգու Լետա գետի մէջ Այն զրկանքների յիշատակները, Որ, քո կարծիքով, պատճառել եմ քեզ։

QUEEN ELIZABETH.
Կարճ ասա, թէ ոչ՝ քո այդ խոստումը բարութեան մասին Աւելի երկար կարող է տեւել, քան բուն բարիքը։

KING RICHARD.
Ուրեմն իմացիր. ես ամբողջ հոգով սիրում եմ դուստրիդ։

QUEEN ELIZABETH.
Իմ դստեր մայրը հոգով գիտէ այդ։

KING RICHARD.
Այսինքն՝ ի՞նչ գիտես։

QUEEN ELIZABETH.
Որ ամբողջ հոգով սիրում ես աղջկաս, Ինչպէս սիրեցիր իր եղբայրներին քո ամբողջ հոգով. Ի խորոց սրտի շնորհակալ եմ այդ սիրոյ համար։

KING RICHARD.
Ինչո՞ւ ես արագ միտքս շուռ տալիս. Ուզում եմ ասել՝ սաստիկ եմ սիրում ես քո աղջկան Եւ կամիմ կարգել նրան թագուհի Անգլիոյ գահին։

QUEEN ELIZABETH.
Թագաւորն ո՞վ է։

KING RICHARD.
Հասկանալի է, նա, ով կարգում է նրան թագուհի։

QUEEN ELIZABETH.
Ինչպէ՞ս, դո՞ւ։ Միթէ՞։

KING RICHARD.
Այո՛, այո՛, ես. կարծիքդ ի՞նչ է այդ մասին, տիկին։

QUEEN ELIZABETH.
Ինչո՞վ ես ուզում նրան գրաւել։

KING RICHARD.
Ինքդ խրատ տուր. Դու քաջ ծանօթ ես նրա խառնուածքին։

QUEEN ELIZABETH.
Կ'ուզե՞ս սովորել։

KING RICHARD.
Իմ ամբողջ սրտով։

QUEEN ELIZABETH.
Իր եղբայրներին սպանողի ձեռքով Երկու արնոտ սիրտ ուղարկիր նրան. մէկին դրոշմիր «Էդուարդ» անունը, իսկ միւսին՝ «Եորք»։ Անշուշտ կ'արտասուի։ Ապա տուր նրան դու մի թաշկինակ, Ինչպէս, յիշում ես, Մարգարիտն արաւ՝ Քո հօրը տալով Ռետլենդի արեամբ ներկուած մի սրբիչ։ Թող նրան յայտնի, թէ այդ վառ հիւթը Իր եղբայրների մարմնից է ծծուած, Եւ խնդրի նրան իր արցունքները սրբել դրանով։ Եթէ դրանով չգրաւեցիր դու նրա սիրտը, Վեհ սխրանքներիդ ցուցակն ուղարկիր. Պարծեցիր,

որ դու մորթեցիր նրա քեռի Ռիւերսին Եւ հօրեղբօրը՝ կոմս Կլարենսին, եւ ի սէր նրա՝ Արագ վերջ տուիր Աննայի կեանքին։

KING RICHARD.
Դու ինձ ծաղրում ես. այդ ճանապարհով դուր չեմ գայ նրան։

QUEEN ELIZABETH.
Ուրիշ ելք չկայ, Քանի որ ինքդ չես կարող ուրիշ կերպարանք առնել Եւ այսուհետեւ չլինել Ռիչարդ, Որ կատարել է այդ ոճիրները։

KING RICHARD.
Ինչ որ արել եմ, իր սէրն է պատճառ. այդպէս ծանուցիր։

QUEEN ELIZABETH.
Եթէ այդպէս է, քեզ կը հաւանի, Թանկ արեան գնով նուաճուած սէր է։

KING RICHARD.
Ինչ որ արուած է, չի կարող փոխուել։ Մարդիկ շատ յաճախ անմիտ են գործում, Որպէսզի յետոյ չարաչար զղջան։ Եթէ քո որդուց զրկել եմ թագից, Այդ թագը այժմ դստերդ կը տամ իբրեւ հատուցում։ Եթէ արգանդիդ ծնունդն եմ ջնջել, Այժմ պատրաստ եմ ես ձեր սերունդը արագ բազմացնել Իմ եւ քո դստեր արեան շաղախով։ Մեծ մօր անունը սիրոյ աւելի պակաս արժան չէ, Քան թէ մօր քաղցրիկ եւ սուրբ անունը։ Քո թոռնիկները նոյն զաւակներդ են՝ քո իսկ արիւնից, Բայց մի աստիճան նրանից ներքեւ Միեւնոյն ցաւից, մի բացառութեամբ, Որ մայրն է զգում երկունքի պահին, ոչ թէ տատիկը։ Երեխաներդ տանջանք են եղել ջահէլ օրերիդ, Իսկ զաւակներս նեցուկ կը դառնան քո ծեր հասակին։ Դու կորցրել ես լոկ մի որդի արքայ, Նրա փոխարէն քո դուստրը այժմ կը բարձրանայ գահ։ Շատ բան կ'ուզեմ տալ, բայց անկարող եմ, Ուստի վերցրու այն, ինչ որ կարող եմ։ Դորսետը՝ որդիդ՝ ահաբեկ, ըմբոստ, Շրջում է հիմա օտար աշխարհում, Մեր այս դաշինքը կը վերադարձնի նրան հայրենիք՝ Դէպի նոր պատիւ եւ բարձրագոյն դիրք, Եւ թագաւորը, որ չքնաղ աղջկադ կին պիտի կոչի, Քո Դորսետին էլ կ'անուանի եղբայր. Վերստին արքայի մայր պիտի դառնաս, Եւ աղէտաբեր այն տարիների փլատակները Պիտի նորոգուեն կրկնակի շքեղ փառահեղութեամբ։ Ա՜խ, մենք շատ ուրախ օրեր կը տեսնենք։ Թափած արցունքիդ բոլոր շիթերը Պիտի ետ դառնան՝ արեւելքի ճոխ սուտակներ դարձած, Իրենց արժէքը տասնապատկելով Բիւր երջանկութեամբ։ Ուրեմն, մայր իմ, աղջկադ մօտ գնա, Փափկացրու նրա ամօթխած կուրծքը քո խրատներով, Նրա ականջը պատրաստիր սիրոյ խօսքեր լսելու, Նրա զգայուն սրտում բորբոքիր Արքունի թագին տիրելու տենչը։ Պատմիր դշխուհուն, Թէ ամուսնութեան գողտրիկ ժամերը որքան գերող են։ Եւ երբ այս բազկով պարտութեան մատնեմ Այդ նուաստ, ըմբոստ, խենթ Բուկինգեմին, Յաղթապսակը ճակատիս՝ կը գամ Եւ քո դստերը կը տանեմ դէպի մահիճն յաղթողի։ Իմ յաղթավարը ես կը տամ նրան Եւ կը հռչակեմ գերագոյն յաղթող, Կեսարին՝ Կեսար։

QUEEN ELIZABETH.
Բայց ինչպէ՞ս ասեմ, որ յարմար լինի։ Դստերս յայտնե՞մ, Որ հօրեղբայրը իր ձեռքն է խնդրում։ Թէ՞

ասեմ՝ քեռին, թէ՞ մարդասպանը իր եղբայրների եւ քեռիների։ Ի՞նչ անուն ասեմ, որ յարմար լինի սիրախօսութեան, Որ իմ պատիւը, Աստուած, ե՛ւ օրէնք, ե՛ւ նրա սէրը Քեզ արժանացնեն նրա հասակին։

KING RICHARD.
Հաղորդիր նրան, որ այդ դաշինքը խաղաղութիւն է բերելու երկրին։

QUEEN ELIZABETH.
Որին կարող է նա հասնել միայն անդուլ պայքարով։

KING RICHARD.
Ասա, որ արքան խնդրում է իրեն։

QUEEN ELIZABETH.
Մի այնպիսի բան, որ արգելում է արքայից արքան։

KING RICHARD.
Ասա, որ հզօր թագուհի կը դառնայ։

QUEEN ELIZABETH.
Որպէսզի իմ պէս իր բախտը ողբայ։

KING RICHARD.
Ասա, որ յաւէտ կը սիրեմ նրան։

QUEEN ELIZABETH.
Բայց այդ «յաւէտը» երկարատե՞ւ է։

KING RICHARD.
Մինչեւ իր քաղցրիկ կեանքի վախճանը։

QUEEN ELIZABETH.
Այդ քաղցրիկ կեանքը որքա՞ն կտեւի։

KING RICHARD.
Որքան որ երկինք ու երկիր կամին։

QUEEN ELIZABETH.
Ո՛չ, որքան կամին դժոխք ու Ռիչարդ։

KING RICHARD.
Ասա՝ իր արքան իր հպատակն է։

QUEEN ELIZABETH.
Բայց հպատակդ գարշում է քեզնից։

KING RICHARD.
Պերճախօսութեամբ ինձ գովաբանիր։

QUEEN ELIZABETH.
Երբ գործն արդար է, պարզ խօսքն աւելի զօրեղ է ազդում։

KING RICHARD.
Ուրեմն պարզապէս յայտնիր իմ սէրը։

QUEEN ELIZABETH.
Բայց երբ արդար չէ, շատ բիրտ է հնչում։

KING RICHARD.
Հիմքերդ անմիտ եւ շատ ծանծաղ են։

QUEEN ELIZABETH.
Օ՜, ո՜չ, շատ խորն է դրանց արմատը։ Շատ խորն են թաղուած խեղճ մանկիկներս իրենց շիրմի մէջ։

KING RICHARD.
Մի՛ զարկ այդ լարին, անցած բաներ են։

QUEEN ELIZABETH.
Ո՛չ, պիտի զարկեմ, մինչեւ որ պայթեն սրտիս լարերը։

KING RICHARD.
Վկայ սուրբ Գէւորգ, իմ ծնկակապը, նաեւ իմ թագը...

QUEEN ELIZABETH.
Որ դու անարգել, պղծել ես դրանք, իսկ թագը՝ շորթել։

KING RICHARD.
Օ՜, ես երդւում եմ...

QUEEN ELIZABETH.
Կանգ առ, մի՛ երդուիր, երդումդ փուչ է։ Դու սուրբ Գէւորգիդ սրբապղծել ես, Քո ծնկակապը իր

ասպետական փայլից զրկել ես Եւ թագիդ փառքը յափշտակութեամբ խայտառակել ես, Թէ կամիս երդուել, որ քեզ հաւատամ, Երդուիր ուրեմն այնպիսի բանով, որ դեռ չես պղծել։

KING RICHARD.
Աշխարհը վկայ...

QUEEN ELIZABETH.
Որ այնպէս լի է քո գարշ չարութեամբ։

KING RICHARD.
Հօրս շիրիմով...

QUEEN ELIZABETH.
Քո կեանքով նրան ապականել ես։

KING RICHARD.
Երդւում եմ ինձնով։

QUEEN ELIZABETH.
Ինքդ գարշանք ես։

KING RICHARD.
Ուրեմն՝ Աստծով...

QUEEN ELIZABETH.
Աստծուն ամենից շատ ես անարգել։ Եթէ, յիրաւի, դու վախենայիր երդումդ դրժել, Այն միութիւնը, որ եղբայրդ հիմնեց, խախտուած չէր լինի, Ոչ էլ եղբայրս՝ քո ձեռքով սպանուած։ Թէ վախենայիր երդումդ դրժել, Գլուխդ պճնող մետաղն արքունի Որդուս քունքերը պիտի զարդարէր։ Երկու իշխանն էլ ողջ էին հիմա, Որ այժմ լռիկ փոշի են դառնում շիրիմների մէջ։ Ուխտդ խախտելով՝ դու նրանց դարձրիր ճիճուներին կեր, Այժմ էլ ինչո՞վ կարող ես երդուել։

KING RICHARD.
Իմ ապագայով։

QUEEN ELIZABETH.
Որ եղծանել ես քո գարշ անցեալով։ Ծով արտասուքով պիտի լուանամ ես այդ ապագան, Որ դու անցեալում անիրաւել ես։ Քեզնով որբացած երեխաների Ահեղ ողբերով երկիրն է հեծեծում։ Քո մորթած մանկանց խեղճ ծնողները Հառաչանքներով գալիքն են ցնցում։ Դու ապագայով մի՛ երդուիր, քանզի Նախապէս արդէն պղծել ես նրան։

KING RICHARD.
Ինչպէս որ կամիմ մեղքերս քաւել, Ինչպէս որ յաղթել կ'ուզեմ թշնամուս, Այդպէս էլ թող ես, թող ես կործանուեմ: Երկի՛նք, երջանիկ ժամերս կորզիր, Ցերե՛կ, լոյս մի՛ տուր, գիշե՛ր, խափանիր աչքերիս քունը, Ո՛վ մոլորակներ, բախտս կործանէք չարակամութեամբ. Եթէ ջինջ սիրով եւ սուրբ մտքերով Անարատ, անբիծ նուիրուածութեամբ Չեմ սիրում ես քո չքնաղ դշխուհուն: Նրա ձեռքումն է երկուսիս բախտը: Առանց աղջկադ ինձ, քեզ եւ իրեն, Նաեւ մեր երկրին եւ բազում մարդկանց քրիստոնէական Հետապնդում է անկում, աւերում, կոտորած ու մահ: Լոկ մեր դաշինքը կարող է կանխել այդ արհաւիրքը, Առանց քո դստեր փրկութիւն չկայ: Արդ, անգին մայր իմ, - ես պարտաւոր եմ քեզ այդպէս կոչել, - Սիրուս միջնորդը եղիր նրա մօտ, Դու նրան պատմիր ոչ թէ անցեալիս, այլ իմ փառաւոր Գալիքի մասին, Ոչ թէ ինչ արժեմ, այլ թէ ինչ փառքի ես կ'արժանանամ: Դարի պահանջը բացատրիր նրան Եւ վերջ տուր մաղձիդ, երբ մեծ գործեր կան:

QUEEN ELIZABETH.
Կ'ուզես ենթարկուե՞մ դեւի դիւթանքին:

KING RICHARD.
Ենթարկուիր, եթէ դեւը մղում է քեզ դէպի բարին:

QUEEN ELIZABETH.
Եւ յանուն նրա ես ինձ մոռանա՞մ:

KING RICHARD.
Մոռացիր, եթէ յիշելն է տանջանք:

QUEEN ELIZABETH.
Բայց դու սպանել ես իմ զաւակներին:

KING RICHARD.
Ես նրանց կը թաղեմ աղջկադ արգանդում. Եւ նրանք այնտեղ կը վերածնուեն փիւնիկի նման, Որ սփոփեն քեզ:

QUEEN ELIZABETH.
Գնամ յորդորեմ, որ նա քեզ սիրի՞:

KING RICHARD.
Դրանով բախտաւոր մայր կը դառնաս դու:

QUEEN ELIZABETH.
Ահա գնացի: Շուտ նամակ գրիր Եւ ինձնից նրա կամքը կ'իմանաս:

KING RICHARD.
Սիրոյ համբոյրն այս փոխանցիր նրան։ Դէ, երթաս բարով։

[Queen Elizabeth exits.]

KING RICHARD [cont.]
Օ՛, թեթեւամի՛տ, դիւրահաւատ կին։

[Ratcliffe enters, followed by Catesby.]

KING RICHARD [cont.]
Ի՞նչ նոր լուրեր կան։

RATCLIFF.
Ողորմած արքայ, արեւմտեան ափին Երեւաց հզօր մի նաւատորմիղ։ Ծովափ են գալիս Մեծ բազմութիւններ խիստ կասկածելի բարեկամների, Բոլորն անզէն են եւ մտադիր չեն ետ մղել նրանց. Ասում են՝ Ռիչմոնդն է իրենց ծովապետը Եւ դանդաղում է ծովափ դուրս գալու՝ ակնկալելով, Որ Բուկինգեմը ցամաքի կողմից օգնութեան կը գայ։

KING RICHARD.
Պէտք է մի ճապուկ բանբեր առաքել Նորֆոլկի դքսին. Դու թռիր, Ռետկլիֆ, կամ թէ Քետսբին։ Ո՞ւր է Քետսբին։

CATESBY.
Այստեղ եմ, արքայ։

KING RICHARD.
Սուրա դքսի մօտ։

[To Ratcliffe.]

KING RICHARD [cont.]
Իսկ դու սլացիր դէպ Սօլսբերի. Երբ այնտեղ հասնես...

[To Catesby.]

KING RICHARD [cont.]
Ապո՛ւշ, հաստագլո՛ւխ, Ինչո՞ւ ես կանգնել։ Թռիր դքսի մօտ։

CATESBY.
Բայց ձեր անունից ի՞նչ յայտնեմ դքսին, Մեծազօր արքայ։

KING RICHARD.
Դու ճշմարիտ ես, բարի Քետսբի։ Ասա՝ թող շտապ Մեծ զորք ժողովի, որքան կարող է, եւ գայ, հանդիպի ինձ Սոլսբերիում։

CATESBY.
Գնացի, տէր իմ։

[Catesby exits.]

RATCLIFF.
Ես Սոլսբերիում ի՞նչ պիտի անեմ։

KING RICHARD.
Դո՞ւ։ Ինչի՞ համար։ Ինքս կը գնամ։

RATCLIFF.
Հէնց նոր ասացիք, որ այնտեղ ճեպեմ։

[Stanley enters.]

KING RICHARD.
Ես մտափոխվեցի, պարոն: Միտքս փոխեցի։

[To Stanley.]

KING RICHARD [cont.]
Ի՞նչ լուր, Ստենլի։

STANLEY.
Լուրն այնքան լաւ չէ, որ ուրախանաք, Ոչ էլ այնքան վատ, որ չհաղորդեմ։

KING RICHARD.
Այ քեզ հանելուկ, ոչ լաւ է, ոչ վատ։ Ինչ՞ն է ստիպում մղոններ չափել, Երբ որ կարող ես խօսքդ կարճ կապել։ Կրկնիր, ի՞նչ լուր է։

STANLEY.
Ռիչմոնդը, տէր իմ, ծովի վրայ է։

KING RICHARD.
Ծովի տակն անցնէր, ծովն ելնէր վրան։ Երկչոտ ազգուրաց, նպատակն ի՞նչ է։

STANLEY.
Չգիտեմ, տէր իմ։ Միայն կարծում եմ...

KING RICHARD.
Իսկ ի՞նչ ես կարծում։

STANLEY.
Դորսետը, Իլին եւ Բուկինգեմը դրդել են նրան, Որ գայ, տիրանայ Անգլիոյ գահին։

KING RICHARD.
Այդ գա՞հն է թափուր, թէ՞ սուրն է անգործ, Արքա՞ն է մեռած, երկի՞րն է անտէր, Արդ, միթէ՞ մենք չենք ժառանգներն Եորքի Եւ օրինական թագաւորը երկրի, Ինչո՞ւ է շրջում նա ծովի վրայ։

STANLEY.
Թէ պատճառն այդ չէ, ուրեմն չգիտեմ։

KING RICHARD.
Գիտե՛ս, գալիս է, որ արքադ դառնայ։ Լաւ գիտես, թէ ուր է գալիս վելշացին։ Կամիս ապստամբել, փախչել նրա մօտ։

STANLEY.
Իզուր էք վրաս կասկածում, արքայ։

KING RICHARD.
Ապա ո՞ւր է զօրքդ, որ ետ շպրտի հակառակորդիս. Ո՞ւր են քո վարձկան գնդերն ու մարդիկ։ Միթէ՞ նրանք չեն, որ արեւմտեան եզերքին խմբուած՝ Ձեռք են կարկառում նաւերով եկած ապստամբներին։

STANLEY.
Իմ ամբողջ զօրքը հիւսիսում է, արքայ։

KING RICHARD.
Սառած գնդեր են։ Ի՞նչ են շինում այնտեղ, Երբ արեւմուտքում մեզ ուժեր են պէտք։

STANLEY.
Նրանց հրաման չէր տրուած, արքայ։ Բարեհաճեցէք ինձ արձակելու, Եւ ես, իմ ամբողջ զօրքը ժողոված, Կը հանդիպեմ ձեզ ձեր ուզած ժամին, որտեղ կամենաք։

KING RICHARD.
Տեսնո՛ւմ եմ, տեսնո՛ւմ։ Ուզում ես փախչել դու Ռիչմոնդի մօտ։ Չե՛մ վստահում քեզ։

STANLEY.
Մեծազօր արքայ, Երբեք կասկածի առիթ չեմ տուած բարեկամութեան: Դաւաճան չեմ եղել եւ չեմ լինելու:

KING RICHARD.
Ուրեմն գնա եւ զօրք ժողովիր: Բայց Գեւորգ որդուդ Մեզ մօտ կը պահենք: Հաւատարիմ եղիր, Եթէ ուզում ես՝ նրա գլուխը ուսերին մնայ:

STANLEY.
Վարուեցէք իր հետ՝ ըստ իմ վարմունքի:

[As Stanley exits Messenger I enters.]

MESSENGER I.
Մեծազօր արքայ, Դեւոնշիրի մէջ, Ինչպէս յայտնում են մեր հաւատարիմ բարեկամները, Իրենց բազմաթիւ դաշնակիցներով մեր դէմ են զինուել Սըր Էդուարդ Քորտնին եւ Էքսետերի եպիսկոպոսը՝ Գոռոզ եղբայրն իր:

[Messenger II enters.]

MESSENGER II.
Քէնդի մէջ, արքայ, ապստամբուել են գիլդֆորդցիները. Ապստամբներին անթիւ մարդիկ են արդէն միանում, Նրանց ուժերը հզօրանում են:

[Messenger III enters.]

MESSENGER III.
Յաղթ Բուկինգեմի բանակը՛, տէր իմ --

KING RICHARD.
Դո՛ւրս կորէք, բուէր, բա՛ւ է մահ երգէք:

[He strikes the Messenger.]

KING RICHARD [cont.]
Այս է քո վարձը, գնա՛, լաւ լուր բեր:

MESSENGER III.
Իմ բերած լուրը այսպէս է, արքայ. Հորդ հեղեղները եւ անձրեւները Ցրիւ են տուել Բուկինգեմի ողջ զօրաբանակը. Ինքն էլ փախել է գլուխը կորցրած, Որտե՛ղ՝ յայտնի չէ:

KING RICHARD.
Ներիր ինձ, ուրեմն։ Ահա քսակս, հարուածս բուժիր։ Արդեօք յայտնե՞լ են, թէ նա, ով բռնի այդ դաւաճանին, Պարգեւ կը ստանայ։

MESSENGER III.
Յայտնել են, տէր իմ։

[Messenger IV enters.]

MESSENGER IV.
Թոմաս Լովելն ու մարկիզ Դորսետը Ապստամբել են Եորքշիրում, արքայ։ Բայց երկրորդ լուրս մխիթարիչ է։ Բրետոնների նաւատորմիղը ցրիւ է եկել ահեղ փոթորկից։ Ռիչմոնդը նաւակ է ուղարկել եզերք, Որ հարցում անեն այնտեղի զօրքից, Դաշնակիցնե՞ր են, թէ՞ հակառակորդ։ Նրանք յայտնել են, որ Բուկինգեմն է ուղարկել իրենց։ Ռիչմոնդը նրանց հաւատ չի տածել եւ առագաստը պարզելով՝ կրկին ծովն է հեռացել։

KING RICHARD.
Օն, յառա՛ջ, յառա՛ջ, զինուած ենք արդէն. Թէեւ խոյս տուեց ոսոխն արտաքին, Գէթ ջարդենք ներքին ապստամբներին։

[Catesby enters.]

CATESBY.
Մեծազօր արքայ, դուքս Բուկինգեմը ձերբակալուած է. Ցնծագին լուր է. սակայն Միլֆորդում Ռիչմոնդի կոմսը Ահագին զօրքով ցամաք դուրս եկաւ։ Անախորժ լուր է, բայց պարտ եմ յայտնել։

KING RICHARD.
Յառա՛ջ, իմ զօրքեր, դէպի Սօլսբերի։ Մենք կարող էինք այսքան ժամանակ Կա՛մ փառքով ընկնել, կա՛մ արքայական յաղթանակ շահել։ Թող մէկը ձեզնից դուքս Բուկինգեմին Սօլսբերի տանի։ Մնացեալները թող հետեւեն ինձ։

[All exit.]

][][

ACT IV. SCENE V.

Lord Derby's house. Derby and Sir Christopher Urswick enter.

DERBY.

Դու իմ անունից պատմիր Ռիչմոնդին, Որ այդ արիւնռուշտ վարազի որջում Գեւորգ Ստենլի որդիս է փակուած, Եթէ ապստամբեմ, նրա գլուխը իսկոյն կը թռչի. Ես այդ երկիւղից օգնել չեմ կարող։ Բայց ասա խնդրեմ, ո՞ւր է մեր պայծառ Ռիչմոնդը այժմ։

URSWICK.

Նա Վալեսումն է։

DERBY.

Մեծ իշխաններից ովքե՞ր կան իր կողմ։

URSWICK.

Վալտեր Հերբերտը՝ մի անյաղթ զինուոր, Գիլբերտ Տոլբոտը, Վիլեամ Ստենլին, Մեծ կոմս Օքսֆորդը, ահեղ Պեմբրոկը, սըր Ջեմս Բլանտը, Ռիս Էպ-Թոմասը՝ քաջարի զօրքով, Եւ բազում ուրիշ անուանի քաջեր. Բոլորը դէպի Լոնդոն են շարժւում, Եթէ գրոհի չենթարկուեն ճամփին։

DERBY.

Դու քո Ռիչմոնդի մօտ վերադարձիր, ողջոյնս յայտնիր, Ասա՝ թագուհին սրտանց յօժար է, Որ նա կին առնի իր սիրուն դուստր Եղիսաբէթին։ Իսկ մնացեալը այս թուղթը կ'ասի։ Բարի ճանապարհ։

[Exits.]

]0[

ACT V. SCENE I.

Salisbury. An open place. Guards with halberds and the Sheriff enter, leading Buckingham to his execution.

BUCKINGHAM.

Արքան թոյլ չի՞ տայ, որ իր հետ խօսեմ:

SHERIFF.

Ո՛չ, ազնիւ դուքս իմ: Ենթարկուէք բախտին:

BUCKINGHAM.

Օ՛, Հեստինգս, եւ դուք, Էդուարդի որդիք, դուք, Ռիւե՛րս, Գրի՛, Ե՛ւ նուիրական արքայ Հենրիկոս, ե՛ւ Էդուարդ որդիդ, Նաեւ դու, Վոգեն, աւա՛ղ, բոլորդ Չոհ դարձաք դժնի անարդարութեան: Եթէ ձեր տրտում հոգիներն հիմա Ամպերի միջից ներքեւ են նայում, Արդ, ուրախացէք իմ կործանումով, վրէժն արդար է: Այսօր Մեռելո՞ց է:

SHERIFF.

Այո՛, տէր իմ:

BUCKINGHAM.

Մեռելոցն, ուրեմն, դատաստանիս օրն է. Սա այն օրն է, երբ Էդուարդ արքայի առաջ երդուեցի, Որ եթէ դաւեմ նրա կնոջն ու երեխաներին, Աստծոյ նզովքը թող գլխիս իջնի: Սա այն օրն է, երբ կամեցայ մեռնել այն մարդու ձեռքով, Որին ամէնից շատ եմ վստահել: Մեռելոց օրը՛, սա այն օրն է, երբ իմ երկչոտ հոգին Պէտք է իր բոլոր մեղքերը քաւի: Տէրն ամենատես, որին ծաղրեցի, Իմ կեղծ երդումը շուռ տուեց գլխիս Եւ իմ կատակը արեամբ հատուցեց: Ահա թէ ինչպէս նա չարագործի սուրը շարունակ Նոյն չարագործի կրծքին է ուղղում: Ա՛խ, Մարգարիտի անէծքը ինչպէ՛ս ծանրացաւ գլխիս: Յիշում եմ՝ ասաց. «Երբ նա քո սիրտը վշտով կը ճեղքի, Դու Մարգարիտի խօսքերը յիշիր»: Այժմ տարէք ինձ անարգ կոճղի մօտ, Որ արեամբ քաւէմ արցունք ու ամօթ:

[All exit.]

][][

ACT V. SCENE II.

The camp near Tamworth. Richmond, Oxford, Blunt and Herbert enter.

RICHMOND.

Իմ զինակիցներ եւ բարեկամներ իմ հաւատարիմ, Բռնակալութեան լծի տակ տանջուած՝ Մենք երկրի կէսը յաղթական անցանք Առանց արգելքի։ Մեր հայր Ստենլուց այժմ սփոփիչ Եւ քաջալերող մի նամակ եկաւ։ Անարգ, արիւնռուշտ եւ բիրտ վարազն այդ, Որ աւերում էր ձեր ճոխ դաշտերը եւ ծաղկուն այգին. Անյագ ըմպում է ձեր ջերմ արիւնը՝ իբրեւ խոզի լակ, Եւ իր կնճիթով Ձեր կուրծքը փորում այդ ստոր կինճը Պառկած է հիմա այս կղզու խորքում՝ Լեյստեր քաղաքից ոչ այնքան հեռու։ Տամուորթից այնտեղ մէկ օրուայ երթ է։ Արդ, յանուն Աստծոյ, յառա՛ջ, իմ քաջե՛ր, յառա՛ջ եռանդով, Որ յաւէրժական մեծ խաղաղութեան հունձքը ժողովենք Գոռ պատերազմի այս արնոտ մարտով։

OXFORD.

Ամէն սրտի մէջ հազար սրեր կան, Որ շանթեն կուրծքը այդ ոճրագործի։

HERBERT.

Նրա ընկերները մեր կողմը կ'անցնեն, այդ անկասկած է։

BLUNT.

Նա ընկեր չունի, երկիւղն է նրանց շաղկապում իրար, Հէնց որ նեղն ընկաւ, կը փախչեն անհետ։

RICHMOND.

Այդ օգուտ է մեզ։ Արդ, յանուն Աստծոյ, արշաւենք փութով. Ճշմարիտ յոյսը մի ծիծեռնակ է՝ թեւերը բացած, Նա ստրուկներին արքայ է դարձնում, արքային՝ Աստուած։

[All exit.]

][][

ACT V. SCENE III.
Bosworth Field. King Richard III enters in arms, followed by Norfolk and Surrey.

KING RICHARD.
Այստեղ ամրացրէք մեր վրանները՝ Բոսուորթի դաշտում։ Ինչո՞ւ է դէմքդ մռայլ, լորդ Սուռի։

SURREY.
Բայց տասնապատիկ սիրտս պայծառ է իմ դէմքից, տէր իմ։

KING RICHARD.
Նորֆոլկ, իշխան իմ ...

NORFOLK.
Այստեղ եմ, արքայ։

KING RICHARD.
Մենք պիտի ջարդենք, այնպէս չէ՞, Նորֆոլկ։

NORFOLK.
Ջարդենք եւ ջարդուենք, սիրելի տէր իմ։

KING RICHARD.
Խփէք վրանս։ Ես այսօր պէտք է այստեղ գիշերեմ։ Զինուորներն սկսում են ամրացնել թագաւորի վրանը։ Իսկ վաղը որտե՞ղ։ Լա՛ւ, կարիք չկայ, մի տեղ կը գտնենք։ Դաւաճանների թիւը որքա՞ն է։

NORFOLK.
Ամենաշատը վեց-եօթ հազար մարդ։

KING RICHARD.
Մենք երեք անգամ շատ ենք նրանցից։ Իսկ թագաւորի անունը արդէն մի հուժկու բերդ է, Որից զուրկ է մեր հակառակորդը։ Վրանն աւարտէք։ Գնանք, իշխաններ, Եւ հետազօտենք ռազմադաշտն հիմա։ Կանչէք մի քանի բանագէտ մարդիկ. Արագ շարժուեցէք, ժամ չէ յապաղման, Քանզի, իշխաններ, ահեղ կը լինի մեր օրը վաղուան։ Գնում են։ Դաշտի միւս կողմից մտնում են Ռիչմոնդը, Բրենդոնը, Օքսֆորդը եւ ուրիշներ։ Մի քանի զինուորներ ամրացնում են Ռիչմոնդի վրանը։

[Exits.]

[On the other side of the field Richmond enters with Sir William Brandon, Oxford and others.]

RICHMOND.
Յոգնած արեւը կատարեց ոսկեայ շքեղ մայրամուտ Եւ իր հրեղէն կառքի արձակած լուսափայլ

հետքով Մեզ գուշակում է պայծառ առաւօտ։ Վիլեամ Բրենդոն, ես քեզ կարգում եմ դրօշակակիր։ Շուտ թուղթ ու թանաք վրանս բերէք, Ես պէտք է հիմա ճակատամարտի նախագիծ կազմեմ Եւ առաջնորդներ կարգեմ տեղերում՝ Մեր փոքրիկ զօրքը հաւասար չափով տեղաբաշխելով։ Դու, իշխան Օքսֆորդ, նաեւ դու, Բրենդոն, Եւ նմանապէս դու, Վալտեր Հերբերտ, ինձ հետ եղէք միշտ։ Պեմբրոկի կոմսը իր գնդի հետ է. Գնդապետ Բլանտ, դու կոմսին մաղթիր իմ գիշեր բարին Եւ խնդրիր նրան, որ առաւօտեան ժամը երկուսին Իմ վրանը գայ։ Ի դէպ, գնդապետ, որտե՞ղ է իշխան Ստենլու գունդը։

BLUNT.
Թէ չեմ շփոթում նրա դրօշը, Իսկ մինչեւ օրս այն չեմ շփոթած, Իշխանի գունդը կէս մղոնաչափ հարաւ է կանգնած Արքայի հզօր զօրաբանակից։

RICHMOND.
Իմ բարի Բլանտ, եթէ կարող ես Առանց փորձութեան նրա մօտ գնալ, Տուր նրան այս յոյժ կարեւոր թուղթը։

BLUNT.
Կը կատարեմ, տէր։ Աստուած շնորհի ձեզ բարի գիշեր։

RICHMOND.
Բարի գիշեր, Բլանտ, ազնի՛ւ գնդապետ։ Բլանտը դուրս է գնում։ Երթա՛նք, իշխաննե՛ր, Վաղուայ հարցի շուրջ խորհրդի նստենք Իմ վրանի մէջ. օդը սո՛ւր է, ցո՛ւրտ։

[As they exit into the tent King Richard III enters with Norfolk, Ratcliff and Catesby.]

KING RICHARD.
Ո՞ր ժամն է հիմա։

CATESBY.
Ընթրիքի պահն է. ժամը ինն է արդէն։

KING RICHARD.
Այսօր չեմ ընթրի։ Թուղթ ու թանաք տուէք. Իմ սաղաւարտը նեղ էր. ուղղեցի՞ն։ Բոլոր զէնքերս բերեցի՞ք վրան։

CATESBY.
Այո՛, տէր արքայ, ամէն ինչ լրիւ կազմ ու պատրաստ է։

KING RICHARD.
Իմ բարի Նորֆոլկ, պաշտօնիդ անցիր։ Հսկիր աչալուրջ, դիր հաւատարիմ գիշերապահներ։

NORFOLK.
Գնում եմ, արքայ։

KING RICHARD.
Վաղը արտոյտից առաջ կ՚արթնանաս։

NORFOLK.
Անպայման, տէր իմ։

[Norfolk exits.]

KING RICHARD.
Լսի՛ր, Քետսբի ...

CATESBY.
Ի՞նչ կայ, տէր արքայ։

KING RICHARD.
Շտապ առաքիր Մի զինուած բանբեր Լորդ Ստենլըու մօտ։ Թող նա իր զօրքով Լոյսը չբացուած՝ այստեղ ժամանի։ Թէ ոչ՝ իր որդուն Կ՚ուղարկեմ անդունդն յաւէրժ խաւարի։ Քետսբին գնում է։

[To a Servant.]

KING RICHARD [cont.]
Գինի ածիր ինձ։ Շուտ մի կանթեղ տուր։ Սպիտակ Սեռին թամքիր, վաղը կռիւ է. Տես, որ նիզակս ծանր չլինի։ Ռետկլի՛ֆ ...

RATCLIFF.
Լսում եմ, արքայ։

KING RICHARD.
Տեսե՞լ ես իշխան Նորթեմբերլենդին։

RATCLIFF.
Թոմաս Սուռին եւ նա Մթնշաղից առաջ դուրս եկան շտապ, Գնդից գունդ անցան՝ քաջալերելու իրենց զօրքերին։

KING RICHARD.
Այդ լաւ է, գոհ եմ։ Շտապ գինի տուր։ Չգիտեմ ինչու տրտում է հոգիս, Ինձ առաջուայ պէս առոյգ չեմ զգում։ Ցած դիր գաւաթը։ Թուղթն ու թանաքը արդէն պատրա՞ստ է։

RATCLIFF.
Պատրաստ է, տէր իմ։

KING RICHARD.
Պահապանների վրայ աչքածիր, իսկ հիմա գնա։ Կէսգիշերին մօտ իմ վրանս եկ, Որպէսզի օգնես՝ զէնքերս կապեմ։ Գնա՛, ասում եմ։

[As Ratcliff exits, on the other side of the stage, Derby enters Richmond's tent.]

DERBY.
Փառք ու յաղթութիւն քո սաղաւարտին։

RICHMOND.
Օ՛, ազնիւ հայր իմ, անձիդ մաղթում եմ ամենայն բարիք, Որ մութ գիշերը կարող է շնորհել։ Ասա, ինչպէ՞ս է սիրասուն մայրս, ողջ եւ առո՞ղջ է։

DERBY.
Նա ողջ է, որդեակ, եւ քեզ օրհնում է, եւ աղօթում է քո բախտի համար գիշեր ու ցերեկ։ Այդ առթիւ՝ այսքան։ Խաղաղ ժամերը արագ թռչում են, Եւ արեւելքում ճեղքւում է մութը, ժամանակը թանկ է, կարճ պէտք խօսեմ. Առաւօտ կանուխ պատրաստիր զօրքդ Եւ բախտդ յանձնիր արիւնաշաղախ մեծ բախումների եւ պատերազմի մահառիթ կամքին։ Ուղղակի օգնել հնարաւոր չէ։ Որքան կարող եմ, Պատեհ առիթին միջոց կը գտնեմ Եւ մարտի ահեղ, վճռական ժամին կը գամ օգնութեան։ Առաւել փութալ անկարելի է. Եթէ նկատուեմ, Գեւորգ եղբայրդ Պիտի գլխատուի հօր աչքի առաջ։ Դէ, մնաս բարեաւ։ ժամանակ չկայ. Վտանգաւոր է մեր հանդիպումը։ Վերջ տանք փոխադարձ մեր ասուլիսին Եւ մեր ուխտերի սրտագին ծէսին, Որ այնքան քաղցր է, երբ անջատւում են մտերիմները։ Տէր Աստուած, դու մեզ ազատ ժամեր տուր սրտայոյզ խօսքի. Դէ՛, բարի գիշեր։ Բազկիդ՝ զօրութիւն, զէնքիդ՝ յաղթանակ։

RICHMOND.
Իշխաններ, նրան իր գունդը տարէք։ Հոգիս խռով է, մինչ այդ կը փորձեմ ես մի քիչ նիրհել, Որ առաւօտեան կապարէ քունը ինձ չտայ գետնով, Երբ պէտք է թռչեմ յաղթութեան թեւով։ Նորէն մաղթում եմ ձեզ բարի գիշեր, ազնիւ իշխաններ։

[Everyone save Richmond exits.]

RICHMOND [cont.]
Օ՛, Աստուա՛ծ, անսա քո զօրավարին, Ողորմած աչքով նայիր իմ զօրքին. Վրիժառութեանդ ջախջախիչ սուրը նրանց ձեռքը դիր, Որ մէկ հարուածով գետին տապալուեն Մեր ոսոխների պիղծ ու ապօրէն սաղաւարտները։ Մեր բազկով պատժիր ոճրագործներին, Որ փառաբանենք քո յաղթութիւնը։ Ես քեզ եմ յանձնում իմ արթուն հոգին, Նախքան կը գոցեմ աչքիս փեղկերը։ Քնած թէ զարթուն՝ դու ինձ զօրաւիգ եղիր հանապազ։

[As Richmond falls asleep the Ghost of Prince Edward enters.]

GHOST OF PRINCE EDWARD.
[To King Richard.] Վաղը ծանրօրէն կը չոքեմ հոգուդ։ Յիշիր, թէ ինչպէս Տեկսբուրի դաշտում դու մորթեցիր ինձ ծաղիկ հասակում։ Ուստի սարսափի՛ր, վախճանդ մօ՛տ է։ [To Richmond.] Ցնծա, ո՛վ Ռիչմոնդ, քանզի յօշոտուած Վեհ իշխանները վրդովուած հոգով քո կողմն են կռւում. Հենրի արքայի ժառանգը, Ռիչմոնդ, զօրաւիգ է քեզ։

[The Ghost of Henry VI enters.]

GHOST OF HENRY VI.
[To King Richard.] Երբ դեռ մարդ էի, օծեալ մարմինս ծածկեցիր վէրքի բազում ճեղքերով։ Յիշիր իմ մահը Աշտարակի մէջ. վախճանդ մօտ է, Հենրիկոս արքան մահ է գուժում քեզ։ [To Richmond.] Յաղթանակ զէնքիդ, ով առաքինի, Վեցերորդ Հենրին, որ քեզ գուշակեց երկրիս թագաւոր, Ողջունում է քեզ անուշ քնիդ մէջ. ապրի՛ր եւ ծաղկի՛ր։

[The Ghost of Clarence enters.]

GHOST OF CLARENCE.
[To King Richard.] Վաղը ծանրօրէն կը չոքեմ հոգուդ. ես՝ Կլարենսը, Թշուառ եղբայրդ՝ աշխարհից զրկուած գարշահոտ գինով եւ քո դիւային դաւաճանութեամբ։ Վաղը յիշիր ինձ ճակատամարտում եւ քո բթացած սուրը վայր նետիր, վախճանդ մօտ է։ [To Richmond.] Լանկաստերեան տան դու պանծալի զարմ, Եորքի սպանուած վեհ ժառանգները աղօթում են քո Յաղթութեան համար։ Հրեշտակները թող քեզ զօրաւիգ լինեն մարտի մէջ. Ապրի՛ր եւ ծաղկի՛ր։

[The Ghosts of Rivers, Grey and Vaughan all enter.]

THE GHOSTS.
[To King Richard.] Վաղը ծանրօրէն կը չոքեմ հոգուդ, Ես՝ կոմս Ռիւերսս, որին մեռցրիր Պոմֆրետ ամրոցում։ Վախճանդ մօտ է։

GHOST OF GREY.
[To King Richard.] Ես եմ, լորդ Գրին, վաղը յիշիր ինձ. վախճանդ մօտ է։

GHOST OF VAUGHAN.
[To King Richard.] Վոգենին յիշիր եւ սարսափահար Վայր նետիր տէգդ, վախճանդ մօտ է։

GHOST OF RIVERS.
[To King Richard.] Զարթի՛ր, մեր մահը մի սուր է՝ ցցուած Ռիչարդի կրծքում։ Զարթիր եւ սուրդ դէպի յաղթութիւն։

[The Ghost of Hastings enters.]

GHOST OF HASTINGS.
[To King Richard.] Արիւնռուշտ եւ չար։ Չարով արթնացիր եւ մեռիր ահեղ, արիւնոտ մարտում։ Յիշիր Հեստինգսին, յիշիր եւ դողա. վախճանդ մօտ է։ [To Richmond.] Ով խաղաղ հոգի, զարթիր, օ՜, զարթիր, Ի սէր Անգլիոյ կռուիր եւ յաղթիր։

[The Ghosts of two Little Princes enter.]

GHOSTS.
[To King Richard.] Երազում յիշիր Բերդի մէջ խեղդուած քո եղբօրորդոց. Մենք կապարի պէս լցուած ենք, Ռիչարդ, քո կրծքում հիմա եւ քեզ հրում ենք դէպի կործանում, նախատինք ու մահ։ Դու պիտի մեռնես, մեր պահանջն այդ է։ [To Richmond.] Դու ննջիր խաղաղ եւ զարթնիր ուրախ, ո՜վ ազնիւ Ռիչմոնդ։ Սուրբ հրեշտակներ, փրկեցէք նրան այս վայրի կինճից։ Ապրիր եւ սերիր թագաւորների մի բախտաւոր տոհմ, Անբախտ որդիքս Էդուարդ արքայի ողջունում ենք քեզ։

[The Ghost of Lady Anna enters.]

GHOST OF LADY ANNA.
[To King Richard.] Ռիչարդ, քո կինը, տարաբախտ Աննան, Որ մէկ ժամ հանգիստ կողքիդ չի ննջել, Նա է քո քունը վրդովում հիմա։ Վաղը յիշիր ինձ ճակատամարտում Եւ քո բթացած սուրը նետիր ցած։ Վախճանդ մօտ է։ [To Richmond.] Ո՜վ անդորր հոգի, ննջիր դու խաղաղ, Երջանիկ բախտի եւ յաղթանակի մասին երազիր. Թշնամուդ կինը աղօթում է քո յաղթութեան համար։

[The Ghost of Buckingham enters.]

GHOST OF BUCKINGHAM.
[To King Richard.] Ես առաջինը օգնեցի, որ դու դառնաս թագաւոր, Եւ վերջին զոհդ դարձայ ահաւոր։ Օ՜, մարտի դաշտում յիշիր Բուկինգեմին Եւ քո չարիքի սարսափից մեռիր։ Երազներիդ մէջ թող քեզ այցելեն լոկ մահ ու նախճիր. Դողա, սարսափիր ու շունչդ փչիր։ [To Richmond.] Աւա՜ղ, քեզ չօգնած՝ կործանուեցի ես, Բայց քաջալերուիր, դու պիտի յաղթես։ Քո կողքին, Ռիչմոնդ, Աստուածն է կռւում հրեշտակներով, Ռիչարդն իր փառքից վայր կ՚ընկնի սրով։

[The Ghosts all vanish. King Richard wakes from his nightmare with a cry.]

KING RICHARD.
Ուրիշ ձի տուէք, վէրքերս կապէք։ Գթա ինձ, Յիսուս։ Ա՜, սա երազ էր։ Երկչոտ խղճմտանք, ի՞նչ ես ինձ տանջում։ Կանթեղը կապոյտ լոյսով է վառւում. կէսգիշեր է խոր։ Մարմինս է դողում սառը քրտինքից։ Վախենո՞ւմ եմ, ինչ է. բայց ումի՞ց, ինձնի՞ց. Կողքիս մարդ չկայ։ Ռիչարդը սիրում է Ռիչարդին, այսինքն՝ ես ես եմ։ Մարդասպա՞ն, այստե՞ղ։ Չկայ մարդասպան։ Ո՜չ, կայ, այդ ես եմ։ Ուրեմն փախչեմ։

Ինչպէ՞ս, ինձանի՞ց։ Բայց ինչո՞ւ փախչեմ։ Խոյս տամ վրէժի՞ց, ո՞վ է վրիժառու։ Միթէ՞ այդ ես եմ։ Ես ինձ սիրում եմ։ Ինչո՞ւ եմ սիրում։ Միթէ՞ որեւէ բարիք եմ գործել ինքս ինձ համար։ Աւա՜ղ, չեմ գործել։ Ես աւելի շուտ պէտք է ինձ ատեմ. Չէ՞ որ իմ գործած ոճիրը շատ է։ Ես սրիկայ եմ։ Ո՛չ, սուտ է, սուտ է, ես սրիկայ չեմ։ Յիմա՛ր, գովիր քեզ. մի՛ շողոքորթիր. Իմ խիղճը հազար լեզուներ ունի, Եւ ամէն լեզուն՝ մի տարբեր հեքիաթ, Եւ այդ բոլորն էլ աղաղակում են, որ սրիկայ եմ։ Ուխտադրուժ եմ ես բարձրագոյն կարգի, Մարդասպան եմ ես անխի՜ղճ, անհոգի՜։ Բոլոր մեղքերը՝ ժանտ, բազմապիսի, Դէպի դատական պատուարն են խուժում՝ բացականչելով. «Նա մեղապարտ է»։ Վհատութիւնը պաշարում է ինձ։ Ոչ ոք ինձ չի սիրում, Եւ եթէ մեռնեմ, լացող չի լինի, Եւ ինչո՞ւ գթան, երբ որ կրծքիս տակ Ինքս իմ հանդէպ չունեմ խղճմտանք։

[Ratcliff enters.]

RATCLIFF.
Տէ՜ր իմ ...

KING RICHARD.
Այդ ո՞վ է այնտեղ։

RATCLIFF.
Տէր իմ, այդ ես եմ։ Գիւղի աքաղաղը Երկու բերան կանուխ ողջոյն տուեց այգին։ Մերոնք ոտքի են. զէնքերն են կապում։

KING RICHARD.
Աւա՜ղ, Ռետկլիֆ, մի ահեղ երազ տեսայ այս գիշեր։ Կարծիքդ ի՞նչ է, յուսալի՞ է զօրքը։

RATCLIFF.
Անկասկած, արքայ։

KING RICHARD.
Ես վախենում եմ, վախենում եմ, Ռետկլիֆ։ Ինձ այնպէս թուաց, որ ոգիները այն բոլոր մարդկանց, Որ յօշոտել եմ, Վրանս եկան, եւ ամէն մէկը Վաղուայ անողորմ վրէժն էր գուժում Ռիչարդիս գլխին։

RATCLIFF.
Ո՛չ, մի՛ վախեցէք ուրուականներից։

KING RICHARD.
Սուրբ Պօղոսը վկայ, այդ ստուերները Աւելի երկիւղ ազդեցին սրտիս, Քան թէ տասը հազար զինավառ զինուոր կարող են ազդել Տխմար Ռիչմոնդի զօրապետութեամբ։ Դեռ չի լուսանում։ Եկ գնանք ինձ հետ։ Ուզում եմ ստուգել, թէ ինչ են խօսում իմ վրաններում. Որեւէ մէկը չի՞ խորհում փախչել։ Ռիչարդ թագաւորը եւ Ռետկլիֆը դուրս են գնում։ Ռիչմոնդի վրանն են մտնում իր իշխանները։

[Meanwhile, on the other side of the stage, the Lords enter and find Richmond awake in his tent.]

LORDS.
Բարի լոյս, Ռիչմոնդ։

RICHMOND.
[Rising from his bed.] Խնդրում եմ ներէք, արթուն իշխաններ, Որ քնած գտաք անազան ծոյլիս։

LORDS.
Ինչպէ՞ս քնեցիք այս գիշեր, միլորդ։

RICHMOND.
Շատ քաղցր քնով։ Այն պահից ի վեր, երբ դուք գնացիք, Ինձ այցելեցին չքնաղ պատկերներ, երազներ լուսէ, Որ երբեւիցէ տեսել է մարդը քնած ժամանակ։ Թուաց, որ բոլոր այն հոգիները, Որոնց մարմինը Ռիչարդն սպանեց, Վրանս եկան եւ ինձ յաղթութիւն բարեմաղթեցին։ Հաւատացէք ինձ, սիրտս ուղղակի զուարթանում է, Երբ ես այդ շքեղ երազն եմ յիշում։ Ո՞ր ժամն է հիմա։

LORDS.
Չորսին մօտ է, տէր։

RICHMOND.
Արդ, ժամ է զինուել եւ դիմել գործի։

[Richmond's speech to his troops.]

RICHMOND [cont.]
Հայրենակիցներ, նախապէս արդէն խօսել եմ ձեզ հետ. Պահը չի ներում աւելին ասել. Յիշեցէք միայն, Աստուածն է մեզ հետ եւ մեր վեհ գործի արդարութիւնը։ Բոլոր սրբերի եւ մորթուածների սուրբ աղօթքները Ամբառնեալ, հուժկու մի պատուարի պէս կանգնած են մեր դէմ։ Ռիչարդից բացի ամէնքն անխտիր, ում դէմ զինուել ենք, Փափագում են մեզ փայլուն յաղթանակ։ Յիրաւի, ո՞վ է առաջնորդում նրանց. Մի արիւնարբու, անարգ բռնապետ եւ մի ոճրագործ, Մի մարդ, որ արեամբ շորթել է գահը Եւ արիւնով է ամրացել այնտեղ. Մի գերսրիկայ, որ ուրիշներին օգտագործել է իր երթի համար Եւ կոտորել է բոլորին հերթով։ Մի կեղծ, շինծու քար, որ Անգլիայի գահին քսուելով՝ Ոսկեզօծուել է։ Մի մարդ, որ յաւէտ թշնամի է Աստծուն. Արդ, եթէ կռուէք Աստծոյ ոխերիմ ախոյեանի դէմ, Աստուածն իր զօրքին պահապան է միշտ։ Եթէ ջանք թափէք վայր տապալելու այդ բռնակալին, Միայն այդ դէպքում խաղաղ կը ննջէք։ Եթէ ձեր երկրի թշնամեաց ջնջէք, Հայրենիքը ձեզ առատ վարձ կը տայ։ Դէպի զէն, ի զէն՝ ձեր կանանց պատուի եւ կեանքի համար, Թող նրանք ուրախ ողջագուրեն ձեզ, երբ մարտից դառնաք։ Դէպի զէն, ի զէն՝ ձեր զաւակների փրկութեան համար։ Ձեր թոռները ձեզ պիտի գուրգուրեն, երբ որ ծերանաք։ Արդ, յանուն Աստծոյ եւ այս վեհ դատի, Պարզէք դրօշներ, մերկացրէք սրեր։ Սառն հողի վրայ թող փռուի մարտում դիակն իմ սառած, Դա է իմ փառքը ի սէր հայրենեաց։ Իսկ եթէ յաղթեմ, իմ յաղթութիւնից Վերջին զինուորը բաժին կը ստանայ։ Զարկէք թմբուկներ, հարէք շեփորներ,

համարձակ, խնդուն, Ձեզ հետ են յաւէտ աստուա՜ծ, սուրբ Գեւորգ, Ռիչմո՜նդ, յաղթութի՜ւն։

[As Richmond's army exits King Richard and Ratcliff enter.]

KING RICHARD.
Պատմիր, ի՞նչ ասաց Նորթեմբերլենդը Ռիչմոնդի մասին։

RATCLIFF.
Ասում է, որ նա մարզուած ռազմիկ չէ։

KING RICHARD.
Այդ ճշմարիտ է։ Սուռին ի՞նչ ասաց։

RATCLIFF.
Ժպտաց եւ ասաց. «Այդ մեզ օգուտ է»։

KING RICHARD.
Ուղիղ է ասել։ Իրօք այդպէս է։

[The Clock strikes the hour.]

KING RICHARD [cont.]
Հաշուիր, քանի՞ զարկ է։ Մի օրացոյց բեր։ Արեւը ծագե՞լ է։

RATCLIFF.
Չեմ տեսել, արքայ։

KING RICHARD.
Զլանում է փայլել. ըստ օրացոյցի՝ Նա մի ժամ առաջ պէտք է ծագած լինէր. Մէկիս օրը սեւ է։ Ռետկլի՜ֆ …

RATCLIFF.
Այստեղ եմ, տէր իմ։

KING RICHARD.
Արեւը այսօր չի ուզում ծագել, խոժոռ երկինքը չոքել է զօրքին։ Կորչի այս ցօղը, որ արցունքի պէս երկիրն է ծածկել։ Արեւը չի փայլում, բայց դա նոյն չափով Վտանգաւոր է Ռիչմոնդի համար, չէ՞ որ ահարկու Այդ նոյն երկինքն է իր վրայ կախուած։

[Norfolk enters.]

NORFOLK.
Արդ, ի զէՆ, ի զէՆ, թշնամին արդէն ռազմադաշտ իջաւ։

KING RICHARD.
Ի զէՆ գունդագունդ. նժոյգս թամբէք. Բանբեր առաքէք, թող լորդ Ստենլին իր զօրքը բերի։ Ես իմ գնդերով հիմա դաշտ կ'երթամ, Հրամայում եմ զօրքն այսպէս վարել ճակատամարտի. Հեծելազօրն ու հետեւակ գունդը Պէտք է առաջին գծի վրայ շարուեն, Իսկ նետաձիգը մէջտեղով գնայ։ Դուք, իշխան Նորֆոլկ եւ Թոմաս Սուռի, Առաջնորդեցէք հետեւակ գունդն ու ձիաւոր զօրքը։ Նրանց հետեւից ես պիտի շարժեմ գլխաւոր զօրքը, Որոնց պաշտպանն է երկու կողմի վրայ Մեր թեւաթռիչք ընտիր այրուձին։ Օգնիր, սուրբ Գեւորգ։ Նորֆոլկ, դու խօսիր։

NORFOLK.
Լաւ հրաման է, ռազմաշունչ արքայ, Իմ վրանի մէջ այս թուղթը գտայ։

[He hands King Richard a scrap of paper.]

KING RICHARD.
[Reads.] «Մի լինիր, Նորֆոլկ, այդքան լիրբ, փքուած, Քո տէր Դիկոնը քանզի գնուած է եւ արդէն ծախուած»։ Թշնամու գործ է։ Իշխաններ, հապա ձեր տեղերն անցէք, Ոգով մի ընկճուէք փուչ տեսիլներից, Խիղճը երկչոտի ապաստարանն է, Որ հնարուած է քաջարի ոգին սանձահարելու։ Մեր խիղճը դա մեր հուժկու բազուկն է, իսկ մեր օրէնքը՝ Անողորմ սուրը։ Յառա՛ջ, գունդագունդ, յառա՛ջ քաջասիրտ, Դրախտ կամ դժոխք երթանք միասին։

[Richard's speech to his army.]

KING RICHARD [cont.]
Արդէն ասացի, աւելին ի՞նչ ասեմ. Յիշեցէք, թէ դուք ո՞ւմ հետ գործ ունէք. Անարգ, վատատոհմ շրջմոլիկների մի ամբոխի հետ, Բրետոնների աղտեղութեան հետ, մի գեղջուկ տականք. Որ դուրս է փսխում բնակչութեամբ կուշտ նրանց երկիրը՝ Մղելով անյոյս ասպատակութեանց եւ ստոյգ մահուան։ Դուք քնած էիք անփոյթ, անվրդով. Նրանք բերում են ձեզ ահեղ տագնապ. Դուք հող ունէիք եւ սիրուն կանայք՝ ձեզ երջանկացնող, Նրանք ուզում են զաւթել թէ՛ մէկը եւ թէ՛ միւսը։ Եւ ո՞վ է նրանց առաջնորդում այստեղ. Մի խառնակեցիկ ապիրատ լակոտ, Որ մայրս է սնել պանդխտութեան մէջ երկար ժամանակ։ Մի երկչոտ մանուկ, որ իր ողջ կեանքում Ո՛չ ցուրտ է տեսել եւ ո՛չ էլ կարիք։ Արդ, ծովը քշենք այդ վտարանդի ասպատակներին, Ջնջենք մեծաբան այդ ֆրանսիական ցնցոտիներին, Կեանքից յուսահատ, սովալլուկ, թշուառ մուրացիկներին, Այդ առնէտներին, որ երազելով շահատակութեան՝ Կարօտութիւնից կարող են սատկել։ Թէ պիտի յաղթուենք, լաւ է՝ մեզ յաղթեն քաջասիրտ այրեր Եւ ոչ թէ այս բիճ բրետոնները, որոնց տրորել, Ջարկել, ջարդել են մեր քաջ հայրերը իրենց երկրի մէջ Եւ այդ ամօթը իբրեւ յիշատակ կտակել որդոց։ Եւ նրա՞նք պիտի մեր հողը տիրէն, մեր կանանց գրկեն Ու բռնաբարեն մեր աղջիկներին։

[Distant drumming.]

KING RICHARD [cont.]
Նրանց թմբուկը արդէն թնդում է. Ի մարտ, Անգլիոյ իշխանազուններ, ի մարտ, իմ քաջեր։ Աղեղնաւորնե՛ր, թշնամու սիրտը շանթեցէ՛ք նետով. Խթանէ՛ք խրոխտ ձեր նժոյգները եւ աշտանակէ՛ք արեան հեղեղում։ Թող եթերն ապշի ձեր նիզակների շաչ ու շառաչից։

[A Messenger enters.]

KING RICHARD [cont.]
Ի՞նչ ասաց Ստենլին. զօրքը բերո՞ւմ է։

MESSENGER.
Մերժեց գալ, արքայ։

KING RICHARD.
Գլխատե՛լ որդուն։

NORFOLK.
Արքայ, թշնամին ճախնուտը անցաւ, Ճակատամարտից յետոյ գլխատենք։

KING RICHARD.
Կրծքիս մէջ հազար սիրտ է բաբախում. Դրօշնե՛ր, յառա՛ջ դէպի թշնամին։ Ով դու սուրբ Գեւորգ, մեր հնամենի ահեղ մարտակոչ. Մեզ վիշապների ցասմամբ բորբոքիր։ Օ՜, դէպի ոսոխ։ Մերն է յաղթանակ. Նա բազմած է մեր սաղաւարտներին։

[All exit.]

][][

ACT V. SCENE IV.

Another part of the field. The armies make a huge ruckus as they fight. Norfolk enters with Catesby following.]

CATESBY.

Փրկեցէք, տէր իմ, օգնութեան հասէք, Արքան գործում է աւելի հրաշքներ ճակատամարտում, խելագարի պէս նետւում է բոլոր վտանգների մէջ. Նրա ձին սպանուեց, նա ամբողջապէս հետիոտ է կռւում։ Ռիչմոնդին է փնտրում մահուան կոկորդում։ Օգնեցէք, տէր իմ, թէ ոչ՝ պարտուած ենք։

[The battle grows even louder. King Richard enters.]

KING RICHARD.

Ինձ մի ձի՛ տուէք, թագաւորութիւնս մի ձիու կը տամ։

CATESBY.

Փրկեցէ՛ք, տէր իմ, ես ձի կը ճարեմ։

KING RICHARD.

Ստրուկ, ես կեանքս խաղի եմ յանձնել եւ պիտի խաղամ մինչեւ վերջին շունչ։ Վեցական Ռիչմոնդ կար ռազմադաշտի մէջ, Հինգին սպանեցի, իսկ նա խոյս տուեց։ Ձի՛, մի ձի՛ տուէք, թագաւորութիւնս մի ձիու կը տամ։

[Exits.]

][][

ACT V. SCENE V.

Another part of the field. King Richard and Richmond enter. They fight and Richard is slain. Derby enters, bearing the crown with Lords following.

RICHMOND.

Փառք բարերարին եւ ձեր զէնքին, քաջեր, Օրը աւարտուեց մեր յաղթանակով, ժանտ շունը սատկեց։

DERBY.

Անվեհեր Ռիչմոնդ, պարտքդ քաջաբար դու հատուցեցիր։ Ահա արքունի յափշտակուած թագը. Ես այն կորզեցի այս արնաշաղախ իրէշի քունքից, Որ քո ճակատը նրանով զուգեմ։ Կրի՛ր, վայելի՛ր՝ փառս հայրենեաց։

RICHMOND.

Թող «Ամէն» գոչէ Աստուածն երկնքում։ Բայց ասա, ո՞ղջ է քո Գեւորգ որդին։

DERBY.

Ողջ է, տէր արքայ։ Նա Լեյստերումն է, Պատրաստ ենք մեկնել, եթէ կամենաք։

RICHMOND.

Յայտնի քաջերից ո՞վ ընկաւ մարտում, երկու կողմերից։

DERBY.

Դուքս Ջոն Նորֆոլկը, Վալտեր Ֆեռեսը, Ռոբերտ Բրակենբերին եւ Վիլեամ Բրենդոն։

RICHMOND.

Թաղեցէք, ինչպէս վայել է իրենց բարձր ծնունդին, Ներում հռչակէք փախած զօրքերին, Որ կամին խոնարհ ետ դառնալ մեզ մօտ։ Հէնց որ հաղորդման մեր ծէսն աւարտուի, Մենք Սպիտակ վարդը կը միաւորենք Կարմիր վարդի հետ. Թող խնդայ երկինքն այդ վառ դաշինքից, Որ շատ էր թխպած նրանց գժտութեամբ։ Ո՞ր ազգադաւը «Ամէն» չի ասի խօսքս լսելիս։ Անգլիան խենթ էր երկար ժամանակ. Նա յօշոտում էր, բզկտում իրեն։ Եղբայրը եղբօր արիւնն էր ոթում անմի՛տ, կուրօրէ՛ն, Հայրը ժպրհութեամբ սպանում էր որդուն, Որդին, նեղն ընկած, իր հօրն էր մորթում։ Եւ թշնամացան Լանկաստեր ու Եորք, Իրար դէմ ելան իշխաններ ու զօրք։ Այժմ Ռիչմոնդն ու Եղիսաբէթը՝ ժառանգներն երկու արքայական տան, Թող ի կարգ Աստծոյ յաւէտ միանան, Եւ նրանց զարմը, - թէ Աստուած կամեց՝ որդիք ունեցան, - Թող խաղաղութիւն սփռէ գալիքում, Որ մարդիկ ուրախ ապրեն աշխարհում։ Ո՛վ Աստուած, փշրի՛ր սուրն ազգադաւի, Որ այս արիւնոտ օրերը նորից չվերադառնան, Անգլիան չողբայ արեան յորձանքում։ Դու բնաջնջիր այն մարդու տունը, Որ կ'ուզէ խնցել այս չքնաղ երկրի խաղաղութիւնը։ Խոր վէրքը փակուեց, անդորր է դարձել, «Ամէ՛ն» բարբառի մեր տէրը բարձրեալ։

[FINI]

TRANSLATION BY LILIT "BABA" YAGIAN (1978)